ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(78-րդ տարի) Թիվ-4 (1686) Ապրիլ 2024

Ապրիլ 2024

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Դատապարտել և կանխել շարունակվող ցեղասպանությունը (էջ 1-3)

2- Հայ դատ

Մարի Հովհաննիսյան
Համիդյան վարչախումբը՝ ցեղասպանության ժխտման հիմնական թեզերի հիմնադիր (էջ 4-8)

Մելինե Անումյան
Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների այժմեականությունը (էջ 9-11)

Տաթևիկ Աղաջանյան
Ոչնչացումից մինչև յուրացում. Արցախի անպաշտպան մշակութային ժառանգությունը (էջ 12-15)

3- Գաղափարական

Անի Մելքոնյան
Թուրքական առասպելական հայրենիքի գաղափարն ու հայոց իրական հայրենիքը հայությունից օտարելու փաշինյանական «ուսմունքը» (էջ 16-19)

4- Պատմության լուսարձակ

Արմեն Կարապետյան
Քրդերին հայոց բնաջնջմանը մասնակից դարձնելու համիդյան և երիտթուրքական քաղաքականությունը (էջ 20-23)

5- Դեմքեր և դեպքեր

Գոհար Խանումյան
Ահարոն Սաչակյան (1879-1964). «Նեմեսիս» գործողության նորահայտ մասնակիցը (էջ 24-26)

Հասմիկ Գրիգորյան
Թե լույսը մարի, լապտերն իր պատմություններով կլուսավորի (էջ 27-28)

6- Հայ կյանք

Մովսէս Ծիրանի
Ցեղասպանութեան գեղարուեստական արձագանգները սփիւռքահայ կերպարվեստում (էջ 29-32)

7- Ընթերցումներ

Հայոց ցեղասպանության թեման 1915 թ. մամուլում (էջ 33-38)

8- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Ինչպես վարվել անցյալի և հիշողությունների հետ (էջ 39-42)

9- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Յոբելեաններէն անդինը (էջ 43-44)

Դատապարտել և կանխել շարունակվող ցեղասպանությունը

Հայաստանի անկախ պետականության վերականգնումը հնարավորություն ընձեռեց ցեղասպանության ճանաչման, վերջինիս հետևանքների վերացման և, ավելի ընդգրկուն մասշտաբով, հայ դատի խնդիրները պետական մակարդակով միջազգային հարթակներում հետապնդելու: Անշուշտ, այս կենսական հարցերի նկատմամբ հասարակական պահանջը բացահայտ կամ ոչ հրապարակային կերպով գոյություն էր ունեցել անկախության հռչակմանը նախորդող տասնամյակների ընթացքում: Արցախը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի հետ վերամիավորելու 1988 թ. սկսված շարժման ճնշմամբ դեռևս Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդը 1988 թ. նոյեմբերի 22-ին օրենք ընդունեց, որում մասնավորապես արձանագրված է. «Դատապարտելով 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն՝ ապրիլի 24-ը հայտարարել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»: Նույն Գերագույն խորհուրդը 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունած Հայաստանի անկախության մասին հռչակագրում ամրագրեց. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»: Հայաստանի ազգային ուժերը ժողովրդի, մշակութային ու մտավորական շրջանակների համախոհությամբ առաջ քաշեցին Սփյուռքում տասնամյակներով շարունակվող ցեղասպանության միջազգային ճանաչման համառ պայքարին պետականորեն միանալու գաղափարը. անժամանցելի ոճրի ճանաչման և դատապարտման պահանջը դնելով նաև Թուրքիայի առջև: Ցավոք, Հայաստանի առաջին իշխանության տեսակետը հակոտնյա էր այս դիրքորոշմանը, և նրա իշխանության գալուց հետո ականատես եղանք հարցի հետապնդման գործընթացը կասեցնելու, առհասարակ, այս թեմայի արծարծման դեմ հանդես գալու երևույթին: Ավելին, նրա իշխանության գալով կազմակերպվեց նաև պատմական անցյալի վերաքննությունն ու դատապարտումը: Իշխանությունների հովանավորությամբ շրջանառության մեջ դրվեցին ցեղասպանության համար հայ ազգային կուսակցությունների հասցեին հնչող մեղադրանքներ այն բանի համար, որ վերջիններս կազմակերպել էին ազատագրական պայքար կամ կամավորական շարժում: Արցախյան դիմակայության ճակատագրական օրերին սկսված այս տեսական-քաղաքական գրոհը խորքում ուղղված էր նաև Արցախյան շարժման գաղափարական հիմքերի խարխլմանը, ինչը ավելի պարզորոշ պետք է դառնար քիչ ավելի ուշ, երբ հրապարակ էին նետվելու երկրի ղեկավարի քաղաքական հայեցակարգերը՝ ամեն գնով խաղաղության հասնելու, խաղաղության այլընտրանքը անխուսափելի պատերազմը համարելու վերաբերյալ:

Ընթերցողին հիշեցնելով այս իրողությունների մասին՝ մեր նպատակն է զուգահեռ տանել նորանկախ Հայաստանի առաջին իշխանության, նրանց մտուրում

քաղաքականապես ձևավորված այսօրվա ղեկավարի և նույն մտածողությամբ սնուցված կառավարող թիմի միջև: Արցախը հանձնած, Հայաստանը քաղաքական պարտության ու տարածքային կորուստների տանող իշխանությունը 2024 թ. ապրիլի 24-ի նախօրյակին տարբեր հայտարարություններով կասկածի է ենթարկում Հայոց ցեղասպանության միջազգայնորեն ճանաչված փաստը: Այս պետականակործան գործընթացի առաջնորդը ցեղասպանության իրավաքաղաքական գնահատականի փոխարեն՝ գործածում է «Մեծ եղեռն» քաղաքական գնահատական և իրավական հետևանք չպարունակող եզրը: Ըստ էության, Հայաստանի իշխանությունը որդեգրել է ցեղասպանության ժխտման թուրքական դիրքորոշումը և անդրադառնալով կառավարման տարիների նրանց ողջ գործունեությանը՝ ակնառու է դառնում, որ այն, ինչ այսօր տեղի է ունենում, ոչ պատահականություն է և ոչ էլ քաղաքական գծի փոփոխություն, այլ նախապես ծրագրված կուրսի հետևողական շարունակում:

Եվ սա այն պայմաններում, երբ ադրբեջանաթուրքական տանդեմը հենց այս իշխանության օրոք իրականացրեց Արցախի ցեղասպանությունն ու օկուպացումը ու նույն այս օրերին բացահայտորեն վերացնում է Արցախի պատմական ու մշակութային դեմքը: Մենք տեսնում ենք, որ ցեղասպանության շարունակվող ոճրագործության մասին աշխարհով մեկ ձայն բարձրացնելու փոխարեն՝ այս իշխանությունը, ճնշում գործադրելով, պարտադրում է, որ Հայաստանում հաստատված Արցախի իշխանության մարմինները բողոքի ձայն չբարձրացնեն տեղի ունեցողի և, առհասարակ, իրենց տարածքային, քաղաքական իրավունքների վերաբերյալ: Հիշենք նաև, որ 2020 թվականին Թուրքիայի օժանդակությամբ իրականացված ցեղասպանական պատերազմից ընդամենը օրեր անց Հայաստանի իշխանավորներն, իրարից առաջ ընկնելով, խոսում էին Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավելու և առևտուր սկսելու մասին: Իսկ այս ծրագրերի գաղափարական հիմքը ի հայտ եկավ

դեռևս 2019 թվականին, երբ օրակարգ իջեցվեց հայագիտական առարկաների կրճատման և կրթական չափորոշիչների փոփոխության նախաձեռնությունը: Ակնհայտ է, որ Արցախից մինչև Հայաստանի տարածքների հանձնում հայոց պատմագաղափարական հիմքերի խարխլումը հետապնդում է մի քանի հիմնական նպատակ: Նախ իրականացվում է Արևմուտքի ծրագիրը տարածաշրջանում ռուսական լծակների վերացման և վերջինիս Անդրկովկասից դուրս մղման ուղղությամբ: Հենց այս նպատակը մատուցելով Արևմուտքին որպես գերխնդիր՝ Ադրբեջանն ու Թուրքիան չեզոքացնում են հայության գործոնը տարածաշրջանում՝ հարվածելով նրա ինքնության և պետականության հիմքերին: Նույն պատճառով Արևմուտքը ոչ միայն պահանջում ու պարտադրում էր հայկական երկու պետությունների պետական ներկայացուցիչներից դատարկելու Արցախը, այլև այսօր ԱՄՆ պետքարտուղարության, Եվրամիության մակարդակով ողջունում է Հայաստանի տարածքների հանձնումը Ադրբեջանին: «Խաղաղության խաչմերուկի» և հաշտության կեղծ կարգախոսների ներքո խրախուսվում է նաև ցեղասպանության պահանջից հրաժարման և, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքը փաստացի թուրք-ադրբեջանցիներին հանձնելու ծրագիրը: Ըստ էության, իրականացվում է այն ծրագիրը, որի մասին անցած դարի 90-ականներին հայտարարեց Պոլ Գոբլը, և ամերիկյան ճնշմամբ փորձ էր արվում գլուխ բերել հայ-թուրքական հաշտության գործընթացի միջոցով: Վերջապես դեպի ուր ուղղորդում էր ԱՄՆ նախագահի անվտանգության գծով խորհրդական Ջոն Բոլթոնը 2019 թվականին Հայաստան այցելության ժամանակ, սույն թվականի ապրիլի 5-ին բրյուսելյան հանդիպման ժամանակ կրկնեց ԱՄՆ պետքարտուղար Բլինկենը՝ մասնավորապես ասելով, թե պետք է գնալ տարածաշրջանային ինտեգրման: Այլ խոսքով՝ Հայաստանը պետք է ինտեգրվի Ադրբեջանի և Թուր-

քիայի հետ: Գուցե ոմանց համար Հայաստանի վերջնական կապիտուլյացիան և դավաճանների կողմից սիրահոժար հանձնումը ցեղասպան հարևաններին հենց ընկալվում է որպես «ինտեգրում»: Վերադառնալով ցեղասպանության հետապնդման հարցին՝ վերջին տարիների իրադարձությունների փաստական հիմքի վրա կատարենք երկու արձանագրում: Տասնամյակներ շարունակ հայ ազգային ուժերը, հատկապես Սփյուռքում, հայտարարում էին, որ ժամանակակից Թուրքիան գաղափարական և քաղաքական ժառանգորդն է իր ցեղասպան նախնիների: Որպեսզի Թուրքիան հրաժարվի Հայաստանի նկատմամբ իր զավթողական ծրագրերից և հայ ժողովրդի հանդեպ որդեգրած ցեղասպանական քաղաքականությունից, անհրաժեշտ է, որ այս երկիրը ճանաչի Հայոց ցեղասպանությունը և դատապարտի այն: Այս ամենը կարող է ճանապարհ հարթել ցեղասպանական ռազմավարությունից հրաժարվելու արմատական գաղափարական վերափոխման համար, ինչը տեղի ունեցավ հետֆաշիստական Գերմանիայում: Դժբախտաբար, դավաճաններն ու տգետները այս պահանջը ներկայացրին որպես հայ ազգայնական ուժերի զգացմունքային, կարծրացած և ինքնանպատակ մոտեցում: Ադրբեջանն ու Թուրքիան 2020 թ. պատերազմում և դրան հետևած ժամանակահատվածում իրենց ծրագրերով և դրանց գործադրման եղանակներով փաստել ու փաստում են, որ մնում են ցեղասպան նախորդների հարազատ ժառանգները: Նիկոլ Փաշինյանը իր քաղաքական դաստիարակների պես մտածում է, թե ադրբեջանաթուրքական տանդեմի բոլոր պահանջները կատարելու դեպքում Արևմուտքի հովանավորությամբ ինքը հնարավորություն կունենա հանգիստ վեր ընկնելու իր աթոռին և վայելելու երկարատև խաղաղությունը: Բայց նա նույն թյուրիմացության մեջ է, ինչի կամավոր պատանդներն էին իր գաղափարական հայրերը, ինչպես և անցած դարասկզբի մոլորյալները, որոնք աչք փակելով ակնառու փաստերի վրա՝ կարծում էին, թե հայ ժողովրդի ըմբոստացումն է բարկացնում թուրքերին և մղում նրանց ջարդերի: Այնինչ, հալածանքը, տեղահանությունը և դրանց հաջորդած ջարդերն ու ցեղասպանությունը սկսվել էին շատ ավելի վաղ և պայմանավորված չէին հայության գործողություններով, այլ հետևանք էին երկրի թուրքացման գործընթացը այլազգիների բնաջնջմամբ իրականացնելու՝ դեռևս 19-րդ դարում որդեգրված քաղաքականության: Պատմական փաստերը ապացուցում են, որ երիտթուրքերին փոխարինած և ձևականորեն նրանց դատապարտած Մուստաֆա Քեմալը 1920 թվականին ձգտում էր իրականացնել նաև

արևելահայության ոչնչացումը, և միայն աշխարհաքաղաքական իրողությունների փոփոխությունը անհնարին դարձրեց այդ ծրագրի իրականացումը: Ռազմավարական տարածքների հանձնմամբ, թուրքական սահմանի պահպանության գոտուց ռուսական զորքի դուրսբերմամբ Նիկոլ Փաշինյանը կստեղծի «ամենաբարենպաստ» պայմանները թուրքական դարավոր երազանքի իրականացման համար: Սեփական ժողովրդի և պատմության անառակ զավակները պետք է հիշեն, որ մեկ դար առաջ հայությունը փրկվեց այնտեղ, որտեղ հնարավոր եղավ պաշտպանություն կազմակերպել: Հիշեն, որ իրենց հանցագործ իշխանությանը նախորդող մոտ 25 տարի ձգված գլխավորաբար խաղաղ ժամանակահատվածը հնարավոր է եղել ապահովել ուժի ցուցադրմամբ, և իրենց կապիտուլյանտական իշխանությունից առաջ մենք չենք պարտվել նախորդող ոչ մի պատերազմում:

Այսպիսով՝ Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և կորուստների հատուցման խնդիրը հայ ժողովրդի խաղաղ և կայուն ապագայի ապահովման հիմնական երաշխիքն է: Ցեղասպանության ոճրագործության համար համազգային պայքարը պետք է ներառի նաև Արցախի ու արցախահայության իրավունքների համար պայքարը: Օտարի կամակատար իշխանության գոյությունը ներկա օրերում ստեղծել ու ստեղծում է հայ ժողովրդի արյունոտ ու անարյուն ցեղասպանության համար ամենանպաստավոր պայմաններ:

Համիդյան վարչախումբը՝ ցեղասպանության ժխտման հիմնական թեզերի հիմնադիր

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս

Ցեղասպանությունների ուսումնասիրությունն անցյալի դեպքերի պոստֆակտում ներկայացումը, վերլուծումն ու գնահատումը չէ միայն, այն ունի մեկ այլ՝ իմ կարծիքով, առավել հրատապ, ապագայում ցեղասպանությունները կանխելու առաքելություն: Անցյալում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը պետք է ունենա ներկան՝ ավելի բարեկեցիկ և խաղաղ, իսկ ապագան ավելի կայուն ու ապահով դարձնելու նպատակ: Այս իմաստով ցեղասպանությունների ուրացման ակունքների, դրանց քաղաքական, սոցիալական, հոգեբանական, մշակութային դրսևորումների, կիրառման մեթոդների ու ժամանակի մարտահրավերներին զուգընթաց ձևափոխումների համակողմանի ուսումնասիրությունները թույլ կտան վեր հանել այս երևույթի դեռևս անհայտ մանրամասներ, որոնք կարող են ծառայել որպես «արդյունավետ գործիքներ» հարցերը «սպանել և ուրանալ» բանաձևով կարգավորել ցանկացող հնարավոր ոճրագործների դեմ պայքարելու գործում:

Ցեղասպանությունների ժխտման դեմ պայքարը ունի ոչ միայն բարոյական, քաղաքական, իրավական, պատմական արդարության վերականգնման առաքելություն, այլև նախևառաջ միտված է կանխարգելելու մարդկության դեմ ծրագրվող հանցագործությունները, քանզի ժխտումը մշտապես եղել է ցեղասպանություններ մշակող և իրագործող հանցախմբի ծրագրերի առանցքային բաղադրիչներից: Ասել է թե՝ ցեղասպանություն նախապատրաստող ոճրագործները նախապես մտածում և ծրագրում են նաև կատարվելիք հանցագործությունների ժխտումը, որն էլ կապահովի իրենց անպատժելիությունը:

Ուստի ցեղասպանությունների ժխտման ակունքների, մեխանիզմների, դրանց դրսևորումների համապարփակ և բազմակողմանի ուսումնասիրությունն ու տակավին անհայտ մանրամասների վերհանումը հնարավորություն կընձեռեն առավել համակարգված և թիրախային հակազդել ժխտողական քաղաքականություն որդեգրած կամ ինչ-ինչ պատճառներով դրանում ակտիվորեն ներգրավված անձանց պնդումներին և ձեռնարկած միջոցառումներին՝ դրանով նպաստելով մարդկության դեմ իրագործված հանցագործությունների առավել լայն ճանաչմանն ու հետագայում դրանց հնարավոր կրկնության կանխարգելմանը:

Այս իմաստով թուրքական ժխտողական քաղաքականությունն իր շարունակականությամբ և տարածվածությամբ ժամանակի ընթացքում դարձել է անպատժելիության խորհրդանիշ և օրինակ այլոց համար: Այսպես, օրինակ, ցեղասպանագետ Հելեն Ֆայնի համոզմամբ. «Հայոց ցեղասպանությունը միայն նախադեպ չէր, թե ինչ կարելի է անել Երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Այն նաև օրինակ էր, թե ինչ կարելի էր անել անպատժելիությամբ»[1]: Վերոհիշյալի վառ օրինակ է նաև Ադոլֆ Հիտլերի հռետորական հայտնի հարցը՝ ուղղված իր սպայակազմին. «Ո՞վ է այսքանից հետո հիշում հայերի բնաջնջման մասին»[2]:

Հայոց ցեղասպանության ժխտումը իր ձևով ու բազմաշերտությամբ հաճախ օրինակ է ծառայել հաջորդող այլ ցեղասպանությունների ժխտողական քաղաքականության մշակման և իրականացման համար: Ինչպես նշում է սոցիոլոգիայի պրոֆեսոր Սթենլի Կոհենը, անցյալի ոճրագործությունների փաստը թաքցնելու ամենաակնառու փորձը թուրքական կառավարության փորձն է. «Այս իրադարձություններն արձանագրված են ինչպես օսմանյան աղբյուրներում, այնպես էլ ժամանակի դիվանագիտական զեկույցներում, վերապրողների վկայություններում և ավելի ուշ՝ պատմագիտական հետազոտություններում: Ճշմար-

տությունները, որոնք ակնհայտ էին ժամանակին և միջազգային հանրության ուշադրության կենտրոնում էին, փոխակերպվել են ենթադրությունների, ասեկոսեների և անորոշության: Նախապես առկա ժխտումները մաս կազմեցին Թուրքիայի հավաքական մշակույթին, իսկ հետո աստիճանաբար ավելի գերակշիռ դարձան դրսում»[3]:

Հայոց ցեղասպանության ժխտումը մշտապես եղել է թուրքական իշխանությունների ներքին և արտաքին քաղաքականության բաղկացուցիչը: Թուրքական կառավարությունները բոլոր ժամանակներում, որպես ներքին խնդիրների լուծման ամենաարդյունավետ միջոց, ապավինել են բռնությունների կիրառմանը, որն իր հերթին հավելյալ մտահոգությունների տեղիք է տվել: Նախ՝ առկա է եղել բռնության ենթարկվողների կողմից հնարավոր դիմադրության, ինքնապաշտպանության կամ բռնաճնշումներից ազատագրվելու համար պայքարի դիմելու հավանականությունը: Մյուս կողմից՝ մշտապես եղել է արտաքին աշխարհի կողմից հնարավոր միջամտության կամ երկրում բարեփոխումների անցկացման պարտադրանքի կիրառման վախը: Ժամանակ առ ժամանակ եղել է նաև արտաքին ճնշումների ներքո տարածքներ կորցնելու երկյուղը: Ժամանակի ընթացքում թուրքական իշխանությունների առջև ծառացած այս «մարտահրավերները» փոխվել են՝ պայմանավորված երկրի ներսում տեղի ունեցող իրադարձություններով, աշխարհաքաղաքական իրողություններով և կառավարությունների որդեգրած քաղաքականություններով: Այս ամենը ենթարկվել է փոփոխության, սակայն տվյալ ժամանակամիջոցում կամ անցյալում տեղի ունեցած իրադարձությունների ժխտումը մշտապես եղել և մնում է թուրքական քաղաքականության հենասյուներից մեկը: Ժամանակին զուգընթաց փոխվել են ժխտողական քաղաքականության կիրառման մեթոդներն ու մեխանիզմները, սակայն հիմնական թեզերը, որպես այդպիսիք, կտրուկ փոփոխությունների չեն ենթարկվել, ավելացել են նորերը, հները վերասահմանվել կամ երանգավորվել են, բայց դրանց բուն էությունը պահպանվել է:

Ինչպես ցույց են տալիս մեր հետազոտությունները, Թուրքիայում ժխտողական քաղաքականությունը սկիզբ է առել դեռևս Աբդուլ Համիդի II-ի (1842-1918) կառավարման ժամանակաշրջանում (1876-1909): Հայոց ցեղասպանությունը, ըստ էության, սկսվել է ոչ թե երիտթուրքերի օրոք, այլ շատ ավելի վաղ՝ Աբդուլ Համիդ 2-րդի գահակալության տարիներին: Բռնության մեթոդները, ոճրագործությունների համակարգված և բծախնդրորեն մշակված բնույթը և առանձնակի դաժանությունները չեն տարբերվել ավելի ուշ իրագործված և իրավական եզրույթով ցեղասպանություն որակված դեպքերից: Ավելին, ցեղասպանության ուրացման ակունքները պետք է փնտրել հենց այս ժամանակաշրջանում: Հիմնական թեզերը, որոնք

սկզբնավորվել և լայնորեն կիրառվել են այդ ժամանակաշրջանում, հետագայում կրկնօրինակվել են, վերամշակվել, կատարելագործվել և համապատասխանեցվել հաջորդող ժամանակաշրջանի պայմաններին: Հետագայում փոփոխվել են ձևակերպումները, սահմանումները, արտահայտչամիջոցները, հռետորաբանության պաթոսը, բայց բովանդակությունը հիմնականում պահպանվել է: Ժխտողական թեզերից մեկը մշտապես եղել է բռնությունների, կոտորածների և զանգվածային սպանությունների մեջ զոհերին մեղադրելը: Հարկ է նշել, որ շատ հաճախ ժխտողական թեզերը միահյուսվել են: Այսպես, օրինակ, Աբդուլ Համիդ 2-րդի կողմից Գյումուշհանե, Էրզրում (*Կարին*), Բիթլիս (*Բաղեշ*) և Վան նահանգներում հայերի կոտորածները հետաքննող հանձնաժողովի նախագահ նշանակված Սաղեդդին փաշան հայերին ուղղված իր ուղերձում ասում է հետևյալը. «Դուք սխալ ուղով եք գնում՝ ձեզ սպասող մահվան վտանգով: Ես՝ որպես Օսմանյան պետության ներկայացուցիչ եմ տեղեկացնում: Հրաժարվեք, մի՛ շեղվեք այն ուղուց, որին հետևել եք վերջին չորս դարերի ընթացքում. հրաժեշտ մի՛ տվեք հավատարմությանը: Դուք կզղջաք դրա համար: Եվ փաստից հետո զղջումներն անօգուտ են: Այն, ինչ դուք ցանկանում եք և հույս ունեք [ստանալ], [հաջողության] [ամենաչնչին] հնարավորություն չունի, որովհետև այն չի համապա-

տասխանում եվրոպական քաղաքական հավասարակշռությանը: Նրանց մեծամասնությունը, որի հետ դուք նույն ռասայից եք, մեր երկրում չէ, այլ բնակվում է Իրանում կամ Ռուսաստանում: Այս [փաստը] հաշվի առեք: Մի՛ ներքաշվեք հապճեպ գործողությունների մեջ: Եթե դուք այդպես անեք, մենակ կմնաք քրդերի հետ: [Եվ] մի՛ մոռացեք, որ այս [Վան] նահանգում յուրաքանչյուր հայի հաշվով կա երեք քուրդ, և [մինչ] նրանք մարտիկներ են, հայերը վախկոտներ են ի ծնե: Ավելին՝ կարելի է գուշակել, թե հայերի՝ զենքի տիրապետելու բացակայությունը ինչին կտանի: Ես կարծում եմ, որ դուք կարող եք իմաստությամբ ըմբռնել սա, ինչը ձեզ ստիպեց այս ահավոր դեպքերը առաջ բերել»[4]:

Սադեդդին փաշայի այս ուղերձում առկա են թուրքական ժխտողականության միանգամից երկու թեզեր, որոնք ուղեկցվում են ակներև սպառնալիքով: Նախ կոչ է անում հնազանդ մնալ և հետևել չորսհարյուրամյա ավանդույթին ու չհավակնել այնպիսի բաների, որոնք կարող են խարխլել դարավոր քաղաքական, սոցիալական իրողությունը: Եվ ապա նշում, որ հայերի անխոհեմությունն է *«ահավոր դեպքերի»* պատճառ դարձել: Մյուս կողմից՝ հստակ սպառնալիք կա, որ անհնազանդության դրսևորման պարագայում քրդերը հաշվեհարդար կտեսնեն, քանզի թե՛ բնույթով, թե՛ թվաքանակով ակնհայտ առավելություն ունեն հայերի նկատմամբ: Ուշադրության է արժանի հատկապես այն փաստը, որ թուրք պաշտոնյան հնարավոր (կամ թերևս արդեն իսկ ծրագրված) մոտալուտ կոտորածների պատասխանատվությունը գցում է քրդերի վրա: Ակներև է այն թեզը, թե հայերը բռնության չեն ենթարկվել, այլ տեղի ունեցած բռնությունները, զանգվածային սպանությունները եղել են ոչ թե քաղաքական վերնախավի կողմից նախապես մշակված և իրագործված հանցագործություններ, այլ ազգամիջյան, էթնիկ բախումներ, որոնց պատասխանատվությունն ընկնում է դրանց մեջ ներգրավված էթնիկ խմբերի վրա, ավելին՝ նրանց անհանդուրժողականությունը վտանգել է նաև պետության անվտանգությունն ու ներքին կայունությունը:

Կայսրության ներսում տեղի ունեցող բռնությունների մասին լուրը տարածվել էր նաև երկրի սահմաններից դուրս: Սակայն եթե թուրք պաշտոնյաները հայերին լռեցնելու համար վախեցնում և ահաբեկում էին խաղաղ բնակչությանը, ուղղակի կամ անուղղակի ձևով սպառնում, որ անհնազանդության դեպքում կկիրառվեն նոր բռնություններ, ապա օտարների համար անհրաժեշտ էր խեղաթյուրել իրականությունը, ժխտել տեղի ունեցածը, ուրանալ հանցանքը:

Ժխտման այսպիսի մի օրինակ բացահայտվում է 2011 թ. Իտալիայի արտաքին գործերի նախարարությունից Հայաստանի ազգային արխիվին փոխանցված օտարալեզու և դեռևս ամբողջովին չուսումնասիրված փաստաթղթերի փաթեթն ընթերցելիս: Հայաստանի ազգային արխիվում պահվող գրությունների այս փաթեթում հանդիպում է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարին ուղղված թիվ 114 նամակը[5], որում բրիտանացի դիվանագետ Ֆրենսիս Քլեր Ֆորդը, որը 1893 թվականից դիվանագիտական ծառայության էր անցել Հռոմում, Բրիտանիայի ար-

տաքին գործերի նախարար Ջոն Վոդհաուս Քիմբերլիին ուղղված իր 1984 թվականի դեկտեմբերի 7-ի գաղտնի մակնշված նամակում նշում է, որ ըստ Բարձր դռան՝ տերություններին առաջարկվող հանձնաժողովը պետք է հետաքննի ոչ թե հայերի դեմ իրագործված բռնությունները, այլ հայերից կազմված ավազակախմբերի գործողությունները:

Ժխտողական քաղաքականության ամենախորամանկ ձևերից մեկն էլ կատարված բռնությունների վերաբերյալ հետաքննություն իրականացնելն ու մեղավորներին փնտրելն է: Առաջին հայացքից անմեղ և արդար թվացող այս նախաձեռնությունն իրականում ունի շատ ավելի խորքային և ապակողմնորոշող նպատակներ: Հայտնի բռնությունների վերաբերյալ հետաքննություն իրականացնելու նպատակով միացյալ հանձնաժողով կազմելով ու դրանում գերտերությունների ներկայացուցիչներին ներգրավելով՝ թուրքական իշխանությունները փաստորեն փորձում են շեղել օտարների ուշադրությունը: Անկասկած, տերությունների ներկայացուցիչներին ներգրավելով և հանձնաժողովի ղեկավարի պաշտոնին թուրք իշխանավորի նշանակելով՝ սուլթանը նպատակ է հետապնդել հետաքննությունն իրենց համար նախընտրելի վայրերում և նպատակահարմար ձևով իրականացնել: Հայաստանի ազգային արխիվում պահվող երկու բարձրաստիճան դիվանագետների նամակագրությունը այդպիսի մի նախաձեռնության բացահայտում է:

Իտալիայի արտաքին գործերի նախարարությունից Հայաստանի ազգային արխիվին հանձնված փաստաթղթերի մեջ գտնում ենք մի շատ ուշագրավ և ծավալուն գրությունների փաթեթ, ուր ներկայացված են թուրք և ամերիկացի քաղաքական գործիչների նամակագրությունն ու հեռագրերը: Ժխտողական քաղաքականության տարածման և այլոց իրենց ժխտման մեջ ներգրավելու առաջին քայլերը արվել են Աբդուլ Համիդ 2-րդի ժամանակաշրջանում: Փաստաթղթերի փաթեթն ուղեկցվում է «Հայերի դեմ իրագործված ենթադրյալ բռնություններ» գլխագրով: Փաստաթղթերում առկա են ժխտման միանգամից մի քանի ձևեր և մեթոդներ: Նախ՝ հայերը մեղադրվում են բռնություններ, ապստամբություններ կազմակերպելու մեջ, ապա՝ ոճրագործ խմբերը ներկայացվում են որպես *«իրական»* զոհեր: Ավելին՝ պատասխանատվությունից խուսափելու և *«անաչառ»* հետաքննություն անցկացնելու համար թուրքական իշխանություններն առաջարկում են Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահին՝ որպես չեզոք և անաչառ կողմ, իրենց ներկայացուցչին առաքել *«ենթադրյալ»* բռնությունների իրականացման վայրեր թուրքական հանձնաժողովի հետ հետաքննությանը մասնակցելու նպատակով:

1893-97 թթ. Օսմանյան կայսրությունում Միացյալ Նահագների լիազոր ներկայացուցիչ Ալեքսանդր Թերրելը Պետդեպարտամենտին ուղղված իր նամակում գրում է հետևյալը. «Սասունում թուրքական վայրագությունների մասին ամերիկյան թերթերում [հայտնված] զեկույցները սենսացիոն են և չափազանցված: Սպանությունը եղել է զինված հայերի և թուրք զինվորների միջև տեղի ունեցած հակամարտության ժամանակ: Մեծ վեզիրն ասում է, որ անհրաժեշտ էր ճնշել ապստամբությունը, և որ մոտավորապես հիսուն թուրք է սպանվել: Կռվից հետո երեք հարյուրից չորս հարյուր հրացան է հավաքվել, և զեկուցվում է, որ այդքան թվով հայեր են սպանվել: Ես հավատում են նրա հայտարարությանը»:

Ավելին, նույն ներկայացուցիչը, չսպասելով Պետդեպարտամենտի պատասխանին, երկու օր անց՝ 1894 թվականի նոյեմբերի 30-ին, մեկ այլ նամակ-հեռագիր է ուղարկում պետդեպարտամենտ, որում ասում է հետևյալը.

«Սուլթանը ցանկանում է, որ նախագահը հավանություն տա, որ ես թուրքական հանձնաժողովի հետ ուղարկեմ Միացյալ Նահանգների հյուպատոսին՝ հետաքննելու հայերի դեմ իրագործված ենթադրյալ վայրագությունները: Ես հավատում եմ, որ Ձեր համաձայնությունը մեծ օգուտ կտա միսիոներ(ներ)ին Փոքր Ասիայում: Նա ցանկանում է, որ չեզոք կողմի նեկայացուցիչ ներկա լինի և ընտրում է Ամերիկայի Միացյալ Նահանգները: Հղում է իր ողջույնները նախագահին: Ես կընտրեմ Ջյուիթին: Սուլթանը խնդրում է, որ պատասխանեք մինչև երկուշաբթի»:

Ի պատասխան այս նամակին՝ դեկտեմբերի 2-ին Պետդեպարտամենտը գրում է. «Գնահատելով սուլթանի վստահությունը՝ նախագահը չի ցանկանում, որ որևէ ամերիկացի ուղարկվի թուրք հանձնաժողովականի հետ՝ հետաքննելու ենթադրյալ վայրագությունները»[6]:

Սուլթանի կողմից նշանակված հանձնաժողովը վստահություն չէր ներշնչում միջազգային հանրութ-

յանը: Դեռևս 1894 թ. դեկտեմբերի 18-ին ամերիկյան «Դեյլի Նյուզ» պարբերականում «Հայկական կոտորածները. կոչ Միացյալ Նահանգներից» հրապարակված լայնածավալ հոդված-կոչի[7] հեղինակները սուլթանական հանձնաժողովը որակում են «ամբողջովին անվստահելի» և նշում, որ տեղի ունեցածը հետաքննելն ու «տառապող ազգի նկատմամբ իրականացված չարագործությունների մասին աշխարհին տեղեկացնելը» դաշնագիրը ստորագրած տերությունների պարտավորությունն է: ԱՄՆ-ի նախագահին ուղղված կոչում հեղինակները հորդորում են ներկայացուցիչներ ուղարկել դեպքի վայր՝ սեփական հետաքննություն իրականացնելու համար կամ միանալ եվրոպական տերություններին:[8]

Տեղի ունեցածը համատեղ հետաքննելը, հանձնաժողով կազմելը նույն քաղաքականությունն է, ինչ որ իրականացվեց նաև 2005 թ.՝ Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի օրերին: Այդ ժամանակ դեռևս Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը նամակով դիմեց Հայաստանի Հանրապետության 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ անկախ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ պաշտոնապես առաջարկելով ստեղծել պատմաբանների համատեղ հանձնաժողով՝ ուսումնասիրելու «1915 թ. իրադարձությունները»[9]: Պատմական հանձնաժողով ստեղծելու գաղափարը ևս ծնունդ է առել 1890-ականներից:

Հարկ է նշել նաև, որ միշտ քաջալերվել է թուրքական ժխտողական քաղաքականության մեջ այլազգի աջակիցների ներգրավումը: Դեռևս աբդուլհամիդյան ժամանակաշրջանից սկսած՝ ուրացման քաղաքականության կարևորագույն սկզբունքներից է եղել օտարազգիների և հատկապես արտասահմանյան մամուլի միջոցով ժխտողական թեզերի տարածումը: Այս է վկայում ամերիկյան «Նյու Յորք Թայմս» թերթի 1894 թ. դեկտեմբերի 14-ի համարում հրապարակված «Հայկական կոտորածների մասին. Վիեննան, Բեռլինը և Բուդապեշտը կասկածում են Անգլիային քաղաքական նպատակի մեջ» վերնագրով հոդվածը, որում, վկայակոչելով լոնդոնյան մամուլը, թղթակիցն ընդգծում է. «Վիեննայի, Բեռլինի, Բուդապեշտի թերթերը կասկածի տակ են դնում հայկական կոտորածների վերաբերյալ այս ողջ պատմությունը և ծաղրում են Լոնդոնում հայկական հասարակության հոչակագիրը՝ որպես ծիծաղելի չափազանցություններ: Նրանք նաև մեղադրում են Անգլիային քաղաքական ծածուկ նպատակների համար հայկական աղաղակ բարձրացնելու մեջ»[10]:

Համեմատելով թուրքական ժխտողական թեզերը՝ ակնհայտ է դառնում, որ դրանք սկիզբ են առնում դեռևս աբդուլհամիդյան կոտորածներից և, ցավոք, կիրառվում նաև մեր օրերում, իսկ դրանց դեմ արդյունավետ պայքարել հնարավոր է միայն պետական մակարդակով համակարգված ձևով, ինչը ոչ միայն պատմական արդարության վերականգնման, այլև հետագայում ցեղասպանությունների կանխարգելման հնարավորություն կընձեռի:

Հղումներ

1. Helen Fein, նշված աշխ., էջ 16:
2. Kevork B. Bardakjian, Hitler and the Armenian Genocide, Massachusetts, USA, the Zoryan Institute,1985, էջ 1:
3. Stanley Cohen, State of Denial.Knowing about Atrocities and Suffering, London, Polity Press, 2001, էջ 134:
4. Fatma M. Göçek, նշված աշխ., էջ 70:
5. Բոլոր նամակները, փաստաթղթերը և այլ գրությունները ընագրերից թարգմանել է հեղինակը՝ Մ. Հովհաննիսյանը:
6. ՀԱԱ, ֆոնդ 450, ց.5, գ. 21, թթ. 1-5:
7. 1894 թվականի նոյեմբերի 26-ին ԱՄՆ-ի Մասսաչուսեթս նահանգի Բոստոն քաղաքում նահանգապետ Ֆրեդերիկ Գրինհելջի, ժամանակի ազդեցիկ հոգևորականների, խմբագիրների, գործարարների մասնակցությամբ տեղի է ունեցել հանդիպում, որի ընթացքում քննության են առնվել Թուրքիայում հայերի նկատմամբ տեղի ունեցող բռնությունները:
8. ՀԱԱ, ֆ. 450, ց. 5, գ. 25, թթ. 6-9:
9. http://www.mfa.gov.tr/no_62---15-nisan-2005_-basbakan-sayin-recep-tayyip-erdogan_in-ermenistan-devlet-baskani-robert-kocaryan_a-gonderdigi-mektup-hk_.tr.mfa (վերջին դիտում՝ 15 դեկտեմբերի 2017թ.):
10. The New York Times, 14 December, 1894, էջ 5, https:// www.newspapers.com/image/20331339/?terms=Turkey+denies+Armenian+atrocities (վերջին դիտում՝ 15 նոյեմբերի 2017 թ):

Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների այժմեականությունը

Մելինե Անումյան
Թուրքագետ, պատմ. գիտ. թեկնածու

Երբ անդրադառնում ենք պարմագիտության ուրիկիտարիզմին, գիտակցում ենք, որ պարմության գրեթե ամեն մի դարաշրջանի կամ դրվագի ուսումնասիրություն կարևոր է՝ ներկան արժևորելու և ապագան ճիշտ կառուցելու համար: Ինչ վերաբերում է մեր պարմությանը, ապա, ըստ իս և ի ցավ սրտի, Հայոց ցեղասպանության շրջանի պարմությունը՝ իր ամբողջ ընդգրկումով, 100 տարի անց անգամ շարունակում է մնալ արդիական: Հայոց ցեղասպանության պարմության ամենակարևոր դրվագներից մեկն էլ երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունները կամ հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքի հիմքով հարուցված 60-ից ավել դատական գործերն են, որոնք քննվել են Օսմանյան պետության ռազմական արտակարգ ատյաններում:

Թեև երիտթուրքերի դատավարությունները բավականաչափ ուսումնասիրված են հայ և օտարազգի մասնագետների կողմից, այնուամենայնիվ Թուրքիայի պատմության՝ մեզ անմիջականորեն առնչվող այդ դրվագին ևս մեկ անգամ անդրադարձն ու վերարժևորումը այժմեական են հատկապես մեր օրերում, երբ Թուրքիա պետությունը շարունակում է ոչ միայն ուրանալ Հայոց ցեղասպանության փաստը, այլ նաև անտեսում օսմանյան դատարանների վճիռները:

Հայոց ցեղասպանության ուրացման հարցում արդեն բավականին պատկառելի փորձառություն ձեռք բերած Թուրքիան՝ քարոզչության իր բոլոր գործիքներով, 2024 թ. ևս շարունակում է իր հակագիտական գործունեությունը: Թուրքիայի իշխանություններն ու նրանց խոսափողները, այս հարցում ունենալով 100-ամյա փորձ, հասկացել են, որ ավելի ճիշտ կլինի դեռ ապրիլքսանչորյան շաբաթը չհասած՝ հակադարձման անցնել Հայոց ցեղասպանության ճանաչման պայքարին:

Այսպես՝ ապրիլի սկզբներից թուրքական ամենաազգայնամոլ պարբերականներից մեկը՝ «Յենի Չաղը», ձեռնարկել է հոդվածաշարի հրապարակում Հայոց ցեղասպանության և դրանից բխող պահանջատիրական պայքարի դեմ: Հոդվածաշարի հեղինակն էլ ոչ թե պատմաբան է, այլ քաղաքագետ ու քաղաքական գործիչ: Մուրադ Սուրուրի Օզբյուլբյուլ անվամբ այդ անձը հայերի հանդեպ ատելությամբ հայտնի ուլտրանացիոնալիստական «Ազգային շարժում» կուսակցության (Milliyetçi Hareket Partisi / MHP) հայտնի գործիչներից է:

2024 թ. ապրիլի 10-ին «Յենի Չաղ»-ում «Հայկական պահանջներն իրատեսակա՞ն են» («Ermeni Talepleri Gerçekçi mi?») վերնագրով հրապարակված հոդվածում Մուրադ Սուրուրի Օզբյուլբյուլը, շեշտելով, թե իբր ներկայիս Թուրքիայի Հանրապետությունը չի կարող Օսմանյան կայսրության ժառանգորդը համարվել, գրում է. «Ահա թե ինչու իրավական առումով Թուրքիայի Հանրապետությունը որևէ պատասխանատվություն չի կարող կրել, ինչ էլ որ եկած լինի հայերի գլխին»[1]:

Նույն հոդվածում նա թեև հպանցիկ անդրադառնում է երիտթուրքերի դատավարություններին՝ նշելով, որ հայերի դեմ հանցագործությունները քննելու նպատակով 120 հոգու Մալթա են աքսորել, սակայն լինելով քաղաքական գործիչ և պատմական անցքերը լուսաբանելիս առաջնորդվելով ոչ թե պատմական փաստերով, այլ քաղաքական շահերով՝ գրում է, թե իբր ռազմական դատարանները հիմնվել են Ստամբուլը գրաված մեծ տերությունների (Անտանտի պետությունների) կողմից: Հրապարակման վերջում Օզբյուլբյուլը հանգում է հակագիտական և սխալ եզրակացության, քանի որ ի սկզբանե էլ նրա նպատակը ոչ թե պատմական իրական փաստերը վեր հանելն էր, այլ դրանց խեղաթյուրումը: Այսպես՝ նա, լիովին անտեսելով, որ այդ դատական գործերը քննվել են և հանգուցալուծվել ոչ թե այլազգի, այլ թուրքական դատարանների, մասնավորապես՝ Օսմանյան պետության ռազմական արտակարգ ատյանների կողմից,

հայտնում է, թե իբր «Ստամբուլում և Մալթայում ձերբակալված անձանց վերաբերյալ հանցագործությունը հաստատող ապացույցներ չգտնվելու պատճառով անգլիացիները փորձել են ուսումնասիրել օսմանյան արխիվները, սակայն այնտեղ ևս չեն կարողացել հանցանշաններ գտնել»: Այդպիսով՝ նա լռության է մատնում այն պատմական փաստը, որ իրականում Մեծ Բրիտանիան Մալթա աքսորված Հայոց ցեղասպանության պատասխանատուներին բաց է թողել, որպեսզի նրանց փոխանակի Առաջին աշխարհամարտի ընթացքում գերի ընկած իր զինվորականների հետ: Դրա փոխարեն՝ պնդում է, թե իբր անգլիացիների կողմից դատական գործընթաց չի սկսվել ապացույցների անբավարար լինելու հետևանքով[2]:

Անմիջապես հաջորդ օրը լույս տեսած մեկ այլ հոդվածում, որը կրում է «Հայերին փոխհատուցելու խնդիրը» («Ermenilere Tazminat Meselesi») վերնագիրը, նույն հեղինակը դարձյալ գնում է պատմական անուրանալի փաստերն աղավաղելու և ժխտելու ճանապարհով և նշում, թե իբր «1915 թ. դեպքերի վերաբերյալ ոչ մի դատական վճիռ չի կայացվել»[3]: Միտումնավոր կերպով անտեսելով 1919-1921 թթ. օսմանյան դատարանների կայացրած վճիռները՝ Օզբյուլբյուլը խեղաթյուրում է օսմանյան ռազմական արտակարգ ատյանում քննված այդ գործերը և գրում, թե երիտթուրքերին դատելու համար հիմնվել են միայն «Մալթայի դատարանները», որոնք, սակայն, չեն գործել «ապացույցների անբավարար լինելու հետևանքով»[4]:

Ժամանակ առ ժամանակ, հատկապես՝ ամեն տարվա ապրիլին թուրքական մամուլում հայտնվող նմանատիպ հոդվածները մեզ հիշեցնում են երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների թեման մշտապես ակտիվ պահելու և այդ կարևոր պատմական փաստը վերստին արժևորելու անհրաժեշտության մասին:

Օսմանյան կայսրության մայրամուտին կամ թուրքական պատմագրության եզրով՝ զինադադարի շրջանում օսմանյան դատական մարմինների կողմից իրականացված այդ դատաքննությունները կարևորվում են հետևյալ հանգամանքներով.

1. Հայոց ցեղասպանության փաստը հավաստող պաշտոնական փաստաթղթեր

Ինչպես հայտնի է, Հայոց ցեղասպանության փաստը հաստատող վավերագրերի շարքում առանձնահատուկ կարևոր տեղ են զբաղեցնում օսմանյան պաշտոնական փաստաթղթերը: 1919-1921 թթ. հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված այս 60-ից ավել դատական գործերի նիստերում հատկապես 1919 թ. երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների դա-



տավարության ժամանակ ներկայացված մեղադրական եզրակացությունները, դատաքննությունների ընթացքում ունկնդրության արժանացած վկաների և ամբաստանյալների ցուցմունքները, ընթերցված պաշտոնական ծածկագիր հեռագրերը և հատկապես դատավճիռներն ընդգրկող այս փաստաթղթերի դերն իրապես անգնահատելի է Հայոց ցեղասպանության փաստն ապացուցելու առումով: Դատական վավերագրերի շարքում առանձնահատուկ հիշատակման է արժանի «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների դատաքննության առաջին նիստում (1919 թ. ապրիլի 28) ներկայացված ամբաստանագիրը, որը բաղկացած էր 41 պաշտոնական ու կիսապաշտոնական բնագիր փաստաթղթերից, ինչպես նաև 1919 թ. հուլիսի 5-ին երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների վերաբերյալ կայացված ընդհանուր դատավճիռը, ըստ որի՝ մահվան են դատապարտվել Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուները:

2. Դատական մարմնի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչում և դատապարտում

Որքան էլ հավակնոտ հնչի, այնուամենայնիվ կարելի է արձանագրել, որ այս դատական գործընթացների և դատաքննությունների արդյունքում ընդունված դատավճիռների միջոցով Օսմանյան պետությունը և նրա իրավահաջորդ Թուրքիան արդեն իսկ պաշտոնապես ճանաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը: Այսինքն՝ Թուրքիան, ի դեմս այն ժամանակվա իշխանությունների, այդ կերպ ընդունել է, որ հայերը զանգվածաբար կոտորվել են՝ նախապես որոշված պետական ծրագրի համաձայն: Այն, որ թուրքերը, փաստորեն, առաջինն են դատապարտել Մեծ եղեռնի հեղինակներին, թերևս, կարող է առաջին հայացքից աբսուրդային թվալ, մանավանդ, երբ նկատի առնենք, որ Թուրքիայի Հանրապետության պատմության ամբողջ ընթացքում իշխանությունները շարունակաբար ժխտել են Հայոց ցեղասպանությունը: Սակայն դա անուրանալի պատմական փաստ է, որը պետք է ելակետային լինի թուրքական ժխտողականության դեմ մեր պայքարում:

Այս դատական վավերագրերը բացառիկ արժեք են ձեռք բերում, երբ նկատի ենք առնում, որ դրանցից յուրաքանչյուրն ուսումնասիրվել է Օսմանյան կայսրության արդարադատության և ներքին գործերի նախարարություններին ենթակա իրավասու պաշտոնյաների կողմից, որոնք հաստատել են դրանց վավերականությունը: Բացի այդ՝ շատ դեպքերում մեղադրյալներին ցույց են տրվել փաստաթղթերի տակ դրված սեփական ստորագրությունները, և նրանք ընդունել են, որ դրանք իրենց են պատկանում: Հենց այս ընթացակարգի շնորհիվ էլ սույն դատավարությունները անգնահատելի աղբյուր են ոչ միայն պատմագիտական, այլև իրավական տեսանկյունից: Ուստի, մեծանուն ցեղասպանագետ Վահագն Տատրյանի դիպուկ բնորոշմամբ, «ռազմական դատարանների փաստաթղթերի հավաքականությունը ամենաուժեղ հակաթույնն է թուրքական ժխտողականության դեմ»[5]:

Ահա թե ինչու Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիայի պաշտոնական պատմագրությունն ի սկզբանե ուրացել է այդ դատավարություններն իրականացրած դատական մարմինների որոշումներն ու վճիռները: Հենց դա է պատճառը, որ ներկայում ևս թուրքական իշխանություններն, օգտագործելով քարոզչության իրենց բոլոր հնարավորությունները, անտեսում կամ աղավաղում են երիտթուրքերի դատավարությունները քննած ռազմական արտակարգ ատյանների վճիռներն ու փաստաթղթերը: ■

Հղումներ

1. https://www.yenicaggazetesi.com.tr/ermeni-talepleri-gercekci-mi-784435h.htm (Վերջին դիտում՝ 12.04.2024):
2. Նույն տեղում:
3. https://www.yenicaggazetesi.com.tr/ermenilere-tazminat-meselesi-784734h.htm (Վերջին դիտում՝ 12.04.2024):
4. Նույն տեղում:
5. Vahakn N. Dadrian, Taner Akçam, «Tehcir ve Taktil», Divan-i Harb-i Örfi Zabitlari, İttihad ve Terakki'nin Yargilanmasi 1919-1922, İstanbul, 2008, s. 6:

Ոչնչացումից մինչև յուրացում. Արցախի անպաշտպան մշակութային ժառանգությունը

Տաթևիկ Աղաջանյան
Լրագրող, Արցախ

2023 թ. սեպտեմբերի վերջերին՝ Արցախի վրա Ադրբեջանի հարձակումից հետո, 100 հազարից ավելի հայ բռնի տեղահանվել է իր հազարամյա բնօրրանից՝ այնտեղ թողնելով ոչ միայն իր տունը, ինչքն ու ունեցվածքը, այլև դարերի ընթացքում կառուցած կոթողները, եկեղեցիները, մշակութային ու հասարակական նշանակության շինությունները: Դրանց թվում են 423 վանքեր ու եկեղեցիներ, շուրջ 30 թանգարաններ ու ցուցասրահներ, ավելի քան 6000 պատմական նշանակություն ունեցող հուշարձաններ, բազմաթիվ այլ հուշարձաններ, խաչքարեր, տապանաքարեր, Արցախյան և Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված կոթողներ, բերդեր ու ամրոցներ, գրադարաններ, անձնական ու պետական արխիվներ: Թվարկվածները չեն ընդգրկում Արցախում գտնվող մշակութային ու պատմական նշանակության արժեքների ողջ ցանկը, շատերի դեպքում էլ տվյալները կիսատ են:

Հայ առաքելական եկեղեցու կողմից ստեղծված Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակը զբաղվում է միջազգային, միջեկեղեցական, միջկրոնական, բոլոր հնարավոր այլ հարթակներում Արցախի հայկական հուշարձանների, սրբավայրերի ու գերեզմանատների նկատմամբ արձանագրված ոտնձգությունների ներկայացմամբ և աշխատանքներ է տանում հայկական ժառանգության պահպանության ուղղությամբ:

Գրասենյակից տեղեկացել ենք, որ այդ ուղղությամբ աշխատանքներ տարվում են, սակայն դեռևս շոշափելի արդյունքներ չկան:

Արցախի թեմի տվյալներով՝ Արցախի օկուպացված տարածքում մնացել են թվով 423 վանքեր ու եկեղեցիներ, ընդ որում՝ 2020 թ. հետո այդ թիվը 210 էր: 44-օրյա պատերազմից հետո Արցախի Հանրապետության վերահսկողության տակ էին 211 եկեղեցիներ ու վանքեր: Ինչ վերաբերում է խաչքարերի, մատուռների թվին, ապա գրասենյակը դրանց ամբողջական հավաքագրված ցանկերը չունի: «Այժմ հնարավորություն չկա այդ մասշտաբի աշխատանքներն իրականացնելու»,- նշել են գրասենյակից:

Արցախի Հանրապետության «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն Արմինե Հայրապետյանի խոսքով՝ մոտ 6000 արձանագրված հուշարձան է մնացել բռնազավթված Արցախում՝ եկեղեցիներ, խաչքարեր, տապանաքարեր, եկեղեցի-մատուռներ և այլն: Սակայն այս թիվը վերջնական չէ, քանի որ վերջին շրջանում զորամասերում կամ այլ վայրերում կառուցված կոթողների, պատերազմի զոհերի հիշատակին

տեղադրված խաչքարերի, հուշարձանների միայն փոքր մասն էր ցանկագրված:

Հաշվառված ու պետական ցուցակներում ընդգրկված էր 4226 հուշարձան, որից 154-ը՝ Ստեփանակերտում: Բացի դրանից՝ մոտ 2000 հուշարձանների մասին տեղեկությունները հետո են ի հայտ եկել և դեռևս ցուցակի մեջ ընդգրկված չէին: Իրենց ճարտարապետական տեսքի, պատմական անցյալի համար հուշարձանի կարգավիճակ էին ստացել որոշ բնակավայրերի ժողովրդական տներ:

Նա փաստում է, որ Արցախում թողել ենք պատմամշակութային մեծ ժառանգություն, պատմական անժխտելի արժեք ներկայացնող հարստություն, որը մեր պատմական հիշողության կրիչն է, Արցախում մեր եղելության ու լինելության հավաստիքը: «Հին, պատմական, պապենական գերեզմանոցներ, որոնք ժամանակագրության առումով հստակ արձանագրություններ են, հոգևոր ու աշխարհիկ նշանավոր կենտրոններ, այդ թվում՝ Դադիվանքի, Գանձասարի, Ամարասի, Ծմակահողի, Սուրբ Հակոբավանքի վանական համալիրները, Ղազանչեցոց տաճարը, Տիգրանակերտի ամրոցը, շատ այլ բերդեր ու ամրոցներ»,- նշել է նա:

Արցախում են մնացել նաև առնվազն 30 պետական ու մասնավոր թանգարաններ և ցուցասրահներ՝ իրենց հավաքածուներով: 44-օրյա պատերազմից հետո ստեղծվել էր Արցախի Հանրապետության բռնա-

զավթված տարածքների մշակութային ժառանգության պաշտպանության պետական խորհուրդը, որը զբաղվում էր բռնազավթված տարածքների մշակութային նմուշների ցուցակագրման, նկարագրության, կազմման, տեղեկությունների հավաքագրման աշխատանքներով:

2021-2023 թվականներին խորհուրդը հասցրել է հավաքագրել միայն 44-օրյա պատերազմի ժամանակ կորսված արվեստի գործերը (**20 հազար 885 ցուցանմուշ**): Խորհրդի տվյալների համաձայն՝ Արցախի Հանրապետության բռնազավթված տարածքում մնացել են նվազագույնը 20 թանգարան և 10 ցուցասրահ:

44-օրյա պատերազմից հետո Արցախի պետական մարմինները նախաձեռնել էին Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքների մշակութային հուշարձանների ցանկագրման աշխատանքներ: Բռնի տեղահանությունից և Արցախի պետական ինստիտուտների կազմաքանդումից հետո բռնազավթված մշակութային ժառանգության մասին տեղեկությունների ամբողջացման աշխատանքները փորձում են իրականացնել տարբեր նախաձեռնող կառույցներ ու անհատներ, սակայն դեռևս ամբողջական տեղեկատվություն չկա, գործուն քայլեր չեն ձեռնարկվում նաև Արցախի մշակութային ժառանգության պահպանության ու պաշտպանության ուղղությամբ:

«Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» (Monument watch) ծրագիրն ի սկզբանե նպատակ ուներ քարտեզագրել և գույքագրել 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության՝ Ադրբեջանին անցած տարածքների և արցախա-ադրբեջանական սահմանային գոտու անշարժ մշակութային ժառանգությունը, թանգարանները, մշակութային օջախները, հետևել ընթացիկ վիճակին, վավերացնել փոփոխությունները և այդ ամենը ներկայացնել միջազգային գիտական ու մշակութապահպան հանրությանը: 2023 թ. Արցախի ամբողջական հայաթափումից հետո ծրագիրը մշտադիտարկում է Արցախի ողջ տարածքի մշակութային ժառանգության վիճակն ու փոփոխությունները:

Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում (Monument watch) թիմի անդամ, ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի դասախոս Հայկուհի Մուրադյանն առաջնային խնդիր է համարում շարժական ու անշարժ ժառանգության թվայնացումն ու հաշվառումը, այնուհետև միջազգային կազմակերպությունների ներգրավումը, մշակութային ժառանգության վերաբերյալ միջազգային մեխանիզմների կիրառումը:

2021 թ. Արցախի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը զեկույց է հրապարակել ադրբեջանական օկուպացիայի տակ հայտնված հայկական մշակութային ժառանգությանը սպառնացող վտանգի վերաբերյալ:

Զեկույցում ներկայացված են ադրբեջանաթուրքական ագրեսիայի ընթացքում և հրադադարից հետո արձանագրված հայկական մշակութային ժառանգության ոչնչացման ու վանդալիզմի մի շարք դեպքեր՝ ներառյալ Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ և Սուրբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցիների դիտավորյալ թիրախավորման ու վանդալիզմի դեպքերը:

Զեկույցում անդրադարձ է կատարվում նաև Ադրբեջանի կողմից Արցախի հայկական մշակութային ժառանգության վերաբերյալ ապատեղեկատվության միտումնավոր տարածման և մշակութային կոթողները «աղվանականացնելու» քաղաքականությանը, ինչը ևս ոչնչացման սպառնալիքի տակ է դնում Արցախի տարածքում հայկական մշակութային ժառանգությունը:

«Վերհանված դեպքերի և հայատյացության համատեքստի վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ-



կական մշակութային ժառանգության ոչնչացումն ու խեղաթյուրումը կրում են համակարգված ու համատարած բնույթ: Ադրբեջանի պետական մարմինների ու հանրային դեմքերի գործողություններն ու հայտարարությունները վկայում են այն մասին, որ դա հատուկ պետական քաղաքականություն է՝ հենված հայ ազգի դեմ ատելության խրախուսման հանցավոր քաղաքականության վրա»,- ասվում է զեկույցում՝ հրատապ համարելով միջազգային համապատասխան կառույցների, հատկապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Արցախի տարածքում մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ արդյունավետ ու անհապաղ քայլերի ձեռնարկումը»,- ասվում է զեկույցում:

Հունվարին ՀՀ ԱԳՆ տեղակալ Վահան Կոստանյանը հայտարարել է, որ Արցախի մշակութային ժառանգության պահպանության հարցը գտնվում է իրենց ուշադրության կենտրոնում և բարձրաձայնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ում և այլ մարմիններում: «2020 թ. դեկտեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհուրդը որոշում էր կայացրել, որ պիտի փաստահավաք առաքելություն գործուղվի Լեռնային Ղարաբաղ՝ տեղում մշակութային կոթողների վիճակը դիտարկելու համար: Այս ընթացքում աշխատանքներ ենք տարել ու տանում, որպեսզի առաքելությունը կայանա: Մշակութային ժառանգության պահպանության խնդիրը եղել ու շարունակում է մնալ ԱԳՆ օրակարգում»,- ասել է նա:

2022 թ. լույս տեսած «Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում» աշխատության մեջ (Համլետ Պետրոսյան, Հայկուհի Մուրադյան) նշվում է, որ կազմվել են Արցախի Հանրապետության պատմամշակութային անշարժ ժառանգության ցանկը և դրանց զգալի մասի անձնագրերը, որոնք ընդգրկում են ավելի քան 4000 միավոր, շուրջ 1500 հուշարձանների պահպանական գոտիներ:

«Հուշարձանների պահպանության ոլորտում Արցախի իշխանությունները 1994-2020 թվականների ընթացքում նախաձեռնել են հոգևոր և աշխարհիկ կառույցների (եկեղեցիներ, վանական համալիրներ, կոթողներ, ամրոցներ, ապարանքներ, կամուրջներ) հետազոտման և վերականգնման աշխատանքներ: Հնագիտական հետազոտություններ են իրականացվել Հադրութի շրջանի Ազոխ գյուղի քարանձավում, նույն շրջանի Մեծ Թաղեր գյուղի «Շմանեք» քարանձավում, Շուշիի շրջանի Քարին Տակ գյուղի տարածքում գտնվող «Քարին տակ» (Ալեքսանա դուզե) քարանձավում, Կերենի դամբարանադաշտում, Քաշաթաղի շրջանի Միրիկ գյուղի տարածքում գտնվող «Միրիկ» (կիկլոպյան) ամրոցում: Հատկապես ուշագրավ և կարևորագույն իրադարձություն է 2005 թվականին հայոց արքա Տիգրան Բ Մեծի՝ Արցախում հիմնած Տիգրանակերտ քաղաքի հայտնաբերումը: Պեղումները և ուսումնասիրությունները Տիգրանակերտում ընթացել են շուրջ 15 տարի և ընդհատվել են միայն 2020 թվականին»,- շեշտվում է աշխատության մեջ: Հեղինակները նշում են, որ հետազոտական լուրջ աշխատանքներ են իրականացվել հատկապես քրիստոնեական հուշարձանների ուղղությամբ. Ամարասի վանք, Դադիվանք, Հոռեկավանք, Հակոբավանք, Ծիծեռնավանք, Հանդաբերդի վանք, Վաղուհասի Մայրաքաղաք վանք, Տողի մելիքական ապարանք, Բերդաշեն, Վաճառի Սուրբ Ստեփանոս վանք և այլն:

2020 թ.-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմն ակնհայտորեն ուղղված էր ոչ միայն քաղաքացիական բնակչության վերացմանը, այլև այդ տարածքի մշակութային շարժական և անշարժ ժառանգության, մշակութային և կրթական հաստատությունների դեմ: Նշվածի ամենահայտնի օրինակը Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու ռմբակոծումն է, որի վրա 2020 թվականի հոկտեմբերի 8-ին երկու արկ է պայթել: Պատերազմի ընթացքում հրետակոծվել է Մարտունի քաղաքի մշակույթի պալատը: Հադրութ քաղաքի բնակիչները, որոնք ստիպված են եղել լքել իրենց տները, փաստում են, որ այրվել է Հադրութի Ա. Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարանը: 2020 թվականի նոյեմբերի 5-ին ռմբակոծվել է Տիգրանակերտի հնագիտական հանգրվանը:

Հրադադարի հայտարարումից հետո ոչնչացվել են Մեխակավանի (Ջեբրայիլ) Ջորավար Սբ. Աստվածածին եկեղեցին, նույն շրջանի Շյուքյուրբեյլի գյուղում գտնվող տուֆե խաչային հորինվածքով հուշարձանը, Հադրութի Առաքել գյուղի խաչքարը, Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին:

Արցախի հայկական հետքի վերացման ամենացցուն օրինակը Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում գտնվող Արցախի Հանրապետության Ազգային ժողովի և Ազատամարտիկների միության շենքերի հիմնահատակ ավերումն է:

Ադրբեջանական վանդալիզմի զոհ են դառնում հատկապես Արցախյան ազատամարտին և զոհված հերոսներին նվիրված հուշակոթողները: Ամենավերջին օրինակներից մեկը Արցախի Մարտակերտի շրջանի Գետավան գյուղի ինքնապաշտպանության համար զոհված գետավանցի ազատամարտիկների հիշատակին կանգնեցված հուշատախտակների և խաչքարի ոչնչացումն էր, որի մասին հայտնի է դարձել 2024 թ. մարտ ամսին:

Հարկ է նշել, որ մշակութային արժեքների միտումնավոր ոչնչացումը պատերազմական գործողությունների ժամանակ և հետո միջազգային մի շարք կոնվենցիաներով և հռչակագրերով որակվում է որպես պատերազմական հանցագործություն: Ըստ «Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ արգելված է մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի, գողության, կողոպուտի, յուրացման, թշնամանքի և հաշվեհարդարի ցանկացած գործողություն: Հաագայի 1954 թվականի առաջին արձանագրությունն արգելում է օկուպացված տարածքներում ոչնչացնել մշակութային կամ հոգևոր արժեքները: Հաագայի կոնվենցիայի երկրորդ արձանագրությունը (1999 թ.) ավելի ընդլայնեց այդ շրջանակը: Առաջին արձանագրության 85-րդ հոդվածի 4-րդ կետն արգելում է «Ժողովուրդների մշակութային կամ հոգևոր ժառանգություն համարվող, իրավասու միջազգային կազմակերպության շրջանակներում հատուկ պաշտպանություն ստացած պատմական հուշարձանների, արվեստի գործերի կամ երկրպագության վայրերի թիրախավորումը»: Եվ Ադրբեջանը, և՛ Հայաստանը 1993 թվականին վավերացրել են Հաագայի կոնվենցիան:

Գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանության սկզբունքներ են առաջարկում նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի մի շարք կոնվենցիաներ (1970 թ. «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի անօրինական փոխանցումն արգելող» կոնվենցիա, 1972 թ. «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա, 2003 թ. «Մշակութային ժառանգության դիտավորյալ ոչնչացման վերաբերյալ հռչակագիր» և այլն):

Սակայն, ի հեճուկս դրանց, Ադրբեջանը շարունակում է Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման, յուրացման, աղվանականացման քաղաքականությունը և թույլ չի տալիս միջազգային կազմակերպություններին դիտարկում անցկացնել բռնազավթված տարածքներում: ■

Թուրքական առասպելական հայրենիքի գաղափարն ու հայոց իրական հայրենիքը հայությունից օտարելու փաշինյանական «ուսմունքը»

Անի Մելքոնյան
Պատմաբան

Նորից ապրիլն է, և հայությունը կրկին ապրիլի 24-ին ոգեկոչելու է Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակը:

Ցեղասպանության, դրա պատճառների ու հետևանքների մասին շատ է խոսվել. խոսել ենք նաև Հայոց ցեղասպանության գլխավոր պատճառներից մեկի՝ պանթյուրքիզմի մասին, սակայն պանթյուրքիզմը ծնող գաղափարախոսություններից մեկի՝ թուրքերի առասպելական հայրենիք համարվող Էրգենեկոնի և Բաքվից մինչև Հնդկաստան ու Չինաստան ձգվող «Մեծ Թուրանի» միջոցով այնտեղ վերադարձի մասին գրեթե չի խոսվել:

Էրգենեկոնը, ինչպես ասացինք, համարվում է թուրքերի առասպելական հայրենիքը:

Իրականում, սակայն, Էրգենեկոն կամ Էրգենեքոն կոչված առասպելական վայրը թուրքերի հետ այդքան էլ կապ չունի, բայց սեփական ծագման փնտրտուքների մեջ գտնվող քոչվորներն ի վերջո ինչ-որ տեղից պետք է բխեցնեին իրենց ծագումը և չնայած թուրքական պետության և, այսպես կոչված, գիտնականների համառ ջանքերին՝ թուրքերի ծագումը Փոքր Ասիայից բխեցնելը համոզիչ ու արժանահավատ չէ նախևառաջ այս տարածաշրջանում թուրք ժողովրդի արմատներ ու հիմք չունենալու պատճառով: Հետևաբար պետք էր ընտրել ավելի հարմար «ազգային գաղափարախոսություն»՝ Էրգենեկոնի մասին էպոսի քարոզչությունը, ինչն էլ ակտիվ կերպով սկսեցին անել հատկապես երիտթուրքական իշխանությունները և նրանց հաջորդները:

Այժմ մի փոքր պատմական ակնարկ Էրգենեկոնի և դրա վերաբերյալ առասպելի մասին:

Էրգենեկոն վայրի մասին առաջին անգամ հիշատակվում է պարսիկ տարեգիր Ռաշիդ ադ-Դինի «Տարեգրությունների ժողովածու» («Cami at-Tavarih») աշխատության մեջ, որտեղ նշվում է հետևյալը.

«Մոնղոլական ցեղերը թյուրքական ցեղերի ընդհանուր խմբից էին սերում: Նրանց վրանները տեղակայված էին ույղուրների երկրից մինչև Խիթայ և Ջուջե բնակավայրերն ընկած տարածքում, այն տարածքում, որը հիմա կոչվում է Մոգուլիստան…Սրանից մոտ 2000 տարի առաջ մոնղոլ կոչվող ցեղը ընդհարվում է մյուս թյուրքական ցեղերի հետ, և նրանց միջև պատերազմ է սկսվում… Կա պատմություն, ըստ որի՝ վստահելի անձանց հավաստմամբ՝ մոնղոլները ենթարկվում են ջարդերի, և նրանցից կենդանի են մնում միայն երկու տղամարդ և երկու կին: Նրանք փախչում են դժվա-

ռամատչելի մի վայր, որն ամբողջությամբ շրջապատված էր լեռներով ու անտառներով: Դեպի այս վայրը տանող միայն մի արահետ կար, որով շատ դժվար էր անցնել: Այս լեռների միջև կար մի տափաստան: Այդ վայրը կոչվեց «Էրգունե-կուն», ինչը նշանակում էր շեղ իջվածք: Իսկ մարդկանց անուններն էին Նուքուզ և Կիյան: Նրանց սերունդները երկար ժամանակ մնացին Էրգունե-կունում: Երբ այս տեղը շատ նեղ դարձավ, նրանք խորհուրդ հավաքեցին և որոշեցին դուրս գալ այդտեղից: Լեռան մեջ մի հատված գտան, որը մետաղ էր պարունակում: Անտառներից հավաքեցին փայտ և յոթանասուն խարույկ վառեցին: Այդպես հալեցրին լեռը և դուրս եկան այնտեղից»[1]:

Էրգենեկոնի մասին պատմությունը հիշատակվում է նաև 17-րդ դարի Հիվայի խան Աբուլ-գազի Բահադրը խանի գրած «Թյուրքերի տոհմածառ» («Şeçere-i Türk») աշխատության մեջ[2]:

Էրգենեկոն էպոսի նախատիպերը հանդիպում են չինական ավանդությունում՝ Աշինայի տոհմի մասին պատմությունների տեսքով:

Սակայն ըստ որոշ ուսումնասիրողների. «Չնայած որոշ նմանություններին (ժողովրդի վերածնվելը, շրջակա աշխարհից թաքնված վայրում պատսպարվելն ու մի քանի հարյուրամյակ հետո այնտեղից դուրս

գալը)՝ չինական ու միջնադարյան աղբյուրներում տեղ գտած պատմությունները էականորեն տարբերվում են միմյանցից: Առաջին և ամենաէական տարբերությունն այն է, որ մի դեպքում խոսվում է Աշինայի ցեղի, մյուս դեպքում՝ օղուզների կամ մոնղոլների վերածնվելու մասին: Մասնավորապես հին չինական աղբյուրների համաձայն՝ խուների վերածնվելը կապված է առաջին հերթին նրանց արքայազնին սնող էգ գայլի հետ: Հաջորդ կարևոր տարբերությունն այն է, որ չինական աղբյուրներում չի հիշատակվում այն վայրի անվանումը, որտեղ պատսպարվում է գայլը, և որտեղ հետագայում ապրում է Աշինայի տոհմը: Միայն ավելի ուշ աղբյուրներում է հիշատակվում նաև վայրը՝ Իրգանա-Խուն կամ Էրքոնե-Քոն տեղանունը: Որոշ թուրք հետազոտողներ գտնում են, որ «Էրգենեկոնը» կարելի է դիտարկել որպես, այսպես կոչված, «մեծ թյուրքական էպոսի» մաս՝ դրան միացնելով նաև Աշինայի և Բոզքուրթի մասին էպոսները: Ըստ նրանց՝ «Էրգենեկոնը» սկսվում է այնտեղ, որտեղ ավարտվում է «Բոզքուրթ» էպոսը: Նշենք, որ վերջինս պատմում է թյուրքական ժողովուրդների՝ գայլից սերած լինելու մասին»[3]:

Իսկ ի՞նչ է նշանակում Էրգենեկոն կամ Էրգենեքոն: Ըստ Դ. Յըլդըրըմի՝ «Էրգենե» բառը թուրքերեն «erk» բառից առաջացած «erkin» բառի մոնղոլական արտասանությունն է: Իսկ «քոն»-ը, ըստ նրա, «քուն», այսինքն՝ «günor» բառի հնչյունափոխված տարբերակն է: Այսպիսով՝ ստացվում է էրքին՝ քուն, ինչը կարելի է մեկնաբանել որպես պատսպարան, անկախություն ստեղծելու վայր»[4]:

Ինչպես հայտնի է, «Էրգենեկոն» էպոսի լայնածավալ քարոզչությունը Թուրքիայում և հատկապես թուրքական գրականության մեջ սկսվում է քեմալական շարժման տարիներին, սակայն հասարակության մեջ «Էրգենեկոնի»՝ որպես բուն թյուրքական էպոսի սերմանումը սկսվել է դեռևս երիտթուրքերի կառավարության շրջանում: Երիտթուրքական կուսակցությունն իշխանության գալուց ի վեր բավականին մեծ ուշադրություն էր դարձնում ազգայնականության և թյուրքականության գաղափարների տարածմանը: Նոր գաղափարախոսության տարածմանը նպաստող կարևոր քայլերից մեկն էլ, այսպես կոչված, «բուն թյուրքականի» արմատավորումն էր: Բուն թյուրքական էր նաև Էրգենեկոնի մասին պատմող էպոսը և հենց Էրգենեկոն երևույթը: Եվ քանի որ Օսմանյան կայսրության տարածքում ապրող ժողովրդի համար միանգամայն խորթ էր «բուն թյուրքական» «Էրգենեկոն» էպոսը, անհրաժեշտ էր թե՛ անվանումը, թե՛ երևույթն ինքնին հասանելի դարձնել ժողովրդական լայն զանգվածներին: Այդ նպատակով թուրքական իշխանությունների ընտրած տարբերակը թերևս ամենաազդեցիկը եղավ. Էրգենեկոնը՝ որպես թուրքական տոն, տոնական օրացույց մտավ, և նրա մասին սկսեցին ակտիվորեն խոսել: Մի քանի տարի Էրգենեկոն-Նովրուզը նշվեց որպես մեկ ընդհանուր տոն: Այս տոնը նշվել է նաև Քասթամոնու նահանգում, սակայն 1914-1915 թթ. նահանգի «Քյորօղլու» թերթի

տվյալներով՝ տոնվել է՝ որպես Էրգենեկոն-Նովրուզ: Նահանգային այս թերթի 1914 թ. մարտի 27-ի համարում նշվում էր, որ Քասթամոնուի «Թուրքական ուժ» («Türk Gücü») կազմակերպությունը կնշի ազգային մի տոն»[5]:

Իսկ այդ «ազգային տոնը» նկարագրվում էր հետևյալ կերպ. «Այսօր թուրքերի ամենահին տոնն է: ***Մեփական հայրենիքից բաժանված մի բուռ թուրքեր չորս հարյուր տարի աշխարհի ամենահեռավոր վայրում այսօր՝ մարտի 27-ին, հնարավորություն ունեցան թեթևացնել իրենց սրտերը, որոնք վառվում էին Ալթայի լեռների կրակով*** և այդ օրվանից, ցրվելով աշխարհի չորս կողմերով, ցույց տվեցին իրենց քաջությունը և ամբողջ աշխարհին ստիպեցին ճանաչել իրենց»[6]: Առաջարկում ենք հատուկ ուշադրություն դարձնել այս պարբերության վրա, որովհետև, ինչպես քիչ հետո կտեսնենք, «Ալթայի լեռների կրակով վառվող» թուրքերի համար խիստ մտահոգված՝ Հայաստանի վարչապետը հրաժարվեց հայ ժողովրդի ոչ թե առասպելական, այլ իրական հայրենիք Արևմտյան Հայաստանից ու Արցախից:

«Էրգենեկոն» էպոսի հետագա քարոզչությունն արդեն կապված էր քեմալական շարժման հետ: Էրգենեկոնի՝ որպես թյուրքական ժողովուրդների նախահայրենիքի մասին առաջին անգամ խոսեցին պանթյուրքիզմի գաղափարախոսներ Ջիա Գյոքալփը և Օմեր Սեյֆեդդինը:

Իսկ պանթյուրքիզմը, ինչպես բազմիցս խոսել ենք այդ մասին, ծայրահեղ ազգայնամոլական գաղափարախոսություն էր, ըստ որի՝ ենթադրվում էր, որ Թուրքիայի տիրապետությունը պետք է տարածվեր Բաքվից «մինչև թուրքերի նախահայր Էրթուղրուլի ծննդավայրը, մինչև գորշ գայլի հայրենիքը՝ Սինցզյանի անապատները»[7]:

Ահա այսպես «Էրգենեկոն» էպոսը և թուրքական առասպելական հայրենիքի մասին քարոզչությունը ծնունդ տվեցին Հայոց ցեղասպանության գլխավոր պատճառներից մեկին՝ պանթյուրքիզմի քաղաքականությանը, որն էլ շարունակվում է մինչև օրս:

Ժամանակակից Թուրքիայում «Էրգենեկոն» էպոսը, որը սկսեց նույնացվել մայր գայլի (կամ Բոզքուրթի) մասին առասպելի հետ, Թուրքիայում ստացավ համակողմանի պետական աջակցություն: Գորշ գայլի պատկերը հայտնվեց պետական դրամի՝ լիրայի, դրոշմանիշների և տարբեր խորհրդանշանների վրա: Ներկայում «Էրգենեկոն» անվանումն է կրում նաև Ստամբուլի Շիշլի թաղամասի համայնքներից մեկը, ինչպես նաև նույն անվամբ թաղամասեր կան Անկարայում, Մանիսայում, Յենիշեհիրում, Մերսինում և այլ քաղաքներում: Արդեն 20-րդ դարի կեսին էպոսի քարոզչությունը գրական շրջանակներից տեղափոխվեց նաև քաղաքական ոլորտ:

21-րդ դարի սկզբին Էրգենեկոն անվանումն էլ ավելի ճանաչելի դարձավ Թուրքիայում գործող «Էրգենեկոն» ծայրահեղ-ազգայնական գաղտնի կազմակերպության գործունեության ու նրա անդամների դատավարությունից հետո»[8]:

Ինչպես ասացինք, «Էրգենեկոնի» մասին էպոսը դարձավ պանթյուրքիզմի հիմքերից մեկը, հետևաբար «Էրգենեկոն» ծայրահեղ-ազգայնական, ահաբեկչական կազմակերպությունը չէր կարող հակահայկական բնույթ չունենալ:

«Հայտնի է, որ «Էրգենեկոնին» կից գործող «Թալեաթ փաշա» կազմակերպությունը գլխավորապես զբաղվում էր եվրոպական երկրներում հակահայկական գործունեությամբ: Այս ընկերության ջանքերով Լոզանում (2005 և 2007 թթ.) և Բեռլինում (2006 և 2007 թթ.) մի քանի անգամ կազմակերպվեցին հակահայկական ցույցեր»[9]:

«Էրգենեկոն» էպոսը թեև թուրք հասարակությանը հայտնի դարձավ բավականին ուշ, բայց լավ կազմակերպված քարոզչության և պետական քաղաքականության հետևանքով շատ արագ դարձավ և այսօր էլ մնում է ժամանակակից Թուրքիայի և թուրքական ազգայնամոլության գլխավոր խորհրդանիշներից մեկը:

Իսկ ի՞նչ են հակադրում այս ամենին Հայաստանում. բացարձակապես ոչինչ:

Հակառակը՝ վերջին տարիներին փաշինյանական իշխանությունը իր համերաշխությունն է հայտնել թուրքական ծայրահեղ ազգայնամոլական պանթյուրքիստական ծրագրին:

Ի տարբերություն թուրքերի առասպելական հայրենիք վերադառնալու Էրդողանի պանթյուրքիստական ծրագրերին՝ Հայաստանի վարչապետի պաշտոնը զբաղեցնողը հայ ազգի **իրական** հայրենիքը՝ «պատմական» Հայաստանը, վտանգ է համարում մերօրյա Հայաստանի Հանրապետության համար[10], այլ կերպ ասած՝ պետական մակարդակով հրաժարվում է Հայոց ցեղասպանության պահանջատիրությունից, հայ ժողովրդին զրկում ***ազգային նպատակից***՝ պատմականորեն իրեն պատկանող Արևմտյան Հայաստանն ու Արցախը Հայաստանի Հանրապետությանը միացնելու՝ ***Մակսիմ և Միացյալ Հայաստանի*** գաղափարախոսությունից, ազգային երազանքի համար կռիվ տալու ու հաղթելու պատրաստ ազգից՝ պանթյուրքիզմի ճանապարհին մորթվող հլու ստրուկ կերտելու աննահանջ համառությամբ:

Մինչդեռ նախկիններից, Ռուսաստանից, ՀԱՊԿ-ից հետո իր ձախողումներում հիմա էլ պատմական Հայաստանին մեղադրող Փաշինյանը չի ուզում խոստովանել, որ իրական Հայաստանը (որը խորհրդային որևէ հանրագիտարանում Փաշինյանի գտած 29,743 կմ-ը չէ, այլ նվազագույնը 316.000 քառ կմ տարածք ունեցող բուն հայկական պետության հազարամյակների տարածքը) չէ մեղավոր իր կողմից նախ՝ Արցախը հանձնելու, այնուհետև՝ Արցախից առհասարակ հրաժարվելու, հետո էլ՝ Գորիս-Կապան ճանապարհը, Գեղարքունիքի ու Տավուշի գյուղերը, Տիգրանաշենը «ադրբեջանական հող» հայտարարելու և Հայաստանի ինքնիշխանության ու անկախության մակարդակը մի քանի անգամ կրճատելու մեջ: Փաշինյանը, որը ի տարբերություն Էրդողանի, ազգային գաղափարախոսության մասին պատկերացում չունի և հայրենիքը տեսնում է միայն կառավարական առանձնատան պատուհանից, չի ուզում հասկանալ, որ «պետությունը զարգացնելու համար պարտադիր չէ պատմական Հա-

յաստանը հակադրել Հայաստանի Հանրապետությանը կամ հայտարարել, թե հայրենիքը միայն Հայաստանի Հանրապետության տարածքն է: Պետությունը նյութական է, իսկ հայրենիքը՝ հոգևոր. այն խոր և լուրջ հասկացություն է: Պատմական Հայաստանին պետք չէ մեղադրել մեր դժբախտությունների մեջ»[11] կամ էլ (ինչն ավելի հավանական է) շատ լավ հասկանում է և կանխամտածված կործանման է տանում Հայաստանի Հանրապետությունը՝ հանուն «թուրքական հայրենիքի միավորման» և Մեծ Թուրանի ստեղծման, որպեսզի «Ալթայի լեռների կրակով վառվող» թուրքերի «ազգային» նպատակը անկատար չմնա, իսկ թե ի՞նչ կլինի Հայաստանի ու հայերի հետ, փաշինյանական վարչակազմին առանձնապես չի հետաքրքրում, որովհետև նրանց խոստացած «Ապագա կա»-ն Հայաստանի Հանրապետության ապագային չէր վերաբերում:

Հակառակ սրան՝ Հայաստանում կան ազգային նպատակ ունեցող քաղաքական ուժեր, որոնք երկու անգամ՝ 1918-ին և 1988-1994-ին կարողացել են վիժեցնել «Ալթայի լեռների կրակով վառվող» թուրքերի պանթյուրքիստական ծրագրերը և կարող են երրորդ անգամ ևս վիժեցնել այդ ծրագիրը, բայց մինչ այդ պետք է հնարավորինս արագ և կազմակերպված ձևով Հայաստանի վարչապետի պաշտոնից հեռացնել «թուրքական երազանքի» անսահանջ պաշտպանին և Հայաստանի ճակատագրի պատասխանատվությունը հանձնել ***հայկական ազգային երազանքի անփոնջ մարտիկներին,*** որոնք ոչ թե կյուրացնեն ինչ-որ «Էրգենեկոն» էպոս թուրքերի համար առասպելական հայրենիք ստեղծելու նպատակով, այլ պետական քաղաքականության վեմ կդարձնեն Մեծ և Միացյալ Հայաստանի վերականգնումը: ■

Ծանոթագրություններ

1. Рашид-ад-Дин, Сборник Летописей, Москва-Ленинград, 1952, стр. 153-154:
2. Այվազյան Հռ., «Էրգենեքոն» էպոսն ու դրա քարոզչությունը Թուրքիայում., Արևելագիտության հարցեր IX., Եր., 2015., էջ 334:
3. Նույնը., էջ 335:
4. Kaya M., Ergenenkon Destanindan yararlanan eserler üzerine bir değerlendirme http://muharremkayamsgsu.tr.gg/Ergenekon-Destan %26% 23305%3B. htm:
5. Այվազյան Հռ., «Էրգենեքոն» էպոսն ու դրա քարոզչությունը Թուրքիայում., էջ 337-338:
6. Yilmaz M.S., Kastamonuda Ergenekon Bayrami/Novruz, 1914-1915, Bilge Dergisi, 2004, s. 13-40:
7. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ., հատ., Ա., Եր., 1982., էջ 344:
8. Այվազյան Հռ., «Էրգենեքոն» էպոսն ու դրա քարոզչությունը Թուրքիայում., էջ 343:
9. Նույնը., էջ 344:
10. https://iravaban.net/471041.html:
11. https://yerkir.am/hy/article/2024/04/11/28329:

Օգտագործված գրականություն

ա) Գրականություն

1. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ., հատ., Ա., Եր., 1982

բ) Մամուլ

1. Այվազյան Հռ., «Էրգենեքոն» էպոսն ու դրա քարոզչությունը Թուրքիայում., Արևելագիտության հարցեր IX., Եր., 2015
2. Рашид-ад-Дин, Сборник Летописей, Москва-Ленинград, 1952
3. Yilmaz M.S., Kastamonuda Ergenekon Bayrami/Novruz, 1914-1915, Bilge Dergisi, 2004

գ) Համացանցի նյութեր

1. Kaya M., Ergenenkon Destanindan yararlanan eserler üzerine bir değerlendirme http://muharremkayamsgsu.tr.gg/Ergenekon-Destan %26% 23305%3B. htm
2. https://iravaban.net/471041.html
3. https://yerkir.am/hy/article/2024/04/11/28329

Քրդերին հայոց բնաջնջմանը մասնակից դարձնելու համիդյան և երիտթուրքական քաղաքականությունը

Արմեն Կարապետյան
Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հրապարակագիր

Պատմական ճշմարտությունները չպետք է քողարկել, այլ բացահայտել ողջ խորությամբ ու մերկությամբ: Քողարկել պատմական ճշմարտությունը, նշանակում է ջուր լցնել պատմության կեղծարարների ջրաղացին և նպաստել ոճրագործների արդարացմանը:

Քրդերին Հայոց ցեղասպանության իրականացման մեջ ներքաշելու սուլթան Աբդուլ Համիդի և երիտթուրքերի քաղաքական դիրքորոշումների մեջ որևէ էական տարբերություններ չկան, ավելին՝ նրանց մոտեցումները գրեթե նույնությամբ կրկնվում են կամ համընկնում: Այնպես որ, կեղծիք են այն պնդումները, թե երիտթուրքերի քաղաքականությունը Հայկական հարցի հանդեպ այլ է եղել և տարբերվել աբդուլհամիդյան արյունարբու քաղաքական ուղուց: Ավելին, քրդերը, քուրդ բեկերն ու ռազմական հրամանատարները ոչ միայն կույր գործիք են եղել համիդյան և երիտթուրքական իշխանությունների ձեռքին, այլև հեշտությամբ և գրեթե կամովին ներքաշվել են թուրքական այդ իշխանությունների հակահայկական հիստերիայի, բռնությունների ու կամայականությունների ընդհանուր գործընթացի մեջ:

Այո՛, չնչին բացառություններով, քուրդ ցեղապետերը, «Համիդիե» զորագնդերը ոչ միայն չեն հակադարձել, այլև կամովին ու ջերմորեն ներգրավվել են թուրքական իշխանությունների հակահայ ջարդարարական գործողությունների մեջ:

Սա է պատմական ճշմարտությունը, և այն ապացուցվում է պատմական իրականության ողջ ընթացքով, այդ իրականությունը ի հայտ բերող և բացահայտող բազմապիսի ու բազմաթիվ փաստերով և տրամաբանությամբ:

Չասե՛լ այդ ճշմարտությունը, նշանակում է օգնել պատմության կեղծարարներին:

Սկսենք Աբդուլ Համիդից, որը թուրքական պետական մեքենան գործի էր դրել հայրենիքում՝ Արևմտահայաստանում, հայության արմատական բնաջնջման քաղաքականությունը իրագործելու համար: Ըստ գերմանացի հետազոտող Ի. Ֆիրբյուխերի դիպուկ արտահայտության՝ սուլթան Համիդը՝ պատմության ամենից մութ անձնավորություններից մեկը, քաջ գիտակցում էր, որ քրդական սեպով մահացու հարված կհասցնի հայությանը:

Թալա՛ն, ահա այն սիստեմը, որը սկզբնավորվեց սուլթանի բարեհաճությամբ և զուլում դարձավ հայության համար: Քրդերին վերևից «պետականորեն» արտոնված էր թալանել իրենց հարևան, դրկից հայերին:

1890-ական թթ. սկզբներին քաղաքական, հոգեբանական և բարոյական իրավիճակը արևմտահայկական գավառներում հասել էր ծայրաստիճան շիկացման, իսկ հայ-քրդական հարաբերությունները ընդունել էին արյունալի բնույթ:

Ռուս և եվրոպացի բազմաթիվ գործիչներ և հետազոտողներ, որոնք 19-րդ դարավերջին եղել էին արևմտահայկական գավառներում, վերջնականորեն համոզված էին, որ քրդերը սկսեցին առավել դաժանորեն և անխնա ճնշել, հալածել և սպանել հայերին՝ իրենց թիկունքին զգալով թուրքական կառավարության բացահայտ հանդուրժողական քաղաքականությունը:

Հայը համարվում էր ռայա: Քրդի մոտ հայը լրիվ իրավազուրկ էր. «Ան պետք է պահէր աշիրէթները, թոռունները, տերեպէյները: Հայը... իրաւազուրկ էր, զայն իր քիւրտ տէրը կրնար սպաննել, աշխատցնել, ծախել. եթէ ուրիշ աշիրեթէ քիրտ մը ձեռք տար այդ հայուն, քիւրտ աղան կը պաշտպանէր զայն, ինչպէս որ մեծ եռանդով կը պաշտպանէ իր ձին, իր հոտը»[1]:

1977-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, գոտեպնդված թուրքական պետական պաշտոնական քարոզչությամբ, քրդական աշիրեթները Բիթլիսի, Վանի, Տիգրանակերտի շրջաններում չտեսնված ավերածություններ գործեցին, հրի և սրի մատնեցին հայկական տասնյակ ու տասնյակ բնակավայրեր: Իրենց վայրագությամբ հատկապես աչ-

քի ընկան քրդական հայտնի ավազակապետեր Քյոռ Հուսեին փաշան և Զալալեդդինը: Պատերազմից հետո քրդերը էլ ավելի սաստկացրին իրենց բռնություններն ու հալածանքները հայերի հանդեպ: Հայ ժողովրդի ջարդարար Հուսեին փաշային սուլթանը հրավիրեց Կ. Պոլիս, գեներալի կոչում և բարձր աշխատավարձ նշանակելով՝ հետ ուղարկեց գավառ՝ շարունակելու իր գործը: Հուսեին փաշան՝ «որպէս համիդեական աւազակային հրոսակախմբի հրամանակալ փաշա, որպէս սրի ուժով գաւառների տիրող... մի անկախ ու ինքնիշխան բռնակալ էր դարձել երկրի համար: Ինչ որ Համիդն էր ամբողջ Թուրքիայի համար, նոյն էլ Հիւսէյնն էր Էրզրումի, Վանի և Բիթլիսի նահանգների համար»[2]:

Միաժամանակ սուլթանական իշխանությունը քրդերի հանդեպ այնպիսի քաղաքական ուղեգիծ էր որդեգրել, որով չպիտի թույլ տար քրդական որևէ աշիրեթի բացարձակ հզորացումը, այլ մշտապես ներքին երկպառակություն սերմաներ և նրանց պահեր բաժան-բաժան վիճակում: Վերոնշյալ նպատակադրումով իշխանությունները զգալի կորուստներ պատճառեցին Պետիրխան բեյի, Խան Մահմուտի ու Թահիր փաշայի աշիրեթական հզոր տոհմերին: Բայց նրանց փոխարեն սուլթանը հզորացրեց իրեն հնազանդ այլ ցեղապետերի, ինչպես օրինակ, Շաքիր աղային, որպեսզի նրանց միջոցով ճնշի հայերի և ասորիների ծավալվող ազգային շարժումները:

Քրդերին զինվորական կազմակերպված ձևով հայության դեմ տրամադրելու առաքելությամբ 1879 թ. Վան գործուղվեց սուլթանական բարձրաստիճան մի պաշտոնյա՝ Բեքիր Սամի բեյը, որի առջև խնդիր էր դրված՝ «հայոց ազգութիւնը ճնշելու... մի նոր հնարագետ, արտաքուստ չը երևացող և արագ գործադրելի նախագիծ մշակելու և իսկոյն գործի դնելու»[3]: Սամի փաշան կարողացավ արդյունավետորեն կատարել սուլթանի մշակած նենգ ու ստոր դավադրության ծրագիրը: Այդ ծրագրի առանցքում էր համիդեական գնդերի կազմավորումը, ինչն, ըստ էության, ստեղծվում էր հայության բնաջնջման գործընթացը անխափան ապահովելու համար:

Ֆրանսիացի հետազոտող Ֆրեդերիկ Մակլերը, անդրադառնալով «Համիդիե» գնդերի ստեղծմանը, կարևորում է այն հանգամանքը, որ դրանով սուլթանական վարչակարգը ջանում էր խափանել Առաջավոր Ասիայի երկու տեղաբնիկ ժողովուրդների՝ հայերի և քրդերի մերձեցման բնականոն գործընթացը:

Համիդեական գնդերի կազմավորումով քուրդը կարգապահական առումով էլ չդաստիարակվեց, բնավ կարգապահության չվարժվեց, զինվոր չդարձավ, բայց կառավարչական զենքը մնաց նրա ձեռքում և «.... շատ շուտ իջեցնում էր ուսից այդ զենքը, պարպում, երբ նրա քեֆը գալիս էր, երբ նա մեկին ուզում էր կողոպտել»[4]:

Երկրի անհանգիստ ու վայրագ տարրին սուլթանը այսպիսի հեռատեսությամբ հանձնում էր «խաղաղության» գործը: Այն քրդին, որը «...մարդ սպանելիս շատ անգամ ցոյց չի տար վրդովմունքի առանձին նշաններ իսկ»[5]:

19-րդ դարի վերջերին քրդական ցեղերի մեծ մասը, շնորհիվ օսմանյան իշխանությունների թափած ջանքերի, արդեն ծանոթ էր կատարելագործված զենքերին և դրանց գործածությանը: Համիդեական գնդերի հրամանատարներ նշանակվեցին ամենասանձարձակ քուրդ բեյերն ու անխիղճ ավազակները, որոնք գտնվում էին սուլթանի անմիջական հովանավորության ներքո: Այդ ժամանակ արևմտահայկական գավառներում հայության նկատմամբ անօրինակ բարբարոսությամբ հռչակված էր քուրդ ավազակապետ Մուսա բեկը, որը ևս բացահայտ հովանավորվում էր Բարձր դռան կողմից: Նա մշտապես իր տրամադրության ներքո ուներ չորս հազար զինված քուրդ, որոնք անարգել կողոպտում էին հայկական բնակավայրերը: Չնայած եվրոպական դեսպանների ճնշման ներքո Մուսա բեկը տարվեց Կ. Պոլիս և դատի տրվեց, սակայն սուլթանի հրահանգով վերջինս արդարացվեց: Ուշագրավ է, որ դատական ֆարսի ընթացքում ավազակապետը սպառնացել էր Բարձր դռանը, որ եթե ինքը դատապարտվի, ապա այնժամ կիրապարա-

կեն այն բոլոր նամակները, որոնցով Վանի, Բաղեշի և Կարինի նահանգապետ-փաշաները նրան դրդել են մղել այդ արշավանքները հայերի դեմ: Այդ օրերին եվրոպական հասարակական կարծիքը պարզորոշ հասկացավ, որ Մուսա բեկի գործակիցը ինքը՝ թուրք կառավարությունն է, որը «... չիմանալ և չտեսնել կը ձևանա»[6]:

Քրդերի զինված ոտնձգությունները Վանի, Էրզրումի, Բիթլիսի վիլայեթների հայկական բնակավայրերի նկատմամբ 19-րդ դարավերջին ընդունեցին սիստեմատիկ և համատարած բնույթ՝ ձեռք բերելով առօրյա ու ամենօրյա կենցաղային երևույթի նշանակություն: Կարծես արտասովոր ու զարմանալի այլևս ոչինչ չկար:

Քրդերը ոտքից գլուխ զինված էին, իսկ հայը իրավունք չուներ զենք կրելու, ուստի մնում էր որպես ռայա և իր կյանքի գեթ փոքր-ինչ ապահովության համար ընկնում էր այս կամ այն քրդի հովանավորության տակ կամ էլ պիտի գներ իր ապահովությունը այս կամ այն վարձատրությամբ և ծառայությամբ:

«Համիդիե» գնդերի զինվորներին ու հրամանատարներին քաղաքացիական դատարանները դատելու իրավունք չունեին: Ամեն ինչ արվում էր՝ քրդերին ներշնչելու այն միտքը, որ իրենք լիովին անպատիժ կմնան հայկական բնակավայրերն ավերելու և հայերի ունեցվածքը թալանելու բոլոր տեսակի գործողությունների համար: Բարձր դռանը հաջողվեց քաղաքականապես տհաս քրդական զինյալ ու անզեն ամբոխին մինչև ուղն ու ծուծը ներարկել հակահայկական թունոտ հիստերիայով: Միայն Վասպուրականում քրդերից կազմեցին 14 համիդեական գնդեր: Անգամ օտարերկրյա (անգլիական) թերթերը գրեցին, որ քրդերն արդեն զինված էին «Մարտին» տիպի նոր հրացաններով:

1890-ական թթ. սկզբին քաղաքական լարվածությունը արևմտահայկական գավառներում հասել էր ծայրաստիճան շիկացման, իսկ հայ-քրդական հարաբերությունները ընդունել էին անդառնալի արյունալի բնույթ: Իրադարձություններին քաջատեղյակ Ռոլեն Ժոկմենը ժամանակին այն համոզմունքը հայտնեց, որ Թուրքիայում իրագործվում է մահմեդականների օգտին քրիստոնյաներին ոչնչացնելու պլան: Մթնոլորտը օրեցօր շիկանում էր, տագնապը սաստկանում: 1894 թ. թշնամու անարգ լծի դեմ ընդվզեց հերոսական Սասունը: Նույն թվականին ու նույն ժամանակ Անատոլիական 4-րդ բանակի զորամիավորումները պաշարեցին Սասունը: Սկսվեց հայության արյունոտ գողգոթան: Սասունում կատարած արյունալի գազանությունների համար Զեքի փաշան և քրդական ավազակապետերը սուլթանի կողմից պարգևատրվեցին շքանշաններով ու մետաքսյա դրոշներով: Ապստամբության ճնշումից հետո սուլթանը ամբողջ մեղքը փորձեց բարդել քրդերի վրա, և ուշագրավ է այն փաստը, որ սասունցիներից գրված ոչխարների խմբաքանակի մի մասը թուրք պաշտոնյաների միջոցով փորձեցին բաժանել հայ ընտանիքներին: Կառավարությունը նպատակ ուներ ցույց տալու, որ ինքն անմեղ է և անմասն Սասնո ջարդերին: Սա ևս մեկ անգամ աներկբա վկայում է, որ սուլթանական իշխանությունը քուն ու դադար չուներ հայ-քրդական հակամարտությունը անընդհատ ու անվերջ խորացնելու և բորբոքելու համար: Հայ-քրդական հակամարտությունը սուլթանը մշտական բորբոք վիճակում պահեց մինչև իր տխրահռչակ գահակալության՝ «զուլումի թագավորության» ավարտը: Եվ երբ սուլթան Համիդը 1912 թ. գահընկեց եղած վերադառնում էր Կ. Պոլիս, նավի վրա չթաքցնելով իր դժգոհությունը Բալկանյան պատերազմից և երիտթուրքերի գործելակերպից, բացականչել է. «Երիտասարդ թուրքեր ինչպէ՞ս արգելք չեղան և թոյլ տուին, որ յոյն և պուլկար իրարու հետ բարեկամանան»[7]:

Ահա այսպես էր դատում Օսմանյան կայսրության ժողովուրդներին իրար դեմ գրգռելու և իրար դեմ հանելու մեծ «վարպետն» ու մեծ մարդասպանը:

Հայկական հարցում և հայ-քրդական հարաբերություններում սուլթանի որդեգրած ռազմավարությունը էապես ոչնչով չփոխվեց երիտթուրքերի կառավարման տարիներին: Երիտթուրքերը շատ կարճ ժամանակում ապացուցեցին, որ իրենք ավելի չարժեն, քան հին թուրքերը: Այդ առումով անչափ բնորոշ է ռուս արևելագետ Անդրեյ Մանդելշտամի այն դիտարկումը, թե հին ու նոր թուրքական կարգերը միավորվում էին միևնույն ատելության մեջ հայերի նկատմամբ:

Երիտթուրքերը հավատարիմ մնացին սուլթան Համիդի ավանդույթներին: Նրանք շարունակեցին սիրաշահել և հովանավորել քրդական ավազակախմբերին, «համիդիե» զորախմբերին. ընդդեմ խաղաղ ու անպաշտպան հայ ժողովրդի:

1909-1912 թթ. հայկական պարբերականները գուժում էին, որ Արևմտյան Հայաստանի գավառներում նոր ուժով շարունակվում ու սաստկանում են քրդա-

կան ասպատակություններն ու հարստահարումները:

1908 թ. աշնանն արդեն «Արմենիա» պարբերականում տագնապալից լուրեր էին հրապարակվում հայոց նոր կոտորածների իրական վտանգի մասին: Նույն թվականի հոկտեմբերի 28-ին «Կոտորածի լուրեր Հայաստանէն» խորագրի ներքո հաղորդվում էր, որ «լուրեր սկսած են պըտըտիլ, թէ Տիգրանակերտի, Վանի, Բաղէշի կողմեր քիրտեր և հին դրութեան կուսակից թիւրքեր սկսած են կոտորածներ ընել»[8]: Անհերքելի էր համարվում, որ Թուրքիայի ներքին գավառներում հին բռնակալության ներկայացուցիչները սկսել են հակառակվել նոր վարչակարգի դեմ՝ հայերի ազատությունն ու հավասարությունը իրենց շահերին հակառակ համարելով: Տագնապով ասվում է, որ Վանից եկած վերջին տեղեկությունների համաձայն՝ այն հարստահարիչ քուրդ բեկերն ու փաշաները, որոնք քաղաք «.... բերուած էին իբր թէ դատելու համար, քիչ մը կաշառք խաղացնելէ յետոյ արձակուէր, վերադարձուեր են իրենց տեղեր, ուր վերըսկսեր են իրենց հարստահարութիւններ»[9]:

Նյու Յորքից հրապարակագիր օրիորդ Նազլուն «Արմենիայի» էջերում գրում էր, որ ակնկալ-անակնկալներից անդրանիկը եղավ Թուրքիայի՝ սահմանադրական տերության վերածվելը: Եվ ով գիտի, թե հետագա հինգ «տարուայ միջոցին քանի՜-քանի՜ այդպիսի անակնկալ առիթներ պիտի կրկնուին, և որոնք մեզ կրկին անպատրաստ գտնեն»[10]:

Անակնկալներ չեղան: Թուրքական իշխանությունները վաղուց էին ծրագրում հայ ժողովրդի ամբողջական բնաջնջումը: Աբդուլ Համիդի և նզովյալ երիտթուրքերի ոճրապարտ ուղեղներում արմատավորվել էր, որ Հայկական հարցը մեջտեղից կվերանա, եթե չլինի այն կրող տարրը՝ հայ ժողովուրդը:

Եվ իրավ, ճշմարտացի է այն դիտարկումը, որ վայրագ ու խորամանկ գազանը՝ նախ սուլթանական և ապա երիտթուրքական Թուրքիան, «ոչ թե գրգռվելու պատճառով էր հայերի վրա գայլային հարձակումներ գործում, այլ իրականացնում էր կանխապես մտածված ցեղասպանության հրեշավոր ծրագիր»[11]:

Շուտով, շատ շուտով երիտթուրքական ռեժիմը սկսեց արագացնել հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման գործընթացը:

Քրդական վայրենաբարո ցեղերն ու ցեղապետերը, «համիդիե» խաժամուժը ակտիվորեն ներգրավվեցին վերոնշյալ գործընթացի մեջ, քանզի տասնամյակներ շարունակ թունավորված էին հակահայկական մոլի տրամադրություններով և համոզված էին, որ անպատիժ կմնան ցանկացած բարբարոսության դեպքում:

Սրանք են պատմական իրողությունները, և ոչ միայն թուրքերը, այլև քրդերը, նրանց ներկայիս ու հետագա ժառանգները պարտավոր են հաշվի նստել վերոնշյալ իրողությունների հետ: ■

Հղում

1 Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Բ հատոր, Եր., 1999 թ., էջ 75:
2 Ատրպետ, Ճիվաղը, Թիֆլիս, 1911թ., էջ 8:
3 Լեռ, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Փարիզ, 1934 թ., հատոր Ա, էջ 117:
4 Ա-Դօ, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները, Եր., 1912 թ., էջ 306:
5 Արամեան Հմայեակ, Քրդերը Տաճկաց Հայաստանում, Ս. Պետերբուրգ, 1905 թ., էջ 140:
6 «Հնչակ», 1889 թ., թիվ 2:
7 Եազըճեան Գուրգէն, Ապտիլ Համիտ Բ. կարմիր սուլթանը, Պէյրութ, 1980 թ., էջ 395:
8 «Արմէնիա», 1908 թ., թիւ 13:
9 Նույն տեղում:
10 «Արմէնիա», 1908 թ., թիւ 16:
11 Լ. Գևորգյան, «Մուրճ» ամսագիրը, Եր., 1982 թ., էջ 266:

Ահարոն Սաչակլյան (1879-1964). «Նեմեսիս» գործողության նորահայտ մասնակիցը

Գոհար Խանումյան
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գլխավոր ֆոնդապահ

1964 թ. սեպտեմբերի 29-ին «Հայրենիք» թերթի առաջին էջի խմբագրականում Ահարոն Սաչակլյանի մահվան կապակցությամբ մասնավորապես գրված էր. «Իր յատկանշական լրջութեամբ մը կը մօտենար հանրային, կուսակցական հարցերուն եւ ամրօրէն հաւատարիմ էր սկզբունքներու: Առաքինութիւն մը, որ հետզհետէ կը պակասի մեր ազգային կեանքի շարք մը աւանդութիւններուն հետ: Ահարոն Սաչագլեան հեռացաւ մեզմէ՝ ձգելով յիշատակը խղճամիտ, պարկեշտ նկարագրով հաւատաւոր դաշնակցականի մը, մեկը անոնցմէ, որոնք մեր կուսակցութեան անխախտ սիւներէն եղան ի կենդանութեան եւ իրենց փայլուն յիշատակովն իսկ կը մղեն մեզ գործի եւ պարտականութեանց իրենց եւ մեր հաւատացած իտէալներու իրագործման համար»[1]:

1990 թ. ԱՄՆ-ում հայտնաբերվեց «Նեմեսիս» գործողության («Հատուկ գործի») անհայտ մասնակիցներից մեկի՝ Ահարոն Սաչակլյանի նամակների, լուսանկարների, փաստաթղթերի արխիվը վերջինիս մահվանից 26 տարի անց միայն: Հետաքրքրականն այն է, որ Ահարոն Սաչակլյանի ընտանիքի անդամները երբևէ չեն էլ ենթադրել, որ իրենց հարազատը որևէ դերակատարություն է ունեցել «Նեմեսիս» գործողության մեջ, քանի որ վերջինս ոչ միայն չի բարձրաձայնել իր կենսագրության ուշագրավ ու պատմական այս դրվագի մասին, այլև խնամքով թաքցրել է կողմնակի անձանցից:

2015 թ. Մարիան Մեսրոբյան-Մաքքըրդին հայտնաբերված հարուստ փաստավավերագրական նյութերի հիման վրա հրատարակեց «Սրբազան արդարադատություն. հայկական «Նեմեսիս» գործողության ձայներն ու ժառանգությունը»[2] գիրքը (անգլերեն)՝ դրանում ներկայացնելով նաև իր մորական պապի՝ Ահարոն Սաչակլյանի գործունեությունը, հատկապես՝ նրա մասնակցությունը «Նեմեսիս» գործողությանը:

Ո՞վ էր Ահարոն Սաչակլյանը և ինչ կապ ուներ «Նեմեսիս» գործողության հետ

«Հատուկ գործը» («Նեմեսիս» գործողությունը) խիստ գաղտնի գործողություն էր, ուստի երկար տարիներ գաղտնազերծված չէին նրա կազմակերպիչները, անդամները և գործին առնչվող ցանկացած տեղեկություն: Այդ պատճառով այսօր էլ գործի որոշ մասնակիցների անուններ անհայտ են կամ նորովի են բացահայտվում: 1919 թ. աշնանը (սեպտեմբեր 28 - նոյեմբեր 2) առաջին անգամ նորանկախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում՝ Երևանում, գումարվեց ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը[3]: Համաժողովում, երկրի արտաքին ու ներքին քաղաքականության բազում հարցերից ու խնդիրներից զատ, հանրապետության հիմնական կառավարող ՀՅԴ կուսակցությունը խիստ գաղտնիության պայմաններում որոշեց մահապատժի ենթարկել Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին և իրականացնողներին, որոնք տարբեր պատճառներով խուսափել էին թուրքական ռազմական դատարանի դատավճռից: Ընդհանուր ժողովի կողմից հավանության արժանացած այդ գործողությունը կոչվեց «Հատուկ գործ», որն ավելի հայտնի է «Նեմեսիս» ծածկանունով: Այն վստահվեց ՀՅԴ հատուկ կամ պատասխանատու մարմնին: Ընդհանուր ժողովի գաղտնի որոշման ընդունումից հետո սկսվեց Հայոց ցեղասպանության կազմակերպիչների նկատմամբ պատժիչ գործողությունների մանրազնին նախապատրաստությունը: Դրա ծրագրման ու կենսագործման անմիջական պատասխանատվությունը և վերահսկողությունը դրվեցին ՀՅԴ գործիչներ Արմեն Գարոյի (Գարեգին Փաստրմաճյան) և Շահան Նաթալիի (Հակոբ Տեր-Հակոբյան) վրա: Հատուկ մարմնի կազմում ներգրավվեցին Հայոց ցեղասպանությունը վերապրած երիտասարդներ, որոնք ունեին մարտական հարուստ փորձառություն՝ Սողոմոն Թեհլիրյանը, Արշավիր Շիրակյանը, Արամ Երկանյանը, Միսաք Թորլաքյանը և ուրիշներ: «Նեմեսիս» գործողության կազմակերպչական ընդհատակյա կենտրոններն էին Բոստոնում՝ «Հայրենիք», իսկ Կ. Պոլսում՝ «Ճակատամարտ» թերթերի խմբագրատները: Հրաչ Փափազյանի գլխավորած խումբը պետք է տեղեկություններ հայթայթեր երիտթուրքերի հանցավոր

պարագլուխների գտնվելու վայրի մասին[4]:

«Հատուկ գործի» կազմակերպման և նյութական միջոցների ապահովման կենտրոնակայանը Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» թերթի խմբագրատունն էր, որի աշխատակիցն էր նաև Ահարոն Սաչակլյանը:

Նա ծնվել է 1879 թ. սեպտեմբերի 9-ին Մալաթիայում (Օսմանյան կայսրություն): Հայրը՝ Հարություն Սաչակլյանը, հայտնի ճարտարապետ էր Օսմանյան կայսրությունում: Նա մահացել է, երբ Ահարոնը ընդամենը երեք ամսական էր[5]: Ահարոնն ուներ ավագ երկու եղբայր՝ Ստեփան և Հակոբ: 16-ամյա Ստեփանը 1890 թ. լքում է հայրենի Մալաթիան և հաստատվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Նրան շուտով հետևում է կրտսեր եղբայրը՝ 16-ամյա Ահարոնը, որը 1895 թ.՝ նախքան ծննդավայրում համիդյան կոտորածների սկսվելը, իր մի քանի հայրենակիցների հետ Կ. Պոլսից նավով տեղափոխվում է Մարսել, որտեղ ծանոթանում է Արմենական կուսակցության հիմնադիր Մկրտիչ Փորթուգալյանի հետ: Այս հանդիպումը ճակատագրական է լինում պատանի Ահարոնի համար. Փորթուգալյանը նրան ասում է. «*Տեսնում եմ, որ պայծառ ապագա ես ունենալու, որովհետև դու բարեկիրթ ես ու խելացի: Որդի՛ս, անպայման, կրթություն կստանաս: Այս երկրները ձուլում են օտարներին, թույլ չտա՛ս, որ քեզ հետ էլ դա պատահի: Երբեք չմոռանաս ազգությունդ ու կրոնդ: Գնա՛, Աստված քեզ հետ: Կրկնում եմ, չմոռանաս քո լեզուն*»[6]: Այս պատգամը ուղեկցեց Ահարոնին ողջ կյանքի ընթացքում: Նա Մարսելում մնում է վեց ամիս ֆինանսների սղության պատճառով: Ապա 1896 թ. հաստատվում է Հարթֆորդում (ԱՄՆ)՝ եղբոր տանը, սովորում անգլերեն և Հանթսինգերի բիզնես քոլեջում ուսանում հաշվապահություն (ավարտել է 1898 թ.): 1902 թ. նա մի խումբ համախոհների հետ հիմնում է ՀՅԴ Բոստոնի կոմիտեն: 1907-1909 թթ. Ա. Սաչակլյանը աշխատում է Մանիլայում (Ֆիլիպիններ)՝ գեներալ-նահանգապետի գրասենյակում՝ իբրև հաշվապահ:

Երիտթուրքական հեղաշրջումից կարճ ժամանակ անց՝ 1909 թ., Ահարոնը ճանապարհվում է դեպի Դյորթ-Յոլ (Զորքմարզպան)[7]՝ հանդիպելու մորը և եղբորը՝ Հակոբին[8], որոնց չէր տեսել ավելի քան 14 տարի: Այս ընթացքում նա նամակագրություն է սկսում ՀՅԴ անդամ, Օսմանյան պառլամենտի երեսփոխան Արշակ Վռամյանի (Օննիկ Դերձակյան) հետ: 1909 թ. ապրիլի սկզբին, երբ Ահարոնը արդեն գտնվում էր Դյորթ-Յոլում, տեղի հայությունը, ինչպես Կիլիկիայի այլ հայկական բնակավայրերի բնակչությունը, դիմել էր ինքնապաշտպանության՝ կենաց ու մահու կռիվ մղելով թուրքական մի քանի անգամ գերակշռող ուժերի դեմ: Հայերի, հիրավի, հերոսական ինքնապաշպանությունը Դյորթ-Յոլում ղեկավարում էր Միհրան Մելքոնյանը[9], որն, ի դեպ, Ահարոնի կնոջ՝ Էլիզայի[10] եղբայրն էր: Դյորթ-Յոլի թուրքական պաշարումը դադարեցվում է 13 օր անց միայն՝ հայերի հերոսական պայքարի և օտարերկրյա հյուպատոսների միջամտության շնորհիվ, որոնց ինքնապաշտպանության օրերին բազմաթիվ խնդրագրեր էր ուղարկել նաև Ահարոնը: Նա եղբոր՝ Հակոբի հետ Դյորթ-Յոլի սովյալ հայության համար կազմակերպում է ԱՄՆ-ից պարենի և հագուստի տրամադրումը:



Արմեն Գարո և Ահարոն Սաչակլյան

Վերադառնալով ԱՄՆ՝ նա մի կարճ ժամանակահատված աշխատում է ավագ եղբոր՝ Ստեփանի արևելյան գորգերի խանութում՝ Հարթֆորդում, որից հետո՝ Բոստոնի «Հայրենիք» թերթում:

1915 թ., երբ Օսմանյան կայսրությունում սկսվեցին հայերի նկատմամբ իրականացվող ցեղասպանական գործողությունները, Ահարոն Սաչակլյանը, օգտագործելով ամերիկյան Կարմիր խաչի և միսիոներների հետ իր կապերը, փորձում էր աջակցել իր հայրենակիցներին:

«Հատուկ գործին» կամ «Նեմեսիս» գործողությանը նրա անդամակցությունը սկսվել է դեռ 1919 թ.: Այս ժամանակահատվածում Ահարոնը սերտ նամակագրություն է ունեցել Շահան Նաթալիի, Վահան Զաքարյանցի[11], ԱՄՆ-ում ապահովագրական գործակալ Համո Բարաղամյանի[12] (Համոյի մասին իր հուշերում նաև Ս. Թեհլիրյանն է գրում) և քիմիկոս Զավեն Նալբանդյանի[13] հետ: **Հետաքրքրական է այն, որ բացի կարևոր պատմական տեղեկություններ պարունակող այս նամակներից՝ Ա. Սաչակլյանի արխիվում պահպանվել է նաև հայերի տեղահանությունն ու կոտորածները կազմակերպած 100 թուրք ոճրագործների ձեռագիր անվանացուցակը: Բացի այդ՝ արխիվում գտնվել են ցուցակում նշված որոշ գործիչների լուսանկարներ կամ ժամանակի թերթերից կտրված նրանց դիմապատկերներով թերթոններ:**

Դրո և Ահարոն Սաչակլյան

Ահարոն Սաչակլյանը ղեկավարում էր «Հատուկ գործի» ֆինանսավորման հարցերը՝ նյութական միջոցների հայթայթումը և անհրաժեշտ ծախսերի ծրագրումը, օգտագործումը: 1920 թ. հուլիսին Բոստոնում տեղի ունեցավ ՀՅԴ ԱՄՆ 27-րդ շրջանային ժողովը, որը, հիմնվելով Երևանում կայացած ընդհանուր ժողովի որոշումների վրա, գործողությունն իրագործելու նպատակով որոշեց ստեղծել ֆինանսական միջոցներն ապահովող **հատուկ գումարը** («Հատուկ ֆոնդը»)[14], որը Շահան Նաթալին անվանում էր «Վրեժի ֆոնդ»[15]: Ահարոն Սաչակլյանը ֆոնդի շրջանակներում իրականացնում է դրամահավաքներ, կազմակերպում տարբեր երկրներում գործող հետախուզական խմբերի լոգիստիկ ապահովումը: Ս. Թեհլիրյանի դատավարությունը դարձավ «Հատուկ գործի» ամենահնչեղ էջը: Անհրաժեշտ էին զգալի նյութական միջոցներ՝ Գերմանիայի լավագույն դատապաշտպաններին վարձելու և Թեհլիրյանի պաշտպանական գործը պատշաճ կազմակերպելու համար: Այդ միջոցները հայթայթվում էին «Հատուկ գումարի» ֆոնդից: Ա. Սաչակլյանի անձնական արխիվում «Հատուկ գումարի» վերաբերյալ հանդիպում ենք ինչպես դրամական նվիրատվությունների մասին նշումների, այնպես էլ կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների՝ Ս. Թեհլիրյանի, Արմին Վեգների, Յո. Լեփսիուսի և այլոց անունով:[16] Իրեն հատուկ բծախնդրությամբ նա այդ ամենը թաքցրել էր անգամ ընտանիքի անդամներից...

1920 թ. Էլիզա և Ահարոն Սաչակլյանները իրենց երեք երեխաների հետ վերջնականապես հաստատվեցին Սիրակուզում (ԱՄՆ)՝ ակտիվ մասնակցություն ունենալով հայկական համայնքի կյանքում, նաև տեղի հայկական եկեղեցու հիմնադրման գործում:

Ահարոն Սաչակլյանը մինչև 1933 թվականը ԱՄՆ ՀՅԴ Կենտրոնական կոմիտեի անդամ էր, իսկ մինչև մահը՝ ՀՅԴ անդամ: Նա մահացել է 1964 թ. օգոստոսի 5-ին, 85 տարեկան հասակում:

Կնոջն ասված նրա վերջին խոսքերն էին. «Ես կարող էի անել ավելին...»:

Կնոջ՝ Էլիզի հետ ամուսնությունից ուներ երեք զավակ՝ Աստղիկ, Արփինե և Հարություն, որին անվանակոչել էր հոր պատվին:

Սաչակլյանի մահվան 10-ամյա տարելիցի կապակցությամբ «Հայրենիք» թերթում նրա կուսակցական ընկեր Ս. Տարտունին գրեց. «Լուրջ մարդ էր, պարկեշտ և ուղղամիտ, բարի՝ բառին լայն առումով: Լուռ, սակաւախօս, տեղին միայն խօսող եւ՝ քանի մը բառով միայն: Այո՛, իսկապէս հոյակապ ընկերը 62 տարիներ ծառայեց մեր կազմակերպութեան՝ առանց փառք եւ պատիւ փնտռելու, առանց նիւթական վարձատրութեան ակնկալութեան»:[17]

Հղում

1 «Հայրենիք» օրաթերթ, 29 սեպտեմբերի, 1964, N15934, էջ 1:
2 Mesrobian MacCurdy M., Sacred Justice; The Voices and Legacy of the Armenian Operation Nemesis, with a foreward by Gerard Libaridian, Translations by Arsine Oshagan, New Brunswick (USA) and London (UK), «Transaction Publishers», 2016, էջ 391: «Կոմիտաս» ինստիտուտը (Լոնդոն) պատրաստում է գրքի երկրորդ, լրամշակված հրատարակությունը:
3 Ժողովի մասին ավելի մանրամասն տես Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. Ժողովը (1890-1924), Աթէնք, «Դրօշակի» տպարան, 1988, էջ 138-140:
4 «Նեմեսիս» գործողության մասին մանրամասն տես Գոհար Խանումյան, Սողոմոն Թեհլիրյանը և «Նեմեսիս» գործողությունը», Վէմ համահայկական հանդէս, ԺԱ(ԺԵ) տարի, թիվ 4(68), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2019, էջ 67-84:
5 Mesrobian MacCurdy M., Sacred Justice, էջ 46:
6 Նույն տեղում, էջ 47:
7 Դյորթյոլ, Զորքմարզպան(ք), Զորք-Մարզվան(ք), գյուղաքաղաք Ադանայի նահանգի համանուն գավառակում:
8 Հակոբ Սաչակլյանը Հայոց ցեղասպանության տարիներին եղել է որբախույզ: Նրա մասին մանրամասն տես Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), Եղեռնապատում Փոքրուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթրն, «Հայրենիքի» տպարան, 1924, էջ 480-481: Տես նաև Խաչեր Սարգիսեան, Յօթանասուն տարիներու յուշերս, տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1970, էջ 719-725:
9 Միհրան Մելքոնյանի՝ Դյորթ-Յոլի ինքնապաշտպանության ղեկավարի մասին տես Մելքոն Մելքոնեան, Կեանքի եւ մահուան միջեւ, Բ տպագրութիւն, տպարան «Մշակ», Պէյրութ, 1974, էջ 67:
10 Էլիզա Տեր-Մելքոնյան-Սաչակլյան, Ահարոն Սաչակլյանի կինը: Նրա մասին տես վերջերս հրատարակված հուշագրության մեջ (Eliza Aharon (Der Melkonian) Sachaklian, Eliza; A Memoir of love and Resistance, (Gomidas Institute):
11 Վահան Զաքարյան, ծածկանունը՝ Վազա, «Հատուկ գործի» անդամ, Բեղլիի հայկական հյուպատոսարանի տնտեսական խորհրդական:
12 Համազասպ Բարաղամյան, հայ կամավորական, «Հորիզոն» (Երևան) թերթի թղթակից, «Հայրենիք» (Բոստոն) թերթի խմբագրության անդամ, ԱՄՆ-ում ՀՅԴ ԿԿ քարտուղար: «Հատուկ գործի» մեջ ներգրավված անձ:
13 Զավեն Նալբանդյանը առավել հայտնի է Զարևանդ անունով, որը հեղինակել է «Կրնամ՞ք հաշտուիլ թուրքին հետ», (Պոստըն, 1926), «Թուրքիան և Թուրքիզմը» (1930):
14 Տես J.Derogy, Resistance and Revenge: The Armenian Assassination of the Turkish Leaders Responsible for the 1915 Massacres and Deportations, Preface by Gérard Chaliand, Translated by A. Am. Berrett, New Brunswick (USA) and London (UK), «Transaction Publishers», 1990, էջ 60: Տես նաև՝ Bogosian E., Operation Nemesis. The assassination plot that avenged the Armenian genocide, New York, Boston, London, «Little, Brown and company», 2015, էջ 136:
15 Տես Mesrobian MacCurdy M., Sacred Justice, էջ 129:
16 Տես Mesrobian MacCurdy M., Sacred Justice, էջ 216-219:
17 Ս. Տարտունի, Ընկեր Ահարոն Սաչաքլեանի մահուան տասնամեակին առթիւ, «Հայրենիք», 17 սեպտեմբերի, 1974 թ.:

Թե լույսը մարի, լապտերն իր պատմություններով կլուսավորի

Հասմիկ Գրիգորյան
Լրագրող, Մոսկվա

83-ամյա Ֆելիքս Հովնանյանի փոքր հայրենիքը (ծննդավայր Գյումրիից զատ) Դերսիմի (Թունջելիի մարզ՝ ժամանակակից Թուրքիայում) մայր քաղաք Չմշկածագից ոչ հեռու գտնվող Հազարի գյուղն է, որը թուրքերն այսօր Անիլ են անվանում: Հազարին դրախտի է նման. կարող եք համոզվել համացանցում առկա պատկերների օգնությամբ: Հովնանյանները գյուղում ԶՈՒԼՈՒՄԻՑ առաջ մեծաթիվ էին և բարեկամական կապեր ունեին Հազարիի շատ ընտանիքների հետ: 1915 թվականի կոտորածից քչերը փրկվեցին: Թուրք խորամանկ կառավարությունը Հազարիում վերաբնակեցրեց քրդերի, այլազգիների: Այսօր, եթե Դերսիմ-Թունջելիի մյուս գյուղերում «կարող ես պոռալ, որ հայ ես, ու քեզ ոչ մեկ ոչինչ չի ասի», ինչպես իմ ու Ֆելիքսի ընդհանուր ընկեր, ծագումով դերսիմցի, պոլսաբնակ «դերսիմագետ» Գարո Օլգար Բոյաճյանն է վկայում, ապա այստեղ՝ Հազարիում, ծուռ են նայում հայերին, գյուղի իսկական տերերի ժառանգներին: Երևի վախենում են, թե կվերադառնան...

Փրկվածների ողբերգական պատմությունը մի գրքով չես ավարտի, մի գրքում չես ամփոփի...

Ֆելիքսը ամբողջ մի կյանք տեղեկություններ է հավաքում Հազարիի մասին ու գրեթե ամեն ինչ գիտի: Ընտանիքով ապրում է Գյումրու կենտրոնին ոչ այնքան մոտ՝ Պոլիգոնից ոչ շատ հեռու: Պոլիգոնը «հայրաքաղաքի» հայտնի պատմական վայրերից է: Ռուս-թուրքական և Առաջին համաշխարհային պատերազմների շրջանում այստեղ տեղական սև տուֆից կառուցվել են գեղեցիկ շինություններ, որոնք նախատեսված էին ռուսական զորքերի համար:

1910-ականներին այս շենքերում բացվում է ամերիկյան որբանոցներից մեկը, որտեղ հավաքում են փախստական մանուկներին պատմական Հայաստանի տարբեր շրջաններից: Նրանց թվում հազարեցի Ղազարոսն էր՝ Ֆելիքսի հայրը: Ղազարոսը ծնվել է 1906 թվականին: 1915 թվականի կոտորածների շեմին նրա հայրենի գյուղ է գալիս ալևի առաջնորդ Սեյիդ Ռիզան, որպեսզի հայերին զգուշացնի մոտեցող օրհասի մասին: Քչերն են հավատում, ցավոք... Ղազարոսը տատիկի հետ որոշ ժամանակ թաքնվում է Սեյիդի մոտ: Մի տարի անց տատ ու թոռ համարում են, որ վտանգն անցել է և վերադառնում են գյուղ: Գյուղում միայն ծերեր էին մնացել: Հովնանյան ընտանիքի մյուս անդամները գաղթի ճանապարհներին էին: Տարիներ անց հայտնի դարձավ, որ ասկյարները նրանց նետել են Եփրատի հորձանուտները: Տատի մահից հետո Ղազարոսին հարևան գյուղից մի թուրք բռնությամբ ծառա է վերցնում իր մոտ: Թուրքը, որի

կինը հայ էր, դաժանորեն ծառայեցնում է որբացած տղային, սպառնալիքներով ու ծեծով արգելում հայերեն խոսել: Բայց, քանի որ ոսկու նկատմամբ սերը մեծ էր, համաձայնում է վաճառել նրան: «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ծրագրի շնորհիվ Ղազարոսը ազատվում է գերությունից ու Անդրանիկ զորավարի կամավորների ուղեկցությամբ հասնում Ալեքսանդրապոլի որբանոց: Ֆելիքսը հիշում է հորը՝ իրենց փոքրիկ այգում կանգնած, հայացքն անշարժ՝ դեպի Պոլիգոնը, որտեղ ջարդից, կորուստներից հետո ապրեց, ուշքի եկավ, կրթվեց ընդհուպ մինչև 1926 թվականը, երբ մորաքրոջ աղջիկը գտնում է նրան ու բերում Ոսկեհասկ գյուղ:

- Զարմանում էի՝ ինչո՞ւ է անթարթ նայում այդ շենքերին, ի՞նչ է փնտրում, ի՞նչ է փորձում գտնել,- հիշում է Ֆելիքսը:

Ղազարոսի գրագիտությունը (ամերիկյան որբանոցի կանոնավոր կրթության շնորհիվ) պատճառ էր, որ 20-ամյա անփորձ երիտասարդին նշանակեին կոլտնտեսության ղեկավար: Սովը, բոլշևիզմը մարդկանցից շատերի մեջ արթնացրել էին չկամություն ու նախանձ: Ստոր մատնության և հերիյուրանքների հետևանքով Ղազարոսը այս անգամ հայտնվում է բանտում: Նրան դեպի Սիբիր աքսորից փրկում են մանկատան

ընկերները, որոնք պաշտոնավորվել էին խորհրդային կառույցներում:

Ֆելիքսի հորդոր-խնդրանքով հայրը գրառեց իր հուշերը մահից մի շաբաթ առաջ: Ցավոք, դրանք անավարտ մնացին...

Ֆելիքսի պարտեզից այսօր Պոլիգոնը չի երևում: Տեսարանը փակել են խառնափնթոր շենքերը, որոնք անկանոն «գոյացել են» հետագա ժամանակներում: Համենայն դեպս, այգում կանգնած՝ ինքս փորձում եմ գտնել Պոլիգոնը ու հանկարծ գիտակցում եմ, որ Ղազարոսը հայացքով հայել է ոչ թե Պոլիգոնին, այլ Պոլիգոնից այն կողմ, «կտրել է» Ախուրյանը, սլացել, հասել է Ամասիա, ապա՝ Էրզրում, այնտեղից՝ սարերով ու ձորերով՝ Զմշկածագ ու վերջնակետը՝ Հազարի: Ինչպես Վիքիպեդիան է հուշում՝ ընդամենը ութ ժամ և մեկ ռոպեի ճանապարհ...

Ֆելիքսի պարտեզին նայող բակը տանիքապատ է: Այն սոսկ բակ չէ, այլ լիարժեք թանգարան: Վերջին տարիներին այս բակի համբավը տարածվել է ոչ միայն գյումրեցիների շրջանում: Ղազարոսի թոռը ու Ֆելիքսի որդին՝ Մանուկը, որը մասնագիտությամբ ինժեներ-մեխանիկ էր (Մանուկը հանկարծամահ եղավ երիտասարդ տարիքում, 2022 թվականի գարնանը: Ֆելիքսը շշնջում է. «Ինձ սիրտ եմ տալիս, որ իր տարեկիցներից շատերի պես ժաժքին չզոհվեց, գոնե հասցրեց ապրել, ընտանիք կազմեց, զավակներ ունեցավ, արարեց»), լապտերներ էր հավաքում: Քիչ-քիչ ոչ սովորական այս հավաքածուն մեծացավ, համալրվեց օրիգինալ նմուշներով: Ծանոթ ու անծանոթ, իմանալով Մանուկի զարմանալի «հոբիի» մասին, սկսեցին աշխարհի տարբեր ծագերից նրան ուղարկել լապտերներ: Դրանց «կենսագրությունները» մեկ առ մեկ գիտեն Հովնանյան ընտանիքի բոլոր անդամները, Մանուկի երկու տղաները՝ Սուրենը և Ֆելիքսը, կինը՝ Լիանան: Մանուկը սիրում էր ստեղծագործել իր բակում՝ քարի, փայտի և երկաթի համադրություններ



Հազարի գյուղի քարտեզը

Պապ ու թոռ Ֆելիքսները

ստեղծել: Արհեստի նկատմամբ սերը նա փոխանցեց իր զավակներին, մանավանդ կրտսեր որդուն՝ Ֆելիքսին, որը կանանց զարդերի հրաշալի նմուշներ է ստեղծում: Ավագ Ֆելիքսի վիշտն անփարատելի է, բայց թոռներն ու Հազարիի սերը նրան ուժ են տալիս ու հավատ:

Լապտերների հարևանությամբ պատից կախված է Հազարիի հատակագիծը: Ըմբռնելի ու դիտելի են փողոցները, պարտեզները, լճակը, պտղաստանները, դպրոցն ու եկեղեցին: Գյուղի կենտրոնում լճակն է, շուրջը՝ արտերն ու կալերը... Թոռների հետ Ֆելիքսը շատ հաճախ փողոցից փողոց «քայլում է» Հազարիով:

Այս քարտեզը հիշողությամբ կազմել է Եղեռնից փրկված հազարեցի Վազգեն Անդրեասյանը, որը ամերիկահայ գրող Անդրանիկ Անդրեասյանի զարմիկն էր, Վահան Թոթովենցի աշակերտը՝ Երզնկայում, հետագայում՝ ֆրանսիական երկու հայտնի օդանավերի՝ Շերֆոյի և Կրիֆոնի նախագծողներից ու փորձարկողներից մեկը: «Անդրեասյաններն ու Հովնանյանները ազգակցական կապեր ունեն»,- լրացնում է Ֆելիքսը:

Ֆելիքսը պոլսեցի Գարոյի շնորհիվ կապի մեջ է Հազարիի ալևիների հետ: Նրա խնդրանքով վերջիններս լուսանկարել են գյուղի հին հանգստարանը: Դրանց փորագրություններում Ֆելիքսը փորձում է գտնել ծանոթ ազգանուններ: Ալևիներն իրենք այս փնտրտուքների արդյունքում պարզեցին, որ սերում են Հազարի գյուղի ցեղերից՝ Թաշչյաններից: Իսկ Թաշչյանները բարեկամական կապերի մեջ էին Հովնանյանների հետ: «Letum non omina finit». «Մահով ամեն ինչ չի ավարտվում»,- ասում է լատինական իմաստությունը:

Ֆելիքսի հետ համատեղ մի երազանք ունենք՝ օրերից մի օր այցի գնալ Հազարի... Կարծում եմ՝ իրականանալի երազանք է:

Ցեղասպանութեան գեղարուեստական արձագանգները սփիւռքահայ կերպարվեստում

Մովսէս Ծիրանի
Արվեստաբանութեան դոկտոր

Խօսքը կը վերաբերի սփիւռքահայ այն կերպարուեստագէտներուն, որոնք իրենց բարձրորակ արուեստի գեղարուեստական ուժով կրցած են մարդկութեանը ներկայացնել ցեղասպանութեան արհաւիրքն ու գործած աւերները՝ ըլլայ նիւթական, թէ ոգեղէն արժէքներու պարագային: Ինչպէս՝ Արշիլ Կորքի, Ռուբէն Նաքեան, Երուանդ Քոչար, Էտկար Շահին, Խորէն Տէր-Յարութեան, Լևոն Թիւթիւնճեան, Հովսէփ Փուշման, Արշակ Ֆէթվաճեան, Հայկ Բաղիկեան, Գառզու, Ժանսեմ, Փ. Կիրակոսեան, Կիւվտէր, Զաւէն Խտշեան, Ժան Դարբինեան, Ժան Գազանճեան, Ժան Ասատրեան, Աշօտ Զորեան, Կիւլ, Գեղամ Թազեան, Արթո Չաքմաճեան, Եուրոզ, Պերճ Չաքէճեան, Գրիգոր Նորիկեան և այլն: Շարքը կարելի է աւելի երկարացնել, որովհետև գուցէ չկայ հայ իրաւ արուեստագէտ մը, որուն վրայ հետք ձգած չըլլայ ցեղասպանութիւնը:

Արշիլ Կորքիի (Ոստանիկ Ադոյեան) ստեղծագործական կեանքը լաւագոյնս կրնայ արտահայտել յետ Եղեռնի սերունդի ոգեղէն հայրենիք «որոնելու» տագնապներն ու անոնց անդրադարձը ազգային ու մարդկային խնդիրներու վրա: Ան ծնած է Վանայ լիճի մօտ՝ Խորգոմ գիւղը, 1904-ին: 1915-ին Ոստանիկ կը մասնակցի Վանի ապրիլեան ինքնապաշտպանական կռիւներուն՝ իբրև մարտիկներու օգնական և ըստ ոմանց վկայութեան՝ նաև՝ իբրև դիպուկահար: Այգեստանի անկումէն ետք, ընտանիքով արտագաղթի ընթացքին Իգդիրի մօտերքը կը հանդիպին խումբ մը ֆէտայիներու, որոնք զիրենք ապահով կը հասցնէն Էջմիածին: Քանի մը շաբաթ հոն մնալէ ետք կ'երթան ու կը տեղաւորուին Երևանի թշուառագոյն թաղամասը՝ Կոնտ, ուր մայրը կը մահանայ «պաստիհանին» վրայ անօթութեան հետևանքով: 1919-ին կ'անցնի Թիֆլիս, ապա՝ Պաթում, Պոլիս և Յունաստանի վրայով 1920-ին կը հասնի ԱՄՆ: Նախ կը բնակի Պոսթրն քրոջ՝ Սաթենիկի մօտ, ապա կ'անցնի Նիու Եորք, ուր լուրջ դժուարութիւններու կը հանդիպի: Իր արուեստի հասունացման ու ծաղկման շրջանին վերջ կուտայ իր կեանքին՝ ինքնասպանութեամբ:

Ցոյց տալու համար Արշիլ Կորքիի տեղն ու դերը արուեստի պատմութեան մէջ՝ մէջբերենք Անտրէ Պրէթոնի վկայութիւնը. **«Կորքին Միացեալ Նահանգներու արուեստի պատմութեան մէջ երբևիցէ եղած գեղանկարիչներուն ամենամեծն է և իրայատուկը»**: Իր նամակներէն մէկուն մէջ Կորքի կը խոստովանի. **«...Այս բոլորին համար ես պարտական եմ մեր հայ արուեստին»:**

Կորքին նոր երևոյթ էր, և այդ պատճառով ալ Ամերիկայի արուեստաբանները չկրցան տեղաւորել զինք որևէ «իզմ»-ի մէջ: Պարպարա Ռոզ կը գրէ. «Դեռևս չէ ճշդուած այն հարցը, թէ Արշիլ Կորքի վերջին գերիրապաշտն (Surrealism) է, թէ առաջին վերացական-արտայայտչապաշտը (Abstract-Expressionism):

Ամերիկացի արուեստաբաններէն շատեր, ինչպէս՝ Ճոն Կրահամ, Հարրի Ռանտ, Ճիլիյրն Էյվի և տասնեակէ մը աւելի ուրիշներ, բարձր կը գնահատէին անոր արուեստը, սակայն չէին կրնար հասկնալ զինք, որովհետև ան կ'ուզար իրենց համար անծանօթ տարբեր աշխարհէ մը և օժտուած էր տարբեր անհատականութեամբ ու գեղագիտական ուրոյն համոզումներով: Կորքի կ'առարկէ. «*Մենք մօրս աչքերը փիքասոյական կը համարեն, իսկ հայոց թախիծը՝ բիզանդական կամ ռուսական. երբ կ'ուզեմ անոնց սիպլները, անոնք կը պատասխանեն, թէ այդ ուղղումները փոքր ազգերու յատուկ չափազանցուած ազգայնամոլութիւն են: Այս մէկը կը կապուեցնէ զիս...: Արուեստը ազգայնամոլութենէ վեր է և կը ներկայացնէ համընդհանուր մարդկային աչքը»:*

Ուրիշ տեղ մը ան կը շեշտէ. *«Իմ արուեստը մեր դժբախտ ժողովուրդի ինքնաարտայայտութիւնն է»:*

Այո՛, սփիւռքահայ կայացած կերպարուեստագէտ-

ներէն շատերու արուեստը կը տարբերի միւսներէն և դժուար կը տեղաւորուի որևէ «իզմ»-ի մէջ, որովհետև անոնք էութեամբ **ոգեպաշտ** (hylozoist) են: Թէև ոգեպաշտութիւնը հին աշխարհի մէջ հայութեան մենաշնորհը չէ, սակայն ան խորապէս անթեղուած է հայ ազգային մշակոյթի հազարամեակներու խորքը ու հասած մինչև մեր օրերը: Հակառակ անոր, որ տիրող կարծիքը այն է, թէ Կորքին **«վերացապաշտ-արտայայտչապաշտ»** (Abstract-Expressionism) դպրոցի հիմնադիրն է, բայց իրականութեան մէջ ան ընդոծին ոգեպաշտ (hylozoist) մըն էր: Կորքիի համար ապրող բոյսերէն, քարերէն ու ոսկորներէն աւելի կենսական նշանակութիւն ունէր «**ապրող երազներու**» բնորոշումը, որոնք յիշողութեան ճամբով կը բացուէին իր արուեստին վրայ իբրև տեսիլք, իբրև անցեալի երփներանգ վերապրում: Կորքի կ'ըսէ. **«Մենք կորսնցուցինք մեր գեղեցիկ Հայաստանը, և ես պէտք է վերականգնեմ զայն իմ ստեղծագործութիւններուս մէջ»:** Ահաւասիկ, թէ ուրկէ՞ կը բխի ոգեղէն հայրենիք կերտելու անխուսափելի ցանկութիւնը...

Կորքիի ակնարկութիւնն առաւելաբար Արևմտահայաստանին կ'երթար, որովհետև ան ոչ միայն կ'ընդունէր Խորհրդային Հայաստանը, այլև բուռն կերպով կը ցանկար այցելել այն: Այո՛, սփիւռքահայ արուեստագէտին համար մխիթարանք (ոմանց համար նոյնիսկ հպարտանք) էր Խորհրդային Հայաստանի իրողութիւնը, թէև շատեր կը նախընտրէին Ազատ, Անկախ Հայաստան մը:

Կորքին ամենայն համոզուածութեամբ կը պնդէր. **«Մենք կարճ ժամանակի ընթացքին հարկադրաբար շատ բան տեսանք ու ապրեցանք: Տեսանք թուրքերու ոճրագործութիւնները, կոտորածն ու Եղեռնը, մեր գաղթը, մեր երկրի կործանումը: Ես կը յիշեմ այս բոլորը: Մենք՝ ողջ մնացածներս չենք կրնար այս բոլորին չհակադարձել հնարաւորին չափ մեծ ուժգնութեամբ»:**

Այսպիսով՝ Կորքի ոչ միայն ինքզինք, այլ նաև յետ Եղեռնի ողջ սերունդը յանձնառութեան տակ կը դնէր՝ հակադարձելու **հնարաւորին չափ մեծ ուժգնութեամբ**: Սակայն խօսքը *«ակն ընդ ական»* վրէժխնդրութեան մասին չէ, այլ գեղարուեստական հզօրութեան, ինքնահաստատման և յատկապէս ինքնատիպ ու բարձրորակ մշակոյթի մը պաշտպանութեան և նորի ստեղծման: Այդ ժամանակաշրջանին ԱՄՆ-ի մէջ տիրող կարծիքն այն էր, թէ հայերը անմշակոյթ, թշուառ ու թափառաշրջիկ ցեղի մը մնացուկներն են, և այդ պատճառով ալ զանոնք կ'անուանէին «սոված հայեր» (Starving Armenians): Այս ստորացուցիչ արտայայտութենէն բացի՝ կար աւելի սարսափելի և ուղղակի թշնամական վերաբերումը: Օրինակի համար՝ տիտղոսաւոր ազգագրագէտ մը (կը վարանիմ անոր անունը հոս յիշելու) սնամէջ ամբարտաւանութեամբ կը յայտարարէր. ***«Հայերն ու յոյները շուներ են ու խոզեր: Մեփական ոչ մէկ բան ունենալով հանդերձ՝ ոչ հայրենիք, ոչ տուն, ոչ կալուած, կը փորձեն չենթարկուիլ թուրքերուն»:*** Երբ նմանօրինակ կարծիքներ ու կեցուածքներ կային հայութեան հանդէպ աշխարհի տարածքին (սկսեալ ամերիկեան ու եւրոպական երկիրներէն մինչև Ռուսաստան ու նոյնիսկ Լիբանան), հասկնալի կը դառնայ, թէ ինչու սփիւռքահայ արուեստագէտի ազգային արժանապատուութեան վիրաւորանքը պիտի ըլլար այնքան մեծ և խոր, որ իբրև **բաց վէրք** իր անդրադարձը պիտի գտնէր (թէկուզ ենթագիտակցաբար) իր ստեղծագործութիւններուն մէջ: Զարամիտներու կողքին թէև կային շատ աւելի մեծ թիւով գթասիրտ ու խղճամիտ անձնաւորութիւններ, որոնք նոյնիսկ օգնութեան ձեռք կ'երկարէին հայութեան, սակայն շատերու համար այս մէկը ևս ինչ-որ տեղ տհաճ էր և վիրաւորական, որովհետև **սեփական ազգային ուժ ստեղծելու** և անոր վրայ հենուելու գաղափարը թէև կար, սակայն զայն իրագործելու կամ ծրագրաւորելու գործնականացումը չկար...: Ի դժբախտութիւն բոլորիս՝ այսօր ալ ցանկութիւնը կայ, սակայն զայն իրագործելու ազգային միասնական կամքն ու զայն իրականացնելու միջոցները կը պակսին մեզի:

Արշիլ Կորքի «Տառապանք»

Կորքի և իր ժամանակակիցները քրիստոնէաբար պատասխանեցին այդ հակամարդկային կեցուածքներուն: Ահաւասիկ, թէ ինչու անոնց արուեստի մէջ չկայ վրէժխնդրութիւն և կամ վայրագութեան հրահրում:

Ի հարկէ, այսօր ժամանակները փոխուած են արդէն, և դժուար թէ նման յոռի կեցուածքներ և կամ արտայայտութիւններ տեղի ունենան հայութեան հանդէպ՝ ի բաց առեալ, անշուշտ, մեր «երդուեալ թշնամիներէն»:

«Յիշողութիւնը արուեստագէտին սերմն է»,- կ'ըսէ Արշիլ Կորքի:

Յիշողութիւնը, իսկապէս, սերմի դեր կատարեց սփիւռքահայ բազմաթիւ կերպարուեստագէտներու ստեղծագործական կեանքին մէջ: Անոնցմէ շատեր

Փոլ Կիրակոսեան «Ողբ»

Լևոն Թիւթիւնճեան «Կարմիր դիմակ»

յղացած են նաև Եղեռնին նուիրուած յուշակոթողներ, որոնց մէկ մասը, սակայն, դուրս գալով ցեղասպանութեան պարունակէն, կ՚արտայայտէ **ազատութեան, վերածնունդի** և կամ **ըմբոստութեան** ու **զայրոյթի** գաղափարները: Օրինակի համար՝ Նիու Եորքի Ս. Վարդան եկեղեցւոյ բակին տարածքին Եղեռնի առիթով դրուած են Ռուբէն Նաքեանի և Խորէն Տէր Յարութեանի ստեղծագործութիւնները: Առաջինը կը ներկայացնէ **վերածնունդը,** իսկ երկրորդը՝ **զայրոյթը**: Ռուբէն Նաքեան խաչի փշրուած բեկորները հաւաքելէ ետք շարած է զանոնք բրգաձև՝ իբրև տառապանքի մէջ ջրդեղուած ժողովուրդի մը միասնականութեան ու վերածնունդի խորհրդանշան: Իր հասցէին բարձր գնահատանքներ արձանագրած են բազմաթիւ հեղինակաւոր արուեստաբաններ, որոնցմէ մէկը՝Թոմաս Պ. Հէս, 1962-ին կը գրէր. **«Նաքեան ամերիկեան արդի երէց արուեստագէտներուն մէջ եզակի է... ողբերգականութեամբ»**: Անոր արուեստի **ողբերգականութիւնը** ուժգնօրէն դրսևորուած է շարք մը ստեղծագործութիւններու մէջ: Ինչպէս՝ «**Աստուածներու պարտէզը**», որուն յագեցուած **ողբերգականութիւնը** կը տարածուի առհասարակ համամարդկային հարթակներու վրայ: Եւ ի զուր չէ, որ կը համարուի ամերիկեան «շարժուն քանդակագործութեան» (Action sculpture) հիմնադիրը: Անոր քանդակներէն շատեր զետեղուած են ամերիկեան կարևոր հրապարակներու վրայ և թանգարաններու մէջ Ալ. Քալտրրի և կամ Հենրի Մուրի նման մեծերու շարքին:

Իսկ Խորէն Տէր Յարութեանի յղացքը կը պատկերէ «Ցեղասպանը», ուր պատկերուած է գիշատիչ անգղ մը, որ լափելէ ետք մարդկային մարմին մը կը պատրաստուի յօշոտելու երկրորդը: Անգղը սարսռազդեցիկ ու ահարկու տեսք ունի, ան կը դրսևորէ կեանքը ոչնչացնելու գազանային մոլուցքը՝ արտայայտչական ապշեցուցիչ լարուածութեամբ: Այս բացառիկ յղացքով Խորէն Տէր Յարութեան կ՚արտայայտէ իր ողջ **զայրոյթը** ընդդէմ ցեղասպանութեան ու անուղղակիօրէն **ըմբոստութեան** կը մղէ ակնդիրը: Ան ծնած է 1909-ին **Արևմտեան Հայաստանի Խարբերդ** նահանգի Աշոտաւան գիւղին մէջ:

Եղեռնի դառնութիւնը ցմրուր ըմպելէ ետք, 1921-ին կը հաստատուի ԱՄՆ, ուր կ՚ապրի և կը ստեղծագործէ ցմահ՝ արժանանալով համաամերիկեան ճանաչման և գնահատման: Վաւերականօրէն յանձնառու այս արուեստագէտը իր բարեկամներէն մէկուն ուղղուած նամակի մը մէջ կը գրէ. **«1926-էն մինչև կեանքիս վերջը ես ալ կոուած եմ և պիտի կոուիմ իմ մուրճով ու վրձինով տգէտ ու բարբարոս թուրքին դէմ»**: Ան իրագործած է ազգային-հայրենասիրական բազմաթիւ ստեղծագործութիւններ, ինչպէս՝ «Ռմբաձիգը», իսկ յուշարձաններէն՝ «Վերածնունդը»՝ դրուած Երևանի «Յաղթանակ» այգիին կեդրոնը: «Մուսալեռցին» զետեղուած է Թէլ Աւիւի պետական համալսարանի բակը, որուն տարբերակներէն մէկը կը գտնուի Խորէն Տէր-Յարութեանի ստեղծագործութիւններուն նուիրուած Էջմիածնի թանգարանը, իսկ ուրիշ մը՝ Հայաստանի «Մուսա լեռան» յուշակոթողի ներքնամասին մէջ: Այս առումով, սակայն, իր ամենայատկանշական գործը **«Փոքր Մհերն»** է, որ կը զարդարէ Ֆիլատելֆիոյ պետական պատկերասրահի և Օկիւստ Ռոտենի թանգարանի միջև ինկած «Ֆէրմունդ» զբօսայգին: Այս խմբաքանդակի կեդրոնական կերպարը՝ Փոքր Մհերը՝ սուրը գլխիվար խաչի վերածած՝ յաղթականօրէն կանգնած է քառակուսի պատուանդանի մը վրայ, որու չորս կողմերուն իրագործուած են հետևեալ բարձրաքանդակները՝ **Աւարայրի ճակատամարտը, Հայ մշակոյթի պաշտպանը, Վերջին վերապրողն ու Հայ ազգի ապագան**: Բացի յիշեալ յուշարձաններէն՝ ան ազգային-հայրենասիրական բովանդակութեամբ բազմաթիւ գործեր ունի, ինչպէս՝ «Եփրատի փրփուրները», «Յաղթանակ», «Ցեղասպանութիւններու» շարքը, «Ֆէտային», «Հերոսական Կիլիկեան» «Վերածնունդ» և այլն:

Խորէն Տէր Յարութեան «Վերածնուած Հայաստան»

Եուրոզ «Ցեղասպանութիւն»

Յետ Եղեռնի սերունդէն ուրիշներ ևս կտակած են մեզ ազգային և համամարդկային բովանդակութեամբ թաթաւուն մնայուն արժէքներ, ինչպէս՝ Փանոս Թէրլեմեզեան, Հայկ Բադիկեան, Ռաուլ Հէյկ, Հենրի Լայընն,Սարգիս Խաչատուրեան, Երուանդ Քոչար, Գրիգոր Շիլդեան, Ճորտանս (Ժիրայր Օրագեան), Աշոտ Զօրեան, Ժան Դարբինեան, Ժան Ասատրեան և այլն:

Ի դէպ, հարկաւոր է յիշել, որ մեր ոխերիմ թշնամիները Եղեռնի ընթացքին ոչ միայն սպաննեցին, լլկեցին ու պղծեցին հայ մանուկները, այլև անոնցմէ շատեր առևանգեցին ու թրքացուցին: Այդ մանուկներէն մաս մը կրցաւ ճողոպրիլ ու ապաստանիլ Պոլիս ու վերապրիլ: Ատոնցմէ են Աշոտ Զօրեանն ու Ժան Դարբինեանը: Առաջինը կը հասնի Գահիրէ, իսկ երկրորդը՝ Պէյրութ: Աշոտ Զօրեանը տարբեր առիթներով անդրադարձած է Եղեռնի թեմային, իսկ Ժան Դարբինեանը, որ եղած է Կալենցի, Թէրճանի ու Ժան Ասատրեանի ընկերը (որոնք միասնաբար աշակերտած են Միշլէի), սկզբնական շրջանին ապրելով և ստեղծագործելով «Քարանդինայի» հայ գաղթականներուն մէջ՝ բացառիկ յաջողութեամբ ու բծախնդրութեամբ պատկերած է անոնց կեցաղն ու առօրեան, որոնք գեղարուեստական իրենց արժէքին զուգահեռ ունին նաև պատմական վաւերագրական նշանակութիւն:

Յաջորդ սերունդները թէև ականատեսներէ լսեցին Հայոց ցեղասպանութեան մասին, սակայն անմասն չմնացին անոնց հետևանքներէն: Ինչպէս՝ Գառզուի «Արարատ» վիմատիպներու շարքը, Ժանսեմի՝ Եղեռնին նուիրուած շարքը, Փոլ Կիրակոսեանի «Եղեռն» և «Վերածնունդ» շարքերը, Զաւէն Խտրշեանի «Ազատագրում» և «Վերականգնում» քանդակները, Եուրոզի «Եղեռն» ու «Վերածնունդ» կտաւներն ու անոնց տարբերակները: Ինչպէս նաև Կիւվ, Կիւվտէր, Գեղամ Թազեան, Ժան Գազանճեան, Պերճ Զաքէճեան, Արթո Զաքմաքճեան, Մ. Մազմանեան և շատ շատեր անդրադարձած են այս թեմային. Խորէն Տէր Յարութեան, Փոլ Կիրակոսեան և այլն: Յատկապէս այս վերջինը, որ ամբողջութեամբ երկու ցուցահանդէս նուիրեց Եղեռնի թեմային և անոնց հասոյթը տրամադրեց բարեսիրական նպատակներու: Ունեցած ենք նաև արուեստագէտներ, որոնց ոճն ու ինքնատիպութիւնը պայմանաւորուած են «Եղեռնով»: Ինչպէս՝ Արշիլ Կորքի, Կիւվտէր, Գեղամ Թազեան, Արթո Զաքմաքճեան, Ժան Գազանճեան և յատկապէս Լևոն Թիւթիւնճեանը, որ մէկ կողմէ՝ կը համարուի գերիրապաշտ սերունդի ուրոյն ու ամենակարկառուն դէմքերէն մէկը և միւս կողմէ՝ ֆրանսական արուեստի լաւագոյն կերպարուեստագէտներէն մէկը:

Եւ այսպէս՝ թէև **«ցեղասպանութեան գաղափարը»** լայնօրէն և հանգամանօրէն արծարծած են սփիւռքահայ կերպարուեստագէտները, սակայն միաժամանակ անոնք դրսևորուած են նաև **մարդու էութեան ազատագրման, ոգեղէն հայրենիքի**, **վերածնունդի** և այլ ազգային ու համամարդկային գաղափարներ:

Հայոց ցեղասպանության թեման 1915 թ. մամուլում

Ներկայացվող բոլոր նյութերը քաղված են «Հայոց ցեղասպանության արտացոլումը 1915 թ. մամուլի էջերից» (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու) երկհատորյակի 1-ին հատորից: Խմբագրական կազմ, Երևան, 2018 թ.:

ԱՊՐԻԼԻ 25, 1915 Թ.

«ՀԱՅԱՍՏԱՆ», ՍՈՖԻԱ, ԹԻՒ 12

ԳԵՐԱԳՈՅՆ ՎԱՅՐԿԵԱՆԸ

«Ջարդ չկայ»,- կը պոռայ անընդհատ թուրք կառավարութիւնը:

Թուրք կառավարութիւնը, իր վաղեմի սովորութեան համեմատ, կը ստէ, որովհետև տարակոյս չկայ, թէ իր թելադրութեամբ կը կատարուին ոճիրները:

«Գիւղ ու քաղաք ավազակաբարոյ տարրերով լեցուն են, ալան-թալանը՝ ընդհանուր»,- այսպէս կը տեղեկացնեն Սեբաստիայէն՝ նկարագրելով նաև այն անլուր գազանութիւնները, զորս գործ կը դնեն կառավարութեան գաւառական ներակայացուցիչները:

Թուրքերը կ'ուզեն բնաջինջ ընել հայերը և կը հասնին իրենց նպատակին նոր, աւելի կատարելագործուած միջոցներով: Պատերազմը պատրուակ բռնելով՝ կառավարութիւնը զինաթափ կ'ըներ հայ ազգաբնակչութիւնը, ռեքվիզիցիայի անուն տակ կը կողոպտէր զայն... ու գործ կը դնէր այնպիսի բռնութիւններ, որ ամենահնազանդ տարրերն անգամ չէին կրնար զսպել բողոքի իրենց ճիչը: Ատ է, որ կ'ուզէին թուրք իշխանութիւնները: «Հայերը կ'ապստամբին» ըսելով՝ կը վարվէին անոնց հետ այնպէս, ինչպէս որ ապստամբներու հետ՝ պատերազմի պահուն:

Իսկ այժմ այդ փրօվոքասիոնն ալ աւելորդ կը նկատեն ու պէտք չեն զգար մինչև անգամ վարագուրելու իրենց ոճիրները: Թուրքերու արարքներուն վրայ այլև քօսթրոլ չկայ, հայերը այլև պաշտպան չունին, ու հայկական գաւառներու մէջ սանձարձակօրէն կ'իշխէ թրքական գազանութիւնը, որուն արդիւնքը նուազ զարհուրելի չէ, քան բացայայտ կոտորածը:

էջ 154

ՀՈՒՆՎԱՐԻ 28, 1915

«ՀՈՐԻԶՈՆ», ԹԻՖԼԻՍ, ԹԻՒ 21

ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋ

Թէև թիւրք կառավարութեան կողմից ձերբակալված չեն Խաժակ, Ակնունի և Շահրիկեան, բայց նրանց թոյլ չեն տալիս հեռանալու քաղաքից, և գտնուում են խիստ հսկողութեան տակ:

Պոլսում զգայացունց տպաւորութիւն է արել Սարիղամիշի պարտութիւնը: Թուրքերը սարսափելի կերպով գրգռուած են գերմանացիների դէմ: Գերմանացի և թիւրք սպաների յարաբերութիւններ այնքան լարուած են, որ օրէցօր սպասում են մեծ խլրտումների:

Դաշնակիցների կողմից Պոլիսը գրաւելու դեպքում թիւրքերը վճռել են բոլոր քրիստոնեաներին կոտորել և քաղաքը հրդեհել:

Անտանելի դրութեան մէջ է հայ մամուլը: Ոչ մի խմբագրութիւն իրաւունք չունի թերթը դադարեցնել և պարտաւոր է տպել այն, ինչ որ թիւրք կառաւարութիւնն ինքն է թելադրում և կամ հաղորդում:

Առանձնապէս խիստ հսկողութեան տակ է Դաշնակցութեան օրգան «Ազատամարտը»:

էջ 29

ՄԱՐՏԻ 17, 1915

«ԱՐՄԵՆԻԱ», ՄԱՐՍԵԼ, ԹԻՒ 33

Քոյրեր ունինք մենք Կովկասի մէջ. ինչպէ՞ս կ՚զգան, ինչպէ՞ս կը գործեն: Քաղաքներու, գիւղերու, աւաններու մէջ անոնք կը գործեն: Քաղաքներու մէջ անոնք կը շրջին, կը պրպտեն ամէն տեղ, կը հաւաքեն շատ բաներ, կը պատրաստեն վիրակապեր, կը հանգանակեն դրամ և ամէն ինչ, ամէն ինչ, որ պէտք է, որովհետև եղբայրներ ունին անոնք արիւնին մէջ, իսկ քոյրեր ու մայրեր՝ ձիւնին տակ…

…Ինչ փառաւոր է հայ կիներու պատմութիւնն անցեալին մէջ. Ինչ անձնազոհ դիւցազնուհիներ ունեցած ենք: Ան մէզ կը նուիրէ քաջութեան տիպար Տիգրանուհիներ և առաքինութեան տիպար Աշխեներ, և դեռ այսօր Կովկասի մեր քոյրերէն բազմութիւններ հիւանդապահուհիներ են պատերազմի դաշտին վրա…Անոնք կին են ու կը կռուին ու կը վիրավորուին կամ կը բուժին ու կ՚աշխատին, անընդհատ, որովհետև Հայաստանը իրենցն է…

էջ 96

ՄԱՐՏԻ 24, 1915

«ԱՐՄԵՆԻԱ», ՄԱՐՍԵԼ, ԹԻՒ 34

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՄԷՋ

Թիւրքիայի հիւպատոս Ռաղրպ պէյ, 70 ասքեարների գլուխն անցած, յարձակուեցաւ Ուրմիայի ամերիկեան միսիոներների տան վրայ, ուր 1500 օրթոտոքս քրիստոնեաներ ապաստանած էին: Հիւպատոսը տունէն դուրս հանեց 3 քահանայ և 2 սարկաւագ, որոնք փողոցները պտըտցունելով և անոնց վրայ նախատինքներ տեղալով՝ անգթօրէն ծեծել տուաւ: Թիւրք հիւպատոսը միսիոներների տան բակին մէջ կախաղան մը կանգնել տուաւ՝ միսիոներները կախելու համար:

էջ 102

ՄԱՐՏԻ 19, 1915

«ՀՈՐԻԶՈՆ», ԹԻՖԼԻՍ, ԹԻՒ 62

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵՒ ԵՐԿՐԻ ԱՐԴԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Գաղթականութիւնը ինչպէս պատերազմի ընթացքում, նոյնպէս և գաղթի ժամանակ ենթարկուեց աննկարագրելի և անվերականգնելի կորուստների: Նրա կորուստը երկու տեսակի է. մէկը՝ բարոյական և միւսը՝ տնտեսական: Զրկուելով սեփական տնտեսութիւնից, կտրուելով իր տանից և մտնելով օտար երկիր՝ նա ստիպած եղաւ ձեռք մեկնել մի կտոր ցամաք հացի: Նա մուրաց և պիտի մուրայ, ով գիտէ՝ որքան ժամանակ...

Անցնում ենք վանքի բակով, այնտեղ շոր և հաց են բաժանում: Պատի տակ՝ արև կողին, կանգնել է մի պառաւ մի քանի 5-6 տարեկան տղաների հետ: Ոչինչ չի ուզում ստանալ: Հարցնում ենք.

- Նանէ, որտեղից ես:

- Խօշեանցի: Իսկ այս փոքր երեխաները թոռներս են: Տղաներիս սպանեցին, հարսներիս տարան, և ես մնացի այս փոքրերի հետ:

- Ինչո՞ւ չես գնում՝ մի բան ստանաս երեխաների համար:

- Էհ, էսպէս եք տեսնում ինձ, այս կոտրուած ձեռքերով քանի՞-քանի՞ մատակներ, կովեր, ոչխարներ եմ կթել, օրական քանի՞-քանի՞ մարդկանց ընդունել, սեղան դրել և ուրախ, գոհ ճամբել: Այժմ կորցրի բոլորը և ոչինչ չեմ ուզում ստանալ:

Ընկերներիցս մէկը փսփսում է ինձ. «Ինչպե՞ս կսկիծից չի մեռել պառաւը»: Լսում է նա, աչքերը կայծակի պէս փայլատակում են և գոռում է. «Ո՛չ, պիտի ապրեմ, պիտի ապրեմ…»:

էջ 97-98

ԱՇԽԱՏԱՆՔ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԱՊՐԻԼ 2, 1915

«ՄՇԱԿ», ԹԻՖԼԻՍ, ԹԻՒ 67

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔ ՊՐՕՖԵՍՕՐԻ ՀԵՏ

Դժբախտաբար, ժամանակի տրամադրութիւնը ու թերթի սուղ էջերը թոյլ չեն տալիս ինձ մի առ մի գրի առնել Պոլսից ստացածս տպաւորութիւնները: Ուզում եմ, սակայն, ընթերցողների հետ բաժանած լինել գոնէ Պոլսի թիւրքերի մասին իմ ունեցած մի քանի ծանօթութիւնները:

Ստամբուլի թաղամասերում «թիւրքի օջախ» անունով մի մեծ ակումբ կայ: Այդ ակումբը բազմաթիւ մասնաճիւղեր ունի Թուրքիայի այլևայլ վայրերում և մեծ հովանաւորութիւն է գտնում իթթիհադի, ինչպէս և կառավարութեան կողմից: Ակումբի նախագահն է երիտասարդ իթթիհադական, օսմ. համալսարանների պրոֆեսօր Համդուլլահ Սափօ էֆենդին:

Ամենից առաջ ես ուզեցի իմանալ, թե ինչ է նրանց ընկերութեան նպատակը:

- Ազգային ոգու բարձրացումը, – պատասխանեց նա,- մեր բոլորի իդէալն էլ պանթիւրքիզմն է. խնդրեմ, չը շփոթէք ասածս պանիսլամիզմի հետ, որի համոզված հակառակորդն ենք մենք… Մենք այժմ աշխատում ենք, որ թիւրք հասարակութիւնը մի անգամ ընդմիշտ զանազանել կարողանայ կրօնը և ազգութիւնը. մենք ուզում ենք, որ թիւրքը իմանայ, թէ արաբն ու քիւրդը օտար են իր համար. ընդհակառակը, նա պէտք է սիրի կովկասեան թիւրքին, չէ՞ որ վերջինս իր արյունակիցն է, իր ազգակիցը:

- Բացի այդ,- շարունակեց Սափօ էֆենդին,- նրան ցոյց ենք տալիս նրա կողքին ապրող հայերին ու յոյներին ու ասում ենք. «Տե՛ս, թի՛ւրք մարդ, երկիրը քոնն է, բայց նրա հարստութիւնը շահագործողը օտարներն են, մեր վաճառականութիւնը ու արհեստները նրանց ձեռքում են: Նայի՛ր նրանց անթիվ դպրոցներին, աշխատի՛ր հասնել նրանց»:

Ս. Ոսկերչեան
էջ 120-121

ՄԱՅԻՍ 9, 1915

«ԱՇԽԱՏԱՆՔ», ՎԱՆ, ԹԻՒ 16 – 215

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Քաղաքացիներ, դարերու ստրկութեան և քաղաքական ճնշումներու վախճանն է, որ մենք կ'ապրինք այս օրերուն, հայ ժողովուրդի շինարար և ստեղծագործող ոգիի ծնունդն է, որ մենք կը տօնենք այժմ:

Ռուս զօրքերու հրամանատարը՝ գեներալ Նիկոլան գնահատելով Վասպուրականի հայ ժողովուրդի հերոսական ջանքերը թուրք կառավարութիւնը անզօր դարձնելու իր ազգասպան քաղաքականութեան մէջ և հաւանելով հայ ժողովուրդի ազգային կուլտուրական ձգտումները՝ բարեհաճեցաւ 7 Մայիս, 1915, համար 16 մասնաւոր հրամանագրով ինձ նշանակել քաղաքի և շրջանի կառավարիչ և կազմակերպել նոր գործը՝ իր բոլոր ճիւղերով:

Այսօր արդէն կազմակերպուեցան ոստիկանական, դատական, գիւղատնտեսական-գաղթականական, քաղաքական, քաղաքապետական և այլ վարչութիւններ:

Ասով կը յայտարարեմ ամբողջ ժողովուրդին, որ նոր կառավարութիւնը կազմակերպուած ըլլալով՝ անհրաժեշտ է բոլոր գործերու համար դիմել նոր կառավարութեան յանձնախումբերուն՝ քաղաքի և շրջակայքի մէջ բնականոն վիճակ ստեղծելու համար:

Ներկայ պատմական պատասխանատու օրերուն մէջ հայ ժողովուրդը միայն մէկ նշանաբան պիտի ունենայ–համախմբուիլ ամբողջ եռանդով կառավարութեան շուրջը՝ վերակազմակերպելու համար կեանքը քաղաքի ու շրջանի մէջ, արժանի լինելու քառորդ դարէ աւելի մղած պայքարի մէջ ընկած հերոսներու յոյսերուն և յիշատակին ու միշտ բարձր պահելու համար հայ ազգի կուլտուրական պաշտօնի գիտակցութիւնը Փոքր Ասիոյ այս ծայրագաւառին մէջ:

ԻԴԵԱԼԱԿԱՆ
ԱՄՍՕՐ ԿԱՐ
ԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ
ԼՕՀՈՒՄ ԵՆ
ԳԵՂԵՑԻԿ
ԾԻՎՈՒՄ ԵՆ

ՄՇԱԿ

ՄՇԱԿ

Մայիսի 1-ից մինչեւ տարեվայ վերջը 7 բուրլի:

Ռուս գեներալը մեր այս յոյսերու լիակատար գիտակցութեամբ էր, որ հայ ժողովուրդի և իմ հանդէպ ցոյց տուաւ այդ մէծ վստահութիւնը:

Քաղաքացիներ, ձեզ կը մնայ մեր այդ հաւակնութեանց և յոյսերուն ընդառաջ գնացող յաղթական բանակի և գեներալի վստահութիւնը բացարձակապէս արդարացնել և ավելի պատրաստ գտնուիլ:

Վանի շրջանի կառավարիչ
1915, մայիս 8
Արամ
էջ 199

«ԱՇԽԱՏԱՆՔ», ՎԱՆ, ԹԻՒ 20-219

ՏԻՏԱՆՆԵՐՈՒ ԿԱՐԱՒԱՆԸ

ՆՋՈՎԱԾ ՃԱՄԲԱՅ, ԴՈՒ ՎԱԽՃԱՆ ՉՈՒՆԻՍ...
Ա. Ահարոնեան

Երեսնօրեայ դիւցազնական կռիւէն վերջ, երբ մեր կամաւոր եղբայրներու եւ ռուսական զօրքերու բանակները հասան Վան՝ մենք պահ մը այլեւս հայութիւնը փրկուած ու ազատագրուած կարծելով՝ ինկանք խանդավառութեան մէջ... անդին հայկական նահանգներու հայ ազգաբնակչութիւնը կը խողխողուի, կը մորթոտուի, կը խաչուի, մորթազերծ կ'լլայ եւ դեռ ով գիտի ինչ անլուր եւ զգայացունց տանջանքներու կ'ենթարկուի եւ տակավին պիտի ենթարկուի օսմ. Շեյթաններու ձեռքով:

Հայաբնակ նահանգներէն դեռ որոշ լուրեր չկրցինք առնել թէեւ, բայց Պօլսոյ զանգուածային ձերբակալութիւնները՝ պատրիարքէն սկսեալ մինչեւ վաճառականները, բժիշկները ու դեղագործները..., ահավոր խորխորատ մը կը բանան մեր առջեւ, սուգերուն սուգն է ասիկա մեզի համար...

Մեծամասնաբար մեր գաղափարի ու մտքի հսկաներն են որոնք ձերբակալուած են. Տիտաններու կարաւանն է որ կը մեկնի: Պիտի վերադառնա՞ն անոնք Գոնայէն, շեյթանները զանոնք ազատ պիտի ձգե՞ն:

Ըսէք խնդրեմ, վերադարձա՞ն Վռամեան, Իշխան եւ ընկերները, Սօլախեան, Բրուտեան, Ասօ եւ ընկերները:

Կարաւանը մեկներ է արդեն...

ԱԿՆՈՒՆԻ (Խ. Մալումեան), ան հայութեան առաքեալն ու պատգամախօսն է որ կը շրջի աշխարհէ-աշխարհ իր հասակագեղ բաժով կը կանգնի եւրոպական ոստաններու եւ գլխավոր քաղաքներու մէջ՝ Ցեղին ցաւերը պատմելու, Ցեղին ցաւոտ վէրքերը բանալու ու ցուցանելու անոնց:

ԽԱԺԱԿ, թունդ կուսակցական եւ կարող ուսուցիչ պրոպականտիստն է ան:

ՇԱՀՐԻԿԵԱՆ, ալեզարդ պայքարող, որ վերջերս մանաւանդ, թուրք պետական կազմը, հասկացողութիւնն ու մտայնութիւնը քննադատելէ եւ դատապարտելէ ոչ վախեցաւ ու ոչ ալ քաշուեցաւ:

ՍԻԱՄԱՆԹՕ, որ հայ դիւցազներգութիւնը իր մարմարակերտ մուրճովը քանդակեց: Մեր հերոսները անմահացուց իր բոցավառ երգերուն մէջ մեր սմքած ու մոխրացած ավերակներուն պատկերները նոյնութեամբ մեզի հասցուց:

ՋԱՐԴԱՐԵԱՆ, «Ազատամարտ»ի ամէնէն կարող խմբագիրներէն, գաւառական ամենէն սիրուած գրագետը:

ՎԱՐՈՒԺԱՆ, ցեղին ու նոր սերունդին ամենէն աւելի սիրելի քերթողն է, հասուն իր զարգացումով, հասուն իր տաղանդով:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ, որ հայ երաժշտութիւնը ստեղծեց, բնաշխարհի սրտահոյզ երգերը հաւաքեց, մոռացութեան մատնուած այդ նշխարները գուրգուրալով ժողովեց, ձայնագրեց, որոնց կարգին կրօնական երաժշտութիւնն ալ իր բարձրութեան հասցուց: «Գուսան» մեծ խումբը պատրաստեց. Շրջեցաւ երկրէ-երկիր, քաղաքէ-քաղաք եւ ամէնուն հիացում ազդեց:

ՄՈՒՐԱՏ, Պարլամենտի կարեւոր երեսփոխաններէն եւ մեր բազմաչարչար վետերանն է:

«Վարդգէսն ալ չկրցաւ համոզել տեսնելու իրաւունները»:

Ան ալ ձերբակալուած է, իրենց աչքին փուշը: Ա՞ն՝ որ իր ճառերով պարլամենտը թնդացուց, տառապած ժողովրդի ծով կարիքները բացաւ այդ քարսիրտներուն առջեւ, խարազանեց ու դատափե-

տեց անիրաւութիւններն ու ոճրագործութիւնները, տէր կայնեցաւ տառապած ու զրկուած հայուն, թէեւ սրիկաները խցեր էին իրենց ականջները…

Հապա ո՞ր մեղքերու համար ձերբակալուած են մեր չէզոք գրագէտներեն՝ Ա. Անտոնեան, Ե. Օտեան, Մելքոն Կիւրճեան եւ այլն ինչու համար վար դրուած են նոյնպէս պահպանողականներ էն՝ Բ. Քէշեան եւ տօքթ. Տաղաւարեան, Տիգրան Քէլէկեան եւ այլն:

Համիտեան շրջանին իսկ այս տեսակ անլուր հալածանքներու, կոտորածի եւ ազգային պատիւը ոտնատակ ընելու պարագաներուն հանդիպեցանք: Օսմ. Կառավարութիւնը – բայց վայ անոր որ այս տեսակ տէրէպէյութեան կառավարութիւն անուն կուտայ – ազգին ներկայացուցիչ պատրիարքը եւ իր երէկի հավատարիմ նախարարներէն Ոսկան էֆ. Մարտիկեանն ալ վար դրած է: Եւ դեռ ինչ գիտենք, ինչեր ըրած է Պոլիս և այլուր, ինչ դիւային տեսարաններ կատարած են:

Ուր պիտի հասնենք այսպէս, այս սոսկալի գահավեժ անկումներով:

«Նզոված ճամբայ, դու վախճան չունիս…»:

Վէսպեր
էջ 236-237

ՕԳՈՍՏՈՍԻ 29, 1915

«ՀՈՐԻԶՈՆ», ԹԻՖԼԻՍ 1915, ԹԻՒ 19

ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս ահարկու աղէտներէն, կոտորածներէն ու համաճարակէն յետոյ, հազարաւոր տարիների աշխատանքով ձեռք բերուած տնտեսականի բացարձակ քայքայումէն յետոյ և, որ ամենէն ծանրն է, մեր անցեալ մշակոյթի փառաւոր ու չքնաղ կոթողների ոչնչացուելէն յետոյ շատ բնական էր, որ գտնուին մարդիկ, որոնք ըսէին. «Թահո՛, էլ նորի՞ց»: Բարեբախտաբար, նրանց կողքին կը գտնուին ուրիշներ՝ ոչ փոքր թով, որոնք առանց ուտոպիստ ըլլալու՝ կը հաւատան այս արնաքամ ազգի ապագային. դրանցից մին ալ ես եմ:

Տաճկահայ զանգւածի այն բեկորները, որոնք մեզ հասան թօշնած ու սնաւոր, ազգի խնամքին ձգեցին քանի մը հազար որբեր, որոնք մեր յոյսն են, ի միջի այլոց, և մեր լաւատեսութեան աղբիւրը: Ատոնք են, որ պողպատէ հիմերն են լինելու այն սրբազան աւերակներին, որոնք մեր ազգային գոյութեան խարիսխն են, հետևապէս և մեր պաշտամունքի առարկան: Որբերի մասին հետևեալ առաջարկութիւններս հասարակութեան ուշադրութեան կը յանձնեմ:

Կոմիտէ մը պէտք է կազմել՝ միմիայն որբերն ապրեցնելու ու նրանց դաստիարակելու խնդրով զբաղող: Այդ որբերի համար եղած հաստատութիւնները պէտք է բացառաբար հայ միջավայրի մէջ հաստատել: Որբերը չպէտք է ցրել այս ու այն հաստատութիւնների ու ընտանիքների մեջ, ուր նրանք տոհմային դաստիարակութենէ տարբեր կրթութիւնով մը մեծնան ու ապագային աւերակների երկիրը վերադառնալու անընդունակ ըլլան:

Կիրակի, Օգոս. 24-ին, պ. Տիգրան Նազարեանի այգիէն հայ կոյսեր 2 որբեր վերցրին՝ անկասկած, ազնիվ զգացումներէ թելադրեալ: Կան անհատներ և ընտանիքներ, որոնք նոյնպէս կ'ուզէին որբեր վերցնել: Այս կերպ օգնութեան հասնելու սիստեմը սխալ է և կորստաբեր: Նախ՝ նրանց պէտք է տալ աշխարհիկ դաստիարակութիւն մը, աշխատել, որ նրանք բաժան-բաժան չլինեն ու, եթէ հնար է, Արագածէն անտին բնակեցին:

Հայրենակիցնե՛ր, որբերի խնդիրը ամենակարեւոր խնդիրներէն մէկն է: Գթալու կամ զգայնոտութեան ողորմելի միջոցներ չեն կարող ծով կարիքին բաւարարութիւն տալ ու նպատակայարմար ալ չեն: Եթէ չենք ուզեր, որ խաչ մը քաշեն ներկայ հայութեան վրայ, պէտք է կատարենք պարտքերնիս սիստեմով ու անյապաղ:

Փ. Թերլեմեզեան
(նկարիչ)
էջ 579 -580

ՕԳՈՍՏՈՍԻ 29, 1915

«ՀՈՐԻԶՈՆ», ԹԻՖԼԻՍ 1915, ԹԻՒ 194

ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԿՈՏՈՐԵՆ

Թուրքիոյ հայաջինջ քաղաքականութիւնը նոր չէ: Այսօրուայ հայկական կոտորածները շարունակութիւնն են նախորդ նախճիրների:

Յայտնի է, որ ամէն անգամ, երբ Թուրքիոյ հայերը չկարողանալով տոկալ իրենց վրայ կատարուած բռնութիւններին ու զուլումներին՝ արդարութեան և իրաւունքի անունով մի փոքրիկ շարժում են ըրեր, անմիջապէս ենթարկւեր են սրի ու եաթաղանի հարուածներին և շատ զոհեր են տուեր:

Իսկ հողային հարցը: Ո՞ր թիւրքը, քիւրդը, պէկն ու աղան, նոյնիսկ պաշտօնեաներէն շատերը չէին յափշտակեր հայի հողն ու տունը, և Թուրքիոյ մէջ ո՞ր քաղաքն ու գիւղը հայերը հողային վէճեր ու բողոքներ չունէին յափշտակիչների դէմ: Եւ սակայն թիւրքական «արդարադատութիւնը» երբևիցէ ընդունե՞ր է հայի իրաւունքը, ընդհակառակը, իրաւատէր հայը միշտ բացասական պատասխան է ստացել:

Յիշենք Պալքանեան վերջին պատերազմէն յետոյ հայերի ըրած ջանքերը իրենց վիճակը բարելաւելու նպատակով: Ով ապրած է Թուրքիոյ մէջ, նկատած կը լինի, թէ այդ բոլորն այնքան թոյն կուտակած էին թիւրքերի սրտի մէջ: Եւրոպական պատերազմի ծագումով անոնք իրենց թոյնը թափեցին անզէն հայ ժողովրդի գլխին՝ չխնայելով ոչ սեռի, ոչ հասակի, և կարծեցին, թէ այդպիսով արդէն իրագործած են իրենց վաղուցայ սնուցած երազները. բնաջինջ ընել հայութիւնը, մէկ հարուածով վերջ տալ եւ Հայկական հարցին, եւ հողային խնդրին:

Արդ, ո՞վ է պատճառը թիւրքահայերի ներկայ ջարդերին. կամաւորական խմբե՞րը, Պողոս փաշա՞ն, Խրիմեան Հայրի՞կը, Ներսէս Վարժապետեա՞նը, հայոց կաթողիկոսնե՞ր, առաջնորդնե՞ր և յայտնի հասարակական գործիչնե՞ր: Թիւրքահայերի բոլոր դժբախտութիւնների և կոտորածների պատճառն է հայի գոյութիւնը մահմեդական անհամբերող միջավայրի մէջ, և քանի որ հայը այնտեղ անհրաժեշտօրէն ստիպուած է պայքարել իր գոյութեան համար, կոտորածները դարձել են անխուսափելի, մինչեւ կամ կը փշրուի թիւրքի սուրը, կամ անոր հակազդող ուժ մը կը ստեղծուի:

Աքել
էջ 580

ՕԳՈՍՏՈՍԻ 27, 1915

«ՀՈՐԻԶՈՆ», ԹԻՖԼԻՍ, ԹԻՒ 192

«ՍԱՄՆՈՅ ՀՈԳԵՎԱՐՔԸ»

Սասունն ընկա՛ւ… Հայկական դիմադրութեան միջնաբերդն է՛լ խորտակուեց թշնամու մոլեգին հարուածների տակ: Տալորիկն ու Անտօքն է՛լ փլուեցին՝ իրենց տակ թողնելով այնքան յոյսեր ու երազներ: Չվարագուրենք աղէտը: Նստած ենք Թիւրքահայաստանի աւերակների վրայ: Շնորհիւ մի ցած հակառակորդի աննախընթաց վայրագութեան: Շնորհիւ նաև մեր սեփական ապիկարութեան, անտարբերութեան:

Ինչո՞ւ չենք կարող աւելի երկար դիմադրել: Ինչո՞ւ այդպէս շուտ քարուքանդ լինի դիւցազնական լեռնավայրը, որ կարող էր իր անառիկ դիրքերի մէջ պաշտպանուել ամբողջ տարի: Նրա դէմ տեղացին համիդեան ռեժիմի ամենադաժան հարուածները և ամէն անգամ վիժեցին:

Ինչո՞ւ չլսեցին հայ ըմբոստներին: Ինչո՞ւ այնքան տարիներից ի վեր «ձայն բարբառոյ» մնացին նրանց աղերսական յորդորները՝ զինել Սասունը, հասցնել բաւականաչափ զէնք ու ռազմամթերք հայ քաջարի լեռնականներին, որ վաղուց ընտելացած էին կռուի արուեստին և պէտք չունէին դրսի մարդկանց զինուորական աջակցութեան:

Ինչո՞ւ, ինչո՞ւ և ինչո՞ւ … Նոյն հարցումներն են, որ տալիս ենք մի տարուց ի վեր տխուր ու տաղտկալի միօրինակութեամբ, և որոնց պատասխանը նոյնն է.

- Հայկական անհեռատեսութիւնը:

Մի տարի առաջ, երբ կազմակերպութիւնը, նախատեսելով գալիք աղէտները, պաղատագին կոչ էր անում հայ հասարակութեանը՝ օգնութեան գալ երկրի ժողովրդին զենքով, դրամով, նրան պատասխանում էին.

- Ինչ հարկ կայ զինելու և վտանգելու ժողովուրդը, արդէն հայկական խնդիրը լուծելու վրայ է դիւանագիտական խաղաղ ճանապարհով: Նուպար փաշան հակառակ է «զենք մտցնելուն»: Եւ այլն:

Նուպար փաշան իր ժողովրդի դահիճը չէր: Նա չէր կարող հակառակ լինել հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան: Բայց մեր չէզոք հասարակութեանը պատրուակներ էին պէտք՝ արդարացնելու իր ազգադաւ անտարբերութիւնը:

Եւ ահա արդիւնքը: Ռազմիկները պատուով կատարեցին իրենց պարտքը, կորիւններն ու Տիգրաններն ընկան օրհասական կռիւներում՝ շրջապատուած հերոսութեան ու մարտիրոսութեան լուսապսակով, իսկ հասարակութիւնը ամօթով մնաց համազգային այս վիթխարի փորձութեան մէջ:

Սասունն ընկա՛ւ: Ամիսներից ի վեր պարզել էր նա ինքնապաշտպանութեան դրօշը՝ թիւրք-քրդական յորձանքը յետ մղելու և իր գոյութիւնը պաշտպանելու համար: Եւ մօտ էր նա մի վայրկեան իր փրկարար նաւահանգստին. ռուս յաղթական բանակը մեր կամաւորների հետ մտել էր Մշոյ դաշտը: Մի գրոհ ևս, և ազատ էին Մուշն ու Սասուն: Այդպէս չեղաւ, սակայն: Սասունը նորէն ձգուեց իր բախտին և ընկաւ գուցէ անհաւասար մենամարտի մէջ: Քարուքանդ եղաւ հայ արծիւների հինաւուրց բոյնը:

Ընդմի՞շտ: Ո՛չ, չենք հաւատում: Ինչպէս և չենք հաւատում Զեյթունի մահաւան, Հաճնի, Մարաշի, Չոք-Մարզւանի, ամբողջ Կիլիկիայի, ամբողջ Հայաստանի իսպառ ու անդարձ նահատակութեան: Մենք դարձեալ չենք յուսահատում: Անգամ եթէ Սասունն իսպառ դատարկուած է և քարուքանդ , որ խիստ անհաւանական է, նա դարձեալ յարութիւն կառնէ մոխիրներից, կը կանչէ իր ցիր ու ցան զաւակներին:

Նստած ենք, այո՛, աւերակների վրայ, բայց մի օր կեանքը, անտարակոյս, նորէն պիտի ծլէ նրանց մէջ, վերածնութեան անիւը նորէն պիտի ակօսէ Անտօքի ու Փոփո քարի բարձունքները, և «Տալվորիկի» երգը իր առնական շեշտերով վերստին պիտի հնչէ այն վայրերում, ուր գաղափարը հազար անգամ խոշտանգուել է և հազար անգամ յաղթանակել:

Միք. Վարանդեան
էջ 570-571

Ինչպես վարվել անցյալի և հիշողությունների հետ

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Նախ՝ նկատենք հետևյալը. քաղաքական գործիչները և վերլուծաբանները մեծ եռանդով քննում են քաղաքական գործընթացները, իսկ սոցիոլոգներն ու հոգեբանները փորձում են ինչ-որ կերպ հասկանալ ներհասարակական վիճակները, և միայն մարդ էակն է մնում ստվերում, չվերծանված: Հիմա հարց՝ ինչպե՞ս կարող է քաղաքական և հասարակական իրականությունը հասկացվել կամ գիտակցվել, եթե ուսումնասիրված չէ դրա արարողը, գլխավոր դերակատարը: Պարադոքս է. մարդն ինքն իրենից գլուխ չի հանում, բայց մտածում է, թե հասկանում է կյանքը, հասարակությանը, պետական ու քաղաքական հանգամանքները: Պատահական չէ, որ մեծ թվով «ազգափրկիչներ» հեռու չեն գնում էկրաններից ու իրենց ֆեյսբուքյան էջերից, «պետք է»-ների տարափ են տեղում լսողների գլխին: Մեր դեպքում նույնն է: Եթե ուզում ենք հասկանալ ազգային հանրության վերաբերմունքը անցյալի հանդեպ, պետք է նախ հասկանանք մեկ մարդու հարաբերություններն իր էության, իր անցյալի, ապրած կյանքի և հիշողությունների հետ: Կա մի տարածված «մտակաղապար», որը շատ հաճախ հիշեցվում է. «Իմաստավորենք անցյալը, որպեսզի ճիշտ կառուցենք ապագան»: Արդեն մի քանի հազար տարի մարդկությունը իբրև թե իմաստավորում և նույնիսկ գերիմաստավորում է անցյալը, բայց այդպես էլ չի կարողանում ունենալ տանելի ներկա և ապագա: Կրոնները այդպես էլ չկարողացան մարդուն դարձնել խաղաղ, սիրող, ներդաշնակ, իսկ գաղափարախոսությունները այդպես էլ չեն ստեղծում արդար ու համերաշխ հասարակություն: Նույնիսկ հակառակը՝ քողարկված կամ բացահայտ կերպով փառաբանվում են անցյալի արյունարբու բռնապետները՝ Հուլիոս Կեսարը, Ներոնը, Չինգիզ խանը, Նապոլեոնը, Հիտլերը, Ստալինը և այլք: «Սպանի՛ր, այլապես քեզ կսպանեն, տիրի՛ր, այլապես քեզ կտիրեն» բանաձևը դարեր շարունակ եղավ մարդկության գերիշխող ուղենիշը և այսօր շարունակում է մնալ նույնը: Սա, իսկապես, ակնհայտ է: Զարմանալի բան է. աշխարհի բոլոր կողմերում մարդիկ գիտեն, թե ովքեր են Հիսուսը, Բուդդան, Կոնֆիցիուսը, Մուհամմեդը, Լաո Ցզին և մյուս հոգևոր գագաթները, բայց քիչ թվով մարդիկ են հետևում նրանց խոսքերին ու պատգամներին: Իսկ օրինակ՝ Մաքիավելու անունը շատ քչերն են լսել, բայց ողջ մարդկությունը անշեղորեն հետևում է նրա՝ «հաղթում է միայն ուժեղը, մրցակցի՛ր, տիրի՛ր և շահագործի՛ր» գիշատչական փիլիսոփայությանը: Հիմա գանք անցյալի

խնդրին: Մենք սովոր ենք ժամանակը բաժանել անցյալի, ներկայի և ապագայի: Բայց իրականում այս բաժանումը մեր մտքի սահմանազծումն է, որովհետև անցյալն այլևս չկա ոչ մի տեղ՝ բացի մեր հիշողություններից, իսկ ապագան գոյություն ունի միայն մեր երևակայության մեջ: Ուրեմն ժամանակ ասելով՝ պետք է հասկանալ միայն ներկան: Սա, կարծես թե, ճշգրիտ բանաձևում է: Գերմանացի մեծ փիլիսոփա Էմմանուիլ Կանտը մի նուրբ դիտարկում է արել, այն է՝ «Եթե մարդը մի բան հիշում է, ապա դա նշանակում է, որ անցյալը դեռ չի ավարտվել…»: Անցյալը լինի ուրախ, թե ոչ այնքան, միևնույն է, այն ուղեկցելու է մարդուն: Միամտություն է կարծել, թե հնարավոր է հրաժարվել անցյալից: Ո՛չ տեսականորեն, ո՛չ էլ գործնականում դա անհնար է անել: Անցյալը ավարտված պատմություն է, այն ենթակա չէ ո՛չ բարենորոգման, ո՛չ խմբագրման և ո՛չ էլ առավել ևս՝ մոռացության: Դա ուղղակի անհնար է, դա թույլ չի տա ո՛չ անձնական և ո՛չ էլ ազգային «էգոն»: Անցյալը շատ նման է այն սնունդին, որը մարդը ընդունել է, բայց, ասես, դեռ չի մարսել: Երբ օրգանիզմը այն մարսում է, որևէ խնդիր չկա: Բայց շատ հաճախ չմարսվող կերակուրը դառնում է իսկական տառապանք օրգանիզմի համար: Դա նույն սննդային ալերգիան է: Այդպես էլ չյուրացված անցյալը թաքնվում է մեր ենթագիտակցականի

գաղտնարաններում և այնտեղից իրեն զգացնել տալիս տարբեր ձևերով՝ մի դեպքում պատճառելով տառապանք, մի այլ դեպքում մեզ պահում հաճելի, բայց խաբուսիկ պատրանքների գերության մեջ: Հետազոտողները առանձնացնում են հիշողության երկու տեսակ՝ փաստական և հոգեբանական: Փաստականի պարագայում, օրինակ, մարդը հիշում է, ասենք, որ իրեն մեկը ինչ-որ պահի վիրավորել է, բայց դա այլևս ոչինչ չի նշանակում, ցավ չի պատճառում, իսկ հոգեբանականի դեպքում, երբ գերիշխող են հույզերը, մարդը, բացի այն, որ լավ հիշում է կատարվածը, ամբողջ հոգով տենչում է վրեժխնդիր լինել վիրավորանքի համար: Կա անցյալի ընկալման մեկ այլ տարբերակ ևս. մարդու ներկան աղքատիկ է, անգույն ու անհամ, հետևաբար նա հաճախ է վերադառնում անցյալի գունեղ դրվագներին: Սա լավ երևում է տարեց մարդկանց պարագայում: Դրա ականատեսն ենք լինում բոլոր պատերազմների վետերանների հետ շփվելիս, քանի որ նրանք հնարավոր է այնտեղ են թողել իրենց կյանքի ամենանշանակալից պահերը, իսկ նշանակալից հանգամանքի գոյությունը մարդու հիմնարար պահանջմունքներից է: Պատմում են, որ Վիետնամի պատերազմի ավարտից հետո մի ողջ սերունդ դարձել էր հոգեպես խեղված ու չէր կարողանում դուրս պրծնել պատերազմի հիշողությունների գերությունից: Նույնն է նաև չեչենական պատերազմից և, առհասարակ, բոլոր արյունոտ պատմություններից հետո: Հնուց ավանդված մի իմաստություն ասում է. «Կան երեք թակարդներ, որոնք գողանում են մարդու ուրախությունը և հանգստությունը: Մեկը ափսոսանքն է անցյալի համար, հաջորդը՝ տագնապը ապագայի հարցում և երրորդը՝ ներկայի հանդեպ անշնորհակալ լինելը…»: Այստեղ է, որ մենք մոտենում ենք ևս մեկ հարցի, այն է՝ մարդն ինչպե՞ս պետք է վերաբերվի իրեն ցավ պատճառող անցյալին: Սա նաև մեր ազգային կյանքի ամենաառանցքային հարցերից մեկն է: Կա երկու հիմնարար հասկացողություն՝ հիշողություն և գիտակցում: Եթե մենք անցյալից հեռանում ենք բացառապես հիշողությունների բեռով, դա բնավ չի նշանակում, որ մենք մի մեծ բան ենք արել, իսկ ավելի ստույգ՝ լիովին գիտակցել կամ հասկացել ենք մեզ հետ կատարվածը; Հիշելու և գիտակցելու միջև գոյություն ունեցող սահմանը շատ նուրբ է, թափանցիկ, և շատերը լավ չեն պատկերացնում սրանց տարբերությունը: Ուղղակի մտաբերենք՝ միայն հիշողությունների ահռելի բեռը ո՛չ մեզ՝ հայերիս, ո՛չ էլ ողջ մարդկությանը ոչինչ չի տվել: Օրինակ, երբ նայում ենք այսօրվա արյունոտ աշխարհին, մի՞թե կարող ենք ասել, թե աշխարհը կրկին թաղվեց պատերազմների մեջ, որովհետև կորցրել է հիշողությունը: Ո՛չ, մարդկության հիշողությունը տեղում է: Կամ՝ մենք կրկին դեմ առանք արյունարբու թուրքին, որովհետև չէինք հիշում, թե ինչ էր եղել մեզ հետ հարյուր տարի առաջ: Էն էլ ո՞նց էինք հիշում, բայց կրկին հայտնվեցինք գոյաբանական թակարդում: Ֆաշիզմի սոսկալի հետևանքները մարդկության աչքի առջև են, բայց կրկին սկսեցին կրակել հրանոթները: Հոլոքոստ տեսած հրեան մեկ-երկու ամսում տասը հազարից ավելի արաբ երեխա է բնաջնջել, ո՞րն ասենք…. Չենք կարող ասել, չէ՞, որ մարդկությունը չի հիշում, թե ինչեր են անցել իր գլխով: Ուրեմն խնդիրը հիշել-չհիշելը չէ, այլ գիտակցել կամ չգիտակցելն է: Հիշո՞ւմ եք՝ Հիսուսը խաչի վրայից ասաց. «Հայր, ներիր սրանց, քանզի չեն հասկանում, թե ի՞նչ են անում…»: Նա չասաց. «Հայր, ի՞նչ դաժան ու ստոր են ինձ խաչող մարդիկ»: Նա միայն ասաց. «Նրանք չեն հասկանում, չեն գիտակցում իրենց արարքները.: Այնպես որ, Հրանտ Մաթևոսյանի «...մարդ ու անասուն իրարից տարբերվում են հիշողությամբ. հիշողություն ունես, մարդ ես, այրվում ես, եթե չունես... հրեն հորթին երեկ են մորթել, իսկ կովը հանգիստ արածում է» տողերը, որոնք վերջերս, ասես, հիթ են դարձել շատերի բերանում, ոչինչ չեն ավելացնում խնդրի խորքային ընկալումներին: Եթե մարդը և ազգային հանրույթը անցյալից բաժանվում են միայն հիշողությունների բեռով՝ առանց գիտակցելու կատարվածը, ապա անխուսափելիորեն հայտնվելու են նույն փակուղում, քանզի ապագան անցյալի պրոյեկցիան է, ոչ ավելին: Ու պատահական չէ, որ այս հարցում թերըմբռնումը հանգեցնում է նորանոր մտավարժանքների: Դրածոն հրապարակ նետեց «Ապագա կա» կարգախոսը, և դա վստահորեն աշխատեց իր օգտին և պահեց նրան իշխանության ղեկին: Եթե հանրության ընկալումներն ավելի առողջ լինեին, այդ «Ապագա կա» զառանցանքը ոչ մի նշա-

նակություն չէր ունենա: Մարդիկ ուղիղ կնայեին ներկային, երկրի վիճակին և կհասկանային, թե ուր են գլորվում: Եվ առհասարակ, ապագան ընդլայնված ներկան է, սա հասկանալու համար մեծ խելք պետք չի, եթե իհարկե, մտքի կաղապարի գերության մեջ չես և ապագային չես վերագրում հեքիաթային գունավորումներ: Եթե այսօր հանրությունը մի սիրուն քար չի տաշում ու դնում իր երկրի տաճարին, ապա ի՞նչ հրաշքով վաղը կամ ապագայում ապարանք կունենա: Մտովին պատկերացնենք, թե ինչպես վարչապետի կարգավիճակով մարդն իր տհասներով հայտնվել է մի այլ իրականության մեջ, օրինակ՝ Գերմանիայում կամ Չինաստանում և «Ապագա կա» ասելով՝ փորձում է քարոզարշավ անել: Պարզ չէ՞, որ չինացիներն ու գերմանացիները նմաններին հոգեկան հիվանդ կանվանեն և կուղեկցեին հոգեբուժարան: Նրանք կասեին. «Դու ի՞նչ գիտես, թե ի՞նչ է ապագան, առհասարակ, ո՞վ գիտի, այն լիելո՞ւ է, չի լինելու, միակ իրականությունը, որ դու ճանաչում ես, ներկան է և այս ներկայի համար էլ կրիր քո բաժին պատասխանատվությունը»: Հանրային ընկալումների դեստրուկտիվիզմը մեզ, ասես, կաթվածահարում և թույլ է տալիս, որ ամբոխավար ստահակները իրենց զգան, ինչպես ձուկը՝ ջրում: Մի՞թե այս մտածողության պտուղը չէր «հրեշավոր նախկիններ» զառանցանքի քարոզչական ուժը: Սորոսականների անդրօվկիանոսյան դիսպետչերները մեզ, հաստատ, լավ էին ուսումնասիրել: Երկար տարիներ Գերմանիայում ապրած իմ ընկերներից մեկը մի օր պատմեց. «Ֆրանկֆուրտի համալսարանում գերմանացի մի լուրջ գիտնականի հպարտությամբ պատմում էի մեր՝ պետականորեն առաջին քրիստոնյա պետություն լինելու, դարավոր մշակույթ և ինքնատիպ քաղաքակրթություն ունենալու մասին: Լուռ լսեց, հետո, հոգնեց, ասես, օձիքն ազատելու համար ասաց. «Իսկ դուք «Մերսեդես» ունե՞ք,- և ավելացրեց,- ես եղել եմ ձեր երկրում ու զարմացած եմ մի բանի վրա՝ ինչպե՞ս կարող է այդքան սքանչելի խաչքար տաշած ազգն այդքան անփույթ լինել իր քաղաքական և հանրային կյանքը կազմակերպելու գործում...»: Այս պարզ դրվագը հիանալի կերպով արտացոլում է անցյալի, ներկայի և ապագայի հանդեպ մեր վերաբերմունքը: Մենք հաճախ ենք նաև լսում «Պատմությունը կրկնվում է» արտահայտությունը, սակայն չենք էլ մտածում, որ դա պատմության կրկնությունը չէ, այն չի կարող կրկնվել: Դիալեկտիկան ինքնաբերաբար բացառում է նման կրկնությունը: Այս խոսքերը ևս «մտքի կաղապարի» շարքից են: Պատմում են, որ մի անգամ Անգլիայի համար բարդ, ճգնաժամային իրադրության մեջ քաղաքական գործիչները հարցնում են Ուինսթոն Չերչիլին. «Փորձառու և հեռատես գործիչ ես, կասե՞ս՝ ինչ է լինելու»: Նա իրեն բնորոշ սարկազմով պատասխանում է. «Ուզո՞ւմ եք իմանալ՝



ինչ է լինելու, արագ հիշեք, թե ինչ է եղել, բայց նաև մի՛ մոռացեք, որ կյանքը երբեք նույն հարցը երկու անգամ չի տալիս»: Լավ, բայց այդ դեպքում որտեղի՞ց է այն տպավորությունը, թե պատմությունը կրկնվում է: Նույն Չերչիլն, օրինակ, ասում էր. «Չի կարելի բանակցել թշնամու հետ, եթե քո գլուխը վագրի բերանում է»: Հիմա ինքներս մեզ հարցնենք. «Եթե քո մտածողությունը և վարքագիծը նույնն են, և դու չես հասկացել, չես գիտակցել, որ չի կարելի գլուխը վագրի բերանում բանակցել, ընդ որում, նույն վագրի հետ, այդ դեպքում ո՞րն է պատմության մեղքը, ի՞նչ կապ ունի նա: Ո՞վ կարող է այսքան պարզ բանը բացատրել Հայաստանում իշխանության հավակնածներին: Ինչպե՞ս հասկացնես սրանց, որ պետք է նախ հայի մեջ ապրող վագրին արթնացնել, նոր միայն գնալ բանակցությունների: Եթե, իհարկե, քեզ չեն ուղարկել՝ ազգի հոգում ապրող վագրին թունավորելու և սպանելու: Կամ, ասենք, Արևմուտքը չհրաժարվելով իր մեծամտությունից՝ որոշեց հերթական անգամ խեղճացնել Ռուսաստանին և ահա արդեն կարծես դեմ է առել պատին: Կարելի է, իհարկե, զուգահեռներ անցկացնել ժամանակների ու հանգամանքների միջև, ինչու չէ, պատկերավոր ձևերով նմանեցնել անցյալն ու ներկան, բայց դա բոլորովին չի նշանակի, թե պատմությունը կրկնվեց: Երբ մարդը կամ ազգային հանրույթը նույնն է, նույնն են նրանց ընկալումները, ապա պատմության կրկնության պատրանքը անխուսափելիորեն լինելու է: Հայտնի բան է՝ պետականությունը այն առանցքն է, որի շուրջ ձևավորվում են այդ ազգերի պատմական գլխավոր անցքերը: Պատմաբանները կվկայեն, որ



առանց շարունակական և հաջորդական պետականության առանցքի՝ մեր պատմության ընկալումը ակամայից դառնում է մշուշոտ ու տեղ-տեղ միֆական: Պատահական չէ, որ մեր պատմագրությունը ևս դժվարամարս է, ահագին խճողված: Պատմական հիշողությունը հակված է ընկալելու առավելապես խոշոր և ճակատագրական դրվագները՝ Ավարայրի ճակատամարտ, գրերի ստեղծում, քրիստոնեության ընդունում, ցեղասպանություն, Սարդարապատ, Արցախի ազատագրում և այլն: Հավանաբար այդպես է նաև մյուս ազգերի մոտ: Ցավոք, մեր նախաքրիստոնեական ժառանգության մի հսկայական շերտ մնաց թաղված պատմության մշուշի մեջ: Այդուհանդերձ, հայ ժողովուրդը կարողացավ աննկարագրելի տոկունություն ցուցաբերել, գոյատևել առանց պետականության և արարեց դարեր շարունակ: Այս գնահատականը մեծամտության կամ սնափառության դրսևորում չէ, սա հայկական քաղաքակրթական աշխարհայացքից բխող երևույթ է: Հենց միայն, օրինակ, հայկական Սփյուռքի և Հայ Յեղափոխական Դաշնակցության ֆենոմենները վկայում են, որ հայի հոգեկերտվածքում կա մի անձուլելի, անտրոհելի բան, որը թույլ չի տալիս, որ մենք անհետանանք պատմության թատերաբեմից: Շատերն են փորձել, բայց այդպես էլ չեն կարողացել բացատրել այս ֆենոմենը: Այնուամենայնիվ, կա հայկական ուրույն քաղաքակրթություն և այդ քաղաքակրթությունը մարդկության մեծ մշակույթի անքակտելի մասն է, յուրատեսակ արմատներից մեկը, անգամ եթե հայության ներկայիս արդյունքները չափազանց համեստ են: Ցավալիորեն, այս իրողությունը գիտակցված չէ, և հենց այդ պատճառով էլ մեր ժողովուրդը անվերջ շփոթված դեսուդեն է նայում, պատասխաններ փնտրում իր էությունից դուրս: Կրկին շեշտենք՝ այլոց փորձը ընդամենը գիտելիք է, պիտանի կամ ոչ այնքան: Եվ միայն ազգ երևույթն է այն հենման կետը, քաղաքական ու հոգևոր մշակութային «պլատֆորմը», որին հենվելու դեպքում են հաջողելու մեր գործերը: Մի լուրջ քաղաքական վերլուծաբան ավելի քան ճշգրտորեն է ձևակերպել մեզ հուզող խնդիրը: Նա ասել է. «20-րդ դարի վերջը և 21-ի սկիզբը արմատապես փոխել են հասկացողությունները: Այլևս շատ էլ կարևոր չէ, թե ինչքան հին ժողովուրդ ես, ինչ լեզու ունես, պատմական ժառանգություն, ինչ կրոն ես դավանում, ինչպիսի հարուստ մշակույթի կրող ես, կարևորն արդեն այն է, թե որպես ազգ այսօր կարողանո՞ւմ ես ստեղծել ուժեղ, ճկուն և արդիական համակարգ, թե՞ ոչ….»: Եվ սա ճիշտ միտք է, որից էլ բխում է ներկայի մեջ ապրելու մեր միակ լավագույն կերպը: Անցյալի մեծերի փորձը, արած գործն ու խորունկ մտքերը կարող են տարբեր կերպ մեկնաբանվել: Դրանք կարող են այսօրվա համար լինել պիտանի կամ ոչ այնքան, քանի որ լիովին ընկալելի են զուտ իրենց ժամանակի մեջ: Անցյալից մեզ են հասնում մեծերի լուսե ճառագայթները: Նրանք իրենց ոգեղենիկ էներգիան են ուղարկել մեր օրեր, իրենց մտքի լույսն են փոխանցել, սահմանել մարդկային ու բարոյական բարձրագույն նշաձողեր: Եվ վերջապես, եթե օրինակ, մեր քաղաքական պատմության մեջ եղել են Արամ Մանուկյանի պես հզոր, պարկեշտ, լուսեղեն կերպարներ, ապա ի՞նչ խղճով և իրավունքով ենք հանդուրժում այսօր ողորմելի մարդկանց ու իրողությունները: Տեր կանգնենք նախ մեր ներկային, լավ ապագան ծնվելու է ներկայից: ■

Յոբելեաններէն անդին

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Այս օրերուն իրարու կը յաջորդեն յոբելեանները, յոբելենական հանդիսութիւնները, այդ առիթներով՝ շքադրումները: Կը ստեղծուի որոշ տօնական մթնոլորտ մը, որ լրջօրէն կը հակադրուի մեր ազգային մեծ կորուստին՝ Արցախի բռնագրաւման ու հայաթափման, ինչպէս նաեւ շարունակական անձնատուութիւններու ստեղծած վիհատութեան եւ յուսահատութեան:

Եւ լաւ է, որ այդպէս է:

Վերջ պէտք է տրուի այդ վիհատութեան եւ յուսահատութեան:

Պիտի մնանք պահանջատէր, պիտի չհրաժարինք մեր հայապատկան հողերէն՝ անոնք ըլլան Արցախի մէջ, թէ այլուր, եւ պիտի շարունակենք աննկուն պայքարը մեր իրաւունքներու վերահաստատման համար:

Սակայն կեանքը պիտի շարունակուի, հայ կեանքը, որուն անբաժան երեւոյթներէն մէկն ալ յոբելեաններն են:

Բայց հարց տանք մենք մեզի, թէ ի՞նչ կը նշանակեն անոնք:

Ինչո՞ւ կը յիշատակուին կարեւոր թուականներ, ինչո՞ւ կը յարգուին մեր կեանքին մէջ կարեւոր դերակատարութիւն ունեցած կամ տակաւին ունեցող ազգայիններ: Ի՞նչ է նպատակը յոբելեաններ նշելուն:

Առաջին ու գլխաւոր նպատակը անմոռացութիւնն է:

Պահել յիշողութիւնը այդ թուականներու կարեւորութեան, անոնց ձգած ժառանգութեան, անոնցմէ մեզի փոխանցուած պատգամին: Այս իմաստով պէտք է տեսնել մեր մնայուն յիշատակումը Գրերու գիւտի, Թարգմանչացի, Փետրուար 18-ի, Արցախեան շարժումի, Վարդանանցի, Ապրիլ 24-ի, Մայիս 28-ի, ՀՅԴ օրուան եւ այլ պատմական օրերու: Եւ անոնց յոբելենական աւելի հանգամանալից տօնակատարումները: Հաւանաբար դեռ աւելի՞ն կայ ընելիք՝ այդ շարքին աւելցնելով, օրինակ, Նուարսակի դաշնագիրը (որպէս մարդկային իրաւանց հնադարեան վաւերաթուղթ, թերեւս առաջինը՝ համաշխարհային առումով), միջնադարեան մեր համալսարանները (որոնք գոյութիւն են առած Հայաստանի մէջ շատ երկիրներէ առաջ), ողիմպիական խաղերու մեր յաղթանակները (որոնք գրեթէ մոռցուած են) եւ այլն:

Նոյնը՝ անցեալի մեր մեծ դէմքերու պարագային, որոնց խօսքը մեզի դաստիարակիչ կը մնայ եւ ուղեցոյց կը հանդիսանայ իրենց ապրած ժամանակահատուածէն շատ աւելի անդին: Այս ուղղութեամբ ալ, կասկած չկայ, դեռ շատ ընելիք ունինք եւ շատ աւելի մեծ թիւով դէմքերու համար՝ հին ու նոր ժամանակներէ, որովհետեւ պէտք է միշտ յիշենք մեր այդ մեծերը եւ ունկնդիր մնանք անոնց ըսածին ու ճանչնանք անոնց նուաճումները:

Երկրորդ, բայց ոչ նուազ կարեւոր նպատակն է յարգանքը մասնաւորաբար այսօր տակաւին գործող մեր կազմակերպութիւններուն եւ կենդանի մտաւորականներուն, գործիչներուն, արուեստագէտներուն եւ այլ ականաւոր դէմքերու հանդէպ: Յիշել անոնց վաստակը, գնահատել զայն, ծանօթացնել անգիտաց, վեր առնել այդ վաստակին կարեւորութիւնը՝ յատկապէս

օրինակ ծառայելու համար գալիք սերունդներուն: Այս մարզին մէջ ալ կրնանք ու անհրաժեշտ է աւելի՛ն ընել, մանաւանդ չսպասել, որ մեր արժանաւորները հասնին իրենց կեանքի աւարտին, անկարութեան վիճակի՝ ըստ արժանւոյն մեծարուելու համար:

Այս բոլորը, սակայն, իմաստ ունենալէ կը դադրի, եթէ չնայինք յոբելեաններէն անդին:

Եթէ ինքնաշարժ վարելու ատեն յետահայեաց հայելիին մէջ կը նայինք, այդ կ՚ընենք անվտանգ յառաջանալու համար: Որքան ալ հակասական թուի այս,- ետ նայիլ՝ առջեւ երթալու համար,- նոյնը պիտի ընենք մեր յիշատակումներուն պարագային:

Երբ կազմակերպութիւններու տարեդարձերը կամ յոբելեանները կը տօնենք, ոչ միայն պիտի գիտնանք նշել իրագործումները, այլեւ կատարել հաշուետուութիւն՝ վերյիշելով թերացումներն ու մատուցելով գալիքի մեր ակնկալութիւնները: Որոնել սրբագրութեան, ինքնասրբագրութեան ուղիները, ներկայացնել մեր ծրագրերը, անո՛նց իրագործման անհրաժեշտ պայմաններն ու կարիքները: Ոչ միայն ի՛նչը, այլեւ ինչպէ՛սը:

Ուրեմն երրորդ նպատակն ալ կազմակերպութիւններու ինքնանորոգումն է եւ դրօշի փոխանցումն է նոր սերունդին:

Մեր յոբելենական նախաձեռնութիւնները երբեմն կը քննադատուին որպէս անօգուտ միջոցառումներ: Մանաւանդ, երբ այնքան մարդուժ եւ նիւթուժ կը ներդնենք զանոնք իրագործելու համար: Այդ ներդրումները կ՚արդարանան իրապէս այն պարագային միայն, եթէ այդ նախաձեռնութիւնները ծառայեն ոչ միայն ետեւ նայելու, այլեւ յառաջ երթալու:

Ծառայեն՝ վերահաստատելու մեր յանձնառութիւնը:

Վերահաստատելու հայ կեանքը բարելաւելու մեր կամքը:

Ամրապնդելու հայօրէն ապրելու մեր ոգին: ■

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետը որոշում է.

1. Դատապարտելով 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը, որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, ապրիլի 24-ը հայտարարել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
2. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահություն առաջարկություն ներկայացնել հայերի 1915 թվականի ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին:
3. Հանձնարարել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին Հայաստանի արհմիությունների խորհրդի հետ համատեղ քննության առնել և լուծել ապրիլի 24-ը ոչ աշխատանքային օր հայտարարելու հարցը, հանգստյան օրերից մեկը տեղափոխելով այդ օրը:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Հ. Ոսկանյան

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ն. Սրբեփանյան

22 նոյեմբերի 1988 թվականի,
քաղ.Երևան
N 1401-XI

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
Ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

«Հոդված 136. Ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը, դրանք քարոզելը կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելը.

1. Ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը, դրանք քարոզելը կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելը, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկ ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով՝ պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝
   1) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ
   2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

ԴՐՕՇԱԿ